

# ԱՐԽՆ

ԱՄԱՍԳԻՐ

ԿՐՕՆԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԲԱՆԱԽԻՐԱԿԱՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՈՐԽՈՐԴԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱՆԱԳԻՐԻ ՀԱՅ ԳԱՏԵՐԱՐԻՈՒԹՅԱՆ



451 - ՅԱՐԵՆԻՐԵԱԿԱՆ ՏՈՐԻ - 1951

ԺԵ. ԿԱՐԿԻՐԵԶԻ ՈՐՐՈՅ ԿԱՐԿԻՐԱԿԱՆ ՉՈՐԱԿԱՐԱԿԱՆ ՈՐՐՈՅ  
ՀԱԶԱՐ ԵՐԵՍՈՒՆ ԵՒ ՎԵՑ ՎԿԱՅԻՑՆ

ՆՈՐ ՇՐՋԱՆ - ԻԵ. ՏՈՐԻ

1951

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

	Երես
<b>ԽՄԲԱԳՐԱԿԱՆ</b>	
— Ամանոր .	1
— Յանուսի Մեհեանք .	Թ. Ե. Գ. 5
<b>ԿՐՕՆԱԿԱՆ</b>	
— Տեռուական Աղօթք (13) .	ԳՐ. ՍՐԿ. Հ. ԴԱԼՈՒՍՏԵԱՆ 7
— Սուրբ Ստեփանոս .	ՊԱՐԳԵՒ ՎՐԻ. ՎՐԹԱՆԷՍԵԱՆ 11
— Անմահութեան կարեւորութիւնը .	X 13
<b>ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ</b>	
— Ասղերէն պայծառ .	ԵՂԻՎԱՐԳ 17
— Հնչեակ վիղանցի համար .	(Թրգւմ.) Ն. Ծ. 18
— Աղբասներուն մահը .	» ՎԱՀԱՆ ԹԵՔԷՆԵԱՆ 19
— Ճաքած զանգակը .	» » » 20
<b>ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ</b>	
— Ս. Գրիգոր Լուսաւորիչ .	Ն. ՎՐԳ. ԾՈՎԱԿԱՆ 21
— Խորենացի, Եղիշեկ եւ Հ. Ներսէս Ակիմեան .	ՀՐԱՆԴ Գ. ԱՐՄԷՆ 24
<b>ՊԱՏՄԱԿԱՆ</b>	
— Կիլիկեան ամրոցներ — Հռոմկլայի 'իդեակ .	ԱՐՏԱԽԱԶԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ 29
<b>ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ</b>	
— Հայերը Թաթարացոյն Արեւելի մէջ .	ԱՍՈՂԻԿ ՎՐԳ. 33
<b>ԼԵԶՈՒԱԳԻՏԱԿԱՆ</b>	
— Հնդեւրոպական նախաւորում .	ՊՐՈՖ. Հ. ԱՃԱՌԵԱՆ 37
Ս. Տեղեաց Բարձր Վերահսկողի Արքայական նշանակում .	39
Ս. ՅԱԿՈՒԻ ՆԵՐՍԷՆ	
— Հեռագիր Ս. Էջմիածնէն .	42
— Ամսօրեայ լուրեր .	42

ՍԻՈՆԻ Տարեկան բաժնեկիցին է՝ բոլոր երկիրներու համար՝ Անգլ. Շիլին 10

## ՈՒՀԱՆԴՐՈՒԹԻՒՆ ՄԵՐ ՀԱՍՅԷԻՆ

Redaction of the Armenian Monthly SION

Armenian Patriarchate,

P. O. B. 4001

Old City - Jerusalem

Via Amman (Jordan)

"SION," an Armenian Monthly of Religion, Literature and Philology

Printed in

JERUSALEM — PALESTINE



# —≡ Ս Ի Ո Ն ≡—

Ի Ե. ՏՄ.Ր Ի — Ն Ո Ր Շ Ր Զ Ս Ն

1951

≡ ՅՈՒՆՈՒԱՐ - ՓԵՏՐՈՒԱՐ ≡

ԹԻԻ 1-2

## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

### Ա.ՄԱՆՈՐ

Ինչ զգացումով ալ դիմաւորենք Նոր Տարին ու նայինք անցեալին, մէկին յոյսը և միւսին կշիռն ու բերեղացումը մեզ կը լեցնեն անձկութեամբ և յուզումով: Յիշող մտքին համար անմոռանալի է անցեալը. իսկ դէպի նորը ձգտող զիտակցութեան համար, շինիչ է ապագան:

«Որդեակ յիշեա» կը թելադրէ Աւետարանը, վերադարձնելով մեր միտքը անցեալին: Մենք քիչ-անգամ գուցէ կը մտածենք յիշողութեան սքանչելի երևոյթի մասին, առանց յիշողութեան սակայն, մենք ոչինչ ենք: Ապագան անստոյգ և մեզի հազիւ պատկանող իրողութիւնն է դեռ, միակ ստոյգը մահն է անոր մէջ: Ներկան կը սահի ու մենք հազիւ թէ ժամանակ կրնանք ունենալ մտածելու անոր: Մեր անցեալն է առաւելաբար որ մեզի կուտայ բարոյական և իմացական արժէք, անձնականութիւն և ինքնութիւն:

Մեծ ժողովուրդներու պատմական կեանքը պայմանաւորուած է իրենց մեծ ու արդիւնաւոր անցեալով: Ի՞նչ է պատմութիւնը, անսահմանութիւնը մեռնող ժամանակին, թէ ոչ ազգերու անցեալ սխրագործութեանց շարանը: Ի՞նչ է Ս. Գիրքը, եթէ ոչ մարդկային սերունդներու հոգիի և մտքի վսեմ ներշնչումներու ապրումներու շարքը: Ժամանակը անբովանդակ զաղափար մը, պատրոգական իմացք մը պիտի ըլլար, առանց մտքի և հոգիի ապրումին: Իրերը և անոնց շարժումը չէ որ կը զոյացնեն ժամանակը, այլ մեզմէ իւրաքանչիւրին և մարդկութեան ապրած թանձրացեալ ու լեցուն տևողութիւնը:

Միւս կողմէն սակայն անողոր է ժամանակը, կ'առնէ մեր ուժը, մեր թարմութիւնը, մեր զեղեցկութիւնը: Մենք մահուան համար է որ կը հասունանանք ամէն օր, ինչպէս այնքան արտօրէն կ'ըսէ բանաստեղծը: Տարիներու համաբարդուիլը իրարու վրայ մեր գոյութեան մէջ՝ ոչինչ կ'արժէ, եթէ կեանքը ինքն իր մէջ և ներքին աճումով չի հարստանար:

Այս տեսակէտով Ամանորի և Միունդի մերձակայութիւնը իրարու՝ կը դառնայ նշանակալից. Նոր Տարիին մտածումը ոչինչ ունի իր մէջ սրտապնդիչ

4734

163-98

19362ահ



ու զեղեցիկ, եթէ նոր և ներքին ծնունդի մը խոկումով չենք կրնար ոգևորուիլ անոր առջև: Պատմական զէպքի մը յիշատակութիւնը լինելէ աւելի՝ քրիստոնէին համար ան պէտք է ըլլայ հոգեկան նորոգումի մը հանդիսաւորումը: Քրիստոս, որ անգամ մը միայն ծնաւ պատմութեան մէջ մարդկային մարմնով, ամէն օր, ու իր մարդեղութեան յիշատակութեան օրը մանաւանդ, պէտք է հոգով ծնի մարդուն մէջ: Այս է զաղտնիքը ներքին վերածնութեան, «վերստին ծնանել» ու խորհուրդին, որ քրիստոնէական կրօնին ամենէն զեղեցիկ պարգեւն է մարդկային բարոյականին և յառաջդիմութեան:

Տարին՝ ժամանակային թուարկութեան պայմանադրական միութիւն մըն է լոկ, առ առաւելն տոմարական արժէքով. այն ատեն միայն ան կը ներկայացնէ նաև բարոյական արժէք մը, երբ կ'ըլլայ արձանադրութիւնը նոր արժէքներու՝ մարդուն մէջ զոյացած նորստաց առաւելութիւններով: Ինչպէս արմաւենիին և նոյն ընտանիքին պատկանող ծառերուն ներքին աճումը իրենց պատեանին վրայ ամէն տարի կը ցուցանշուի կեղևային շերտերու նոր օղակի մը յաւելումովը, նոյնպէս ամէն նոր տարիի բարդուիլը մեր օրերու վրայ՝ պէտք է նշանակէ նոր բարգաւաճում մեր ներքին կեանքին մէջ:

Քրիստոնէական կրօնքն է, որ հոգիին կուտայ կազդուրող և զեղեցկացնող այն զօրութիւնը, որուն պէտք ունի ան՝ ոչ միայն մնալու համար անաղարտ, այլ նաև հետզհետէ աւելի կենդանի ոգևորութեամբ վերանալու համար զէպի կատարելագործում: Առանց նոր կեանքի՝ արժէք չունի նոր Տարին. ատոր համար է որ այնքան իմաստալից է Ամանորի և Ծնունդի մերձաւորութիւնը իրարու:

Բայց ասիկա դոյզն մէկ հետեւողութիւնն է այն ճշմարտութեան, զոր ամէնքս պարտինք խոստովանիլ, ընդունելով թէ Քրիստոնէութիւնն է որ ինչպէս կըրցաւ բացատրել տիեզերական զոյութեան խորհուրդը, կարող եղաւ նոյնպէս մարդկային կեանքը դնել իր բուն արժէքին մէջ: Քրիստոսի ծնունդը, այսպէս, այսօր կրնայ իրաւապէս նկատուիլ տարիին սկզբնաւորութիւնը, որովհետև իրապէս եղած է սկզբնաւորութիւնը թուականի մը. որ բացուած է անգամ մը, շարունակուելու համար ընդմիշտ. անիկա ոչ թէ հասարակ տարեղութիւն մը, այլ աննախընթաց և անփակ դարազրուի մըն է այլևս մարդուն բարոյական, իմացական, մշակութային և քաղաքակրթական, այսինքն հոգեկան կեանքին պատմութեան համար:

Քրիստոնէական իմացումին մէջ ամէն Ծնունդին նորէն կը ծնի Յիսուսը: Մեծ է խորհուրդը այս իմացումին: Այս կը նշանակէ թէ Յաւերժը անկենդան իրողութիւն մը չէ Տիեզերքին վերև, այլ յաւիտենական ժայթք ու բխումը, ապրումը Ուժի, Լոյսի և Սիրոյ: Որ մեր տարիներու ժամանակին մէջ նորէն և միշտ կը միջամտէ, մեր խաւարին ու ցուրտին մէջ ծաթող Յոյսի աստղը վերբերելու: Որ նորէն ու միշտ մեզի կը բերէ իր աւետիսը թէ՛ մարդուն տրուած է իր կեանքը, զոյութիւնը ալակերպելու, պայծառակերպելու աստուածայինին մէջ. աշխարհի ժամանակէն մասնակցելու յաւերժին, աշխարհաբնակութենէն բարձրանալու ինքնաքաղաքացիութեան իրաւունքին: Ահա թէ ինչու ամէն Ծնունդին նորէն կը մանկանայ Աստուածորդին:





Նոյնուհըր առհաւատչեան է նոյնպէս խաղաղութեան պատգամին, որ քսան դար առաջ և անկէ ի վեր կը տրուի տառապող ու խաղաղութեան ծառա մարդկութեան, «Յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»։ Այս օրերուն, աւելի քան երբեք, մարդերու հոգին պէտք ունի այդ պատգամի իրացման անոր զեղեցիկ ու պայծառ Յոյսին։ Նոր մղձաւանջներ կը թուին կախուիլ քաղաքակիրթ աշխարհի հորիզոնին։ Գալիք աշխարհին զիծերը կը մնան ուրուային և անորոշ։ Թէ ինչ հիմերու վրայ պիտի կառուցուի վաղուան կեանքը, այժմէն դիւրին չէ ըսել։ սակայն վստահ ենք թէ անցնող դոյզ համաշխարհային պատերազմներու արիւնոտ փորձառութիւնը աշխարհը կառավարող մարդերուն կրկնել պիտի չտայ այն սխալը որ կուգայ սարսելու քառորդ դար անգամ մը ազգերու ընկերային, քաղաքական և կրօնական հիմնարկութիւնները։

Թէև խաղաղութիւնը կ'ուշանայ, սակայն անվերապատանելի չի թուիր, հաշտութեան և լաւագոյն խաղաղութեան մը ճիգերը աւելի ուժգնութեամբ առաջ կը տարուին, Եւրոպայի, Միջին Արեւելքի և Ծայրագոյն Արեւելքի մէջ, տակաւ բարեխաւելով ծանր մղձաւանջները և պարզելու տաղնապ առթող թընջուկները։

Մեր ճակատագիրը կ'ուզէ որ Հայ սփիւռքը այս տաղնապներու ծիրին մէջը տակաւին շարունակէ մնալ, բաժնելով անոր կարելի անդրադարձումները։ Սիրտերու քաղցրութիւն, միտքերու լայնութիւն, կիրքերու զգաստութիւն, մեր ազգային կեանքէն ներս, շատ բան պիտի զեղջէին մեր զաղութներու ներքին կեանքի անհաշտութիւններէն։ Պարտինք ունենալ մանաւանդ այս օրերուն, այն կարելի տրամադրութիւնը, մարդկօրէն և հայօրէն քննելու և լուծելու մեր մտքին և խղճին տույն գրուած ազգային և ժամանակին հարցերը։ Պէտք չէ առիթ տանք մեր ցեղային հաւաքական կորովը քայքայող արարքներու և անոր խղճմտանքը պղտորող առիթներու։



Անցնող տարին Պաղեստինահայութեան համար ընդհանրապէս և Ս. Աթոռոյ համար մասնաւորաբար ունեցաւ իր ծանր տարողութիւնը։ Հարկադրիչ պարագաներ թոյլատու չեղան վերակազմելու մեր տնտեսութիւնը, սակայն այս պարագան չէ յուսահատեցուցած զմեզ, ըրինք մեր կարելին, Միաբանութիւն և Ժողովուրդ միասնաբար, ու կը շարունակենք ընել, զիմազրաւելու համար այն բոլոր դժուարութիւնները՝ որոնք իրարու յաջորդեցին և կը շարունակեն մնալ իրենց բովանդակ խտութեամբը։

Չունինք խոստումներ, ինչ որ ալ լինի քաղաքական աշխարհի վիճակը ընդհանրապէս և Պաղեստինի կացութիւնը մասնաւորաբար, Նոր Տարին նորոգուող կեանքի խորհուրդն է՝ որ կը բերէ մեզի, և քաղցր ու մտերիմ բան մը կայ այս մտածումին մէջ, եթէ նոյնիսկ անիկա չբխի բախտորոշ երևոյթներու դասաւորումէն։

Փառք նախախնամութեան հակառակ մեզի պարտադրուած դժնդակ պայմաններուն և մեր հոգին կըծող ցաւերուն, հազած զրահը նորէն մեր պապե-



րու հաւատքին վեր առած մեր արցունքոտ աչքերը Բեթղեհէմի նորէն ծագող աստղին և անոր լոյսին տակ վերստին այս գիշեր ծնող խաղաղութեան և սիրոյ իշխանին, կ'աղերսենք միաբերան որ «փարատին մէջն ու մառախուղը, չքանան չարիքն ու յուսահատութիւնը» մեր հոգիներէն և աշխարհէն, որպէսզի իր սէրը ըլլայ օրէնքը բոլոր սրտերուն, իր խաղաղութիւնը պատգամ բոլոր հոգիներուն և իր կամքը երջանկութիւն մարգերուն:

✱

✱ ✱

Միակ սրտապնդիչ երևոյթը զոր ունեցանք անցնող և յառաջիկայ տարուան համար, շատ մը տրտմութիւններու և դժուարութիւններու կարգին, ատիկա բարեսէր և ազնուամիտ ամերիկահայութեան և ազգապարծան Հ. Բ. Բ. Միութեան փոյթն ու խնամքն է երուսաղէմի Ս. Աթոռին և վանքաբնակ ժողովուրդին նկատմամբ:

Ծուրջ տարի մըն է որ Ս. Աթոռոյ նուիրակը, Հոգ. Տ. Սերովբէ Վրդ. Մանուկեան, Հիւսիսային Ամերիկայի թեմերուն մէջ հանգանակութեան զրկուած է յօգուտ Ս. Աթոռոյ և վանքաբնակ մերազն ժողովուրդին: Խիստ զոհացուցիչ և երախտագիտութեան արժանի տեղեկութիւններ ունինք հանգանակութեան արդիւնքին համար: Մեր խորին շնորհակալութիւնը նախ Ամերիկայի թեմին առաջնորդ Գեր. Տ. Տիրան Եպս. Ներսիսեանին, Ս. Աթոռոյ հարազատին, իր աթոռանուէր և անխոնջ ծառայութիւններուն համար: Մեր սրտազին շնորհակալութիւնները նոյնպէս Ամերիկայի բոլոր թեմերու հանգանակիչ մարմիններուն և բարեսէր ու ազնուամիտ հարազատներուն, որոնք զիտցան հայու վայել զգացումներով մէկէ աւելի անգամներ զիմաւորել մեր կարիքը: Տէրը վարձահատոյց թող ըլլայ անոնց բոլորին:

Անխառն երախտագիտութիւն մանաւանդ Հ. Բ. Բ. Միութեան լիարուս և իշխանական նոր նուիրատուութեան համար: Ս. Աթոռոյ Գեր. Տեղապահ Հօր խնդրանքին վրայ, Հ. Բ. Բ. Միութիւնը այս տարուան համար 40.000 տոլարի նպաստի նոր յատկացումը ըրաւ Ս. Աթոռոյ. որուն 30.000ը միմիայն ժառանգաւորաց վարժարանին և Ս. Աթոռոյ հովանիին և հոգածութեան առարկայ եղող Ս. Թարգմանչաց ազգային վարժարանին ի նպաստ է, իսկ մնացեալ 10.000 տոլարը պիտի յատկացուի վանքաբնակ աղէտեալներու խնամատարական զործին: Այս կերպով ազգապարծան այս Միութիւնը Պաղեստինի մերազն ժողովուրդի տնտեսական դժնդակ կացութիւնը ամօքելու և դարմանելու համար ըրած կ'ըլլայ 80.000 տոլարի առատաձեռն նուիրատուութիւն մը:

Այս առիթով, անգամ մը ևս, Ս. Աթոռոյ զինուորեալ Միաբանութիւնը յանուն մերազն ժողովուրդին իր ամենաջերմ երախտագիտութիւնը կը յայտնէ Հ. Բ. Բ. Միութեան բարեբարներուն և բարիքը յանձանցողներուն: Թող հազար ապրի ազգապարծան մեր այս Միութիւնը, որպէսզի որքան ատեն որ տառապանք և տառապողներ գտնուին, վայելեն իր սէրն ու խնամքը, և մեզի հետ յաւերժական օրհներգուն ըլլան իր անունին, զայն ստեղծողներու անմոռաց յիշատակին, և Միութիւնը միշտ կենսունակ պահողներու կենսիքին:



## ՅԱՆՈՍԻ ՄԵՅԵԱՆԸ

(ԿԱՂԱՆԴԻ ԱՌԹԻԻ)

Երբ պատերազմը կը դադրէր Հռովմի Հասարակապետութեան մէջ, կը զոցէին խաղաղութեան չաստուածին՝ Յանոսի՝ մեհեանին դուռները:

Հազար տարուան մէջ հազիւ ինը անգամ սակայն պատահեցաւ ատիկա. ա՛յնքան խորունկ և ջերմ էր պաշտամունքը զոր մարդիկ ունէին Մարսի, պատերազմի չաստուածին նկատմամբ:

Թո՛ղ չըսեն թէ «ժամանակը շատ բան պակսեցուցած է նախկին բարբերու անազորոյն սաստկութենէն. այնպէս որ հիմակ, ի հակառակէն, տասը դարերու ընթացքին, հազիւ ինը անգամ կը բացուին խաղաղութեան մեհեանին դուռները»:

Իրականութիւնը կրնայ այդ պատրանքը հազնիլ երբեմն. պատմութիւնը կրնայ ամէն օր փոշի ցանել մարդոց նայուածքին առջև. իրողութիւնը այն է սակայն որ պատերազմին կիրքը օրէ օր աւելի ամեհի կը դառնայ կեանքին մէջ, վասնզի այն միւսը, Արէսի կուռքը, իր արիւնոտ դահլիճէն դրած է մարդոց հոգիին մէջ նոյնիսկ ու աշխարհի ճակատագիրը վարելու կանչուածներուն մէջ շատեր կան, որոնց սիրտերը մէյմէկ մեհեաններ են պատերազմի չաստուածին:

Լատին պանթէոնին այդ երկու աստուածութիւնները, Յանոս և Մարս, իրենց անունները տուած էին տարիին ամիսներէն երկուքին, Յունուար և Մարս:

Կ'ըսէ աւանդութիւնը — եթէ սակայն առասպել մը չէ ան — թէ երկար ատեն վէճի նիւթ եղաւ սա հարցը թէ այդ երկու ամիսներէն ո՞ր մէկով պէտք է սկսէր տարին. այսինքն խաղաղութեան՝ սկզբունքը պիտի շարժէր կեանքին խորհուրդը թէ պատերազմինը:

Արդիւնքը ծանօթ է. Մարսը, կռիւին զոգացումը ոգեկոչող ամիսը, որով կը սկսէր տարին՝ հին դարերու տումարական դրութեան մէջ, վերջոտնուեցաւ. ու Յունուարը, որ խաղաղութեան նուիրուած ամիսն էր, խլեց պարագլուխի մականը Զոդիակոսի խորհրդատախտակին վրայ:

Բայց այս ամէնը — խաղ ու խաբկանք բոլորովին — կատարուեցաւ՝ պիտի ըսէի՝ դիցաբանական բեմի մը վրայ, եթէ փոփոխութիւնը եղած չըլլար քրիստոնէական թուականէն ասդին:

Ահարկու իրականութեան առջև շուարեցաւ Աւետարանի բարոյականն ալ, և հրեշտակային օրհներգը, «Յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն», մնաց բարձրութեանց մէջ օրօրուող եթերային աւաչ մը, որ չկրցաւ իջնել աշխարհի վրայ...

Տարին ահա կը սկսի միշտ Յունուարով, այսինքնյ ոյսով ու մաղթանքներով. բայց վերահաս Մարսը չուշանար իր լէզէոններով:

Այս է իրականութիւնը. խաղաղութեան իդէբու և ռազմաշունչ կիրքի խառնուրդ մըն է կեանքը, և ատոր համար նոյնիսկ թերեւ զեղեցիկ և արժէքաւոր:



Գեղեցիկ՝ որովհետև, ուրիշ անկիւնէ մը դիտուած ատեն, բարին ու չարին հակամարտութեան հանդէսն է անիկա, ուր ազատութիւնը իր ուժը կը փորձէ ամէն քայլափոխին իր առջև ցցուող արգելքներու դէմ. ու արժէքաւոր՝ վասնզի չկայ աւելի երջանիկ զգացում մը քան այն զոր կ'ունենայ սիրտը, ճիշդով՝ նոյնիսկ կեանքը արժող դժուարութիւններով առաւելութիւն մը ձեռք բերուած միջոցին:

Այս ըմբռնումին առջեւ է որ կ'աղուորնայ կռիւին զաղափարը, առանց աղարտելու խաղաղութեան սրբութիւնը:

Բայց, ասոր համար, կարևոր է որ մարդիկ կարենան բոլորովին հոգեկան ոլորտի մը մէջ փոխադրել զայն, բանական կամ բարոյական պայքարի մը վերածելով պատերազմին կիրքը:

Պատերազմը, արեան ծարաւով և ուրիշին դէմ մղուած ատեն՝ միակ խաղն է, զոր, վերջացած պահուն, երկու կողմերն ալ կորսնցուցած կ'ըլլան արդէն. բայց երբ ժողովուրդ մը կամ անհատ մը ինք իր մէջ և զաղափարական զեւոնի վրայ կը կատարէ զայն, իմացական և բարոյական կորովի այն ազնուական կիրառութիւնն է, որուն հետեանքը փրկարար է անվրէպ:

Խաղաղութիւնը մտածումին խորութիւնն է այն ատեն, ու կռիւը՝ ողբուորուած ջանքը:

Երբ հոգին միանգամայն կրնայ ունենալ կամ իր մէջը առաջ բերել այդ երկու վիճակները, ալ իրենն է ամէն ասպարէզ՝ որ դէպի առաջ և դէպի վեր կը բացուի:

Ազգերը հզօր և անհատները մեծ են, երբ իրենց ներքին կեանքը լի է յառաջդիմութեան և բարձրացումի այդպիսի ձգտումներով, երբ նուիրական խաղաղութեան և մաքուր կռիւի, Առաքեալին լեզուով՝ «Բարեոք պատերազմ»ի ծրագիրն է որ կը պատրաստուի հոն ամէն վայրկեան:

Անարին պատերազմը... այսինքն կենդանի խաղաղութիւնը...

Յամբ բայց ամուր զնացքով մը մարդկութիւնը իրօք դէպի հոգ կը տանին արդեօք դժուարին՝ ցից ու դերբուկ այն ճամբաները, զորս կրօնք, փիլիսոփայութիւն, դաստիարակութիւն և ընկերվարութիւն կը կոչենք:

Ո՛չ ոք զիտէ.

Բայց ինչ որ ամէնքս ալ քաջ գիտենք՝ սա է թէ անսովոր համեմատութեամբ հետզհետէ կ'աճի թիւը անոնց, որոնց մէջ կ'ապրի «համերաշխութեամբ և արդարութեամբ լի թաղաւորութեան մը երազը»:

Դիցաբանութեան օրինակը փոխ առնելով, յորմէհետէ տարին Յունուարով կը սկսի, միշտ կը բազմանայ Յանուսի փաղուած մեհեանին երկրպագուններուն բանակը:

Այո՛, ժամանակին նշանն է այս. ու աննշան չէ սփոփանքը զոր անիկա կուտայ մեր սիրտերուն:

Թ. Ե. Գ.



## ԿՐՕՆԱԿԱՆ

## ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՕԹՔԸ

Դանք մեր մտադրութեան երկրորդ մասին, որ էր այս հայցուածին իւրաքանչիւր բառերուն իմաստներն ու տարբեր նշանակութիւնները պարզել և ճշգրտել:

(1). — Հայցուածին առարկան է Հաց. այս բառը հոս կը կենայ կեանքի բոլոր պէտքերուն համար: Յակոբ նահապետ երբ կը կանչէ իր որդիները որ վերջին օրերը անոնց գլուխը գալիքները պատմէ անոնց, Ասերի համար կ'ըսէ. — Ասերայ պարարտ հաց իւր, և ինքն տացէ կերակուր իշխանաց (Ծննդ. ԽԹ. 20): Հոս ակնարկուած Ասերին «հաց»ը, ուրիշ բան չէ, եթէ ոչ անոր կեանքի բոլոր պէտքերը: Հետեաբար, հացը կը նշանակէ մեր մարմնական կեանքին շարունակման համար պէտք եղած բոլոր միջոցները. — սնունդ, հագուստ, բնակարան: Բայց այսչափը միայն առերեւոյթս նշանակութիւն մը պիտի ըլլար, եթէ հայցուածին հաց բառը այս առումով միայն հասկնալինք:

Հացը իր ընդարձակագոյն եւ աւելի բարձր նշանակութեամբ սնունդ կը նշանակէ, և մենք սնունդ ըսելով պէտք է հասկնանք մեր մարմնաւոր սնունդը միայն. որովհետեւ, մեր մարմնաւոր կեանքէն վեր, ունինք նաեւ հոգեկան կեանք մը, որ ճիշդ մեր մարմնաւոր կեանքին պէս, օրական սնունդի պէտք ունի: Եւ այո՛, որչափ որ հոգին աւելի է մարմինէն, այնչափ ալ բարձր է մեր հոգեկան սնունդը մարմնականէն:

Տեսնենք հիմա, թէ ի՞նչ սնունդ կ'ուզէ մեր հոգին: Նախ՝ ան կ'ուզէ սնունդը կենաց Բանին առջեւ միայն հացիւ կեցցէ մարդ, այլ ամենայն բանիւ որ ելանէ ի բերանոյ Աստուծոյ: Աւետարանը սնունդն է մեր հոգիներուն. առանց անոր՝ անսուղ պիտի կորսուէր և մահանար մեր հոգեկան կեանքը: Աւետարանն է այն երկնաւոր մանան, որ այս աշխարհի անապատին մէջ թափառող Նոր Իսրայէլներուն համար հո-

գեկան սնունդ կը հայթայթէ: Աւետարանի հոգին, Յիսուս ինքը, կենաց Հացն է մեր հոգիներուն. իր մարմինը ճշմարիտ կերակուր է և արիւնը՝ ճշմարիտ ըմպելի. և այս կենաց Հացը, կեանքի Աղբիւրը, իր մահուամբ կեանք ջամբեց մեզ. յաւիտենական կեանք: Աւետարանը ճշմարիտ խոնճոյքն է մեր հոգիներուն. հո՛ն կ'առնենք յաւիտենական և անհուն սիրոյ սնունդը, սնունդը գութին և ներողութեան, սնունդը հոգեկան բարձրացման, սնունդը ճշմարտութեան, սնունդը սրբութեան, և վերջապէս՝ սնունդը փրկութեան: Ծատ հացալից սեղաններ կան Աւետարանի առատութեան սրահներուն մէջ. բայց, մենք անառակ որդիի թափառումներուն և խողարածի աղտոտ կեանքին մէջ հոգեւին չենք անդրադառնար մեր Հօրը տան, ուր մեզ կը սպասեն զրկող թեւեր, տաք համբոյրներ զրոյմելու պատրաստ սիրտեր, որդիութեան առաջին պատմութեան, ակնակուռ և թանկագին մատանին և պարարտ հորթով պատրաստուած փրկութեան սեղանը: Ուրեմն, քրիստոնէի մը համար կը վայելէ՞ մեղաց եզրիպտոսին եօթնամեայ սովին առթած աղիքի գալարումներուն տակ մեռնիլ անսուղ: Որո՞ւ համար կատարուեցաւ փրկութեան այս զոհը, շնորհաց այս տօնը. որո՞ւ համար բացուեցան Յովսէփեան առատութեան այս ամբարանոցները: Ահա ա՛յս է այն սնունդը որ կը գտնէ հոգին Աւետարանի լիութեան մէջ. որովհետեւ, Աստուծոյ Օրէնքը մեղրէն ու մեղրի խորիսխէն աւելի քաղցր է և կ'անուշացնէ մեր քիմքերը: Այսպէս կը զոյէ Եսայի դարերու մէջէն, իր հրամաքուր բերնով. — «Ո՛ր ծարաւիդ էք՝ երթայք ի ջուր. և որ միանգամ ոչ ունիք արծաթ, երթայք գնեցէք. և կերիջիք առանց արծաթոյ և գնոց զինւոյ. և զճարպ բնաւ ընդէ՛ր իսկ գնէք արծաթոյ և ոչ հացի, և զվաստակս ձեր ոչ ի յագուրդ. լուարուք ինձ և կերիջիք զբարութիւնս, և վայելեսցեն ի բարութիւն անձինք ձեր» (Ես. ԾԵ. 1-2):

Ահա ա՛յս է Աւետարանին կենաց Բանին հրաւերը, «արդարութեան անօթի և ծարաւի» հոգիներուն համար: «Երանի՛ որ քաղցեալ և ծարաւի իցեն արդարութեան, զի նոքա յագեցին» (Մատթ. Ե. 6):

Ուրիշ նշանակութեամբ մը Աստուած



է ճշմարիտ սնունդը մեր հոգիներուն, ստորոգելու Աստուածային անհուն ստորոգելիներուն համար և դէպ անոնք մեծնալու և զարգանալու կը բաղձան մեր հոգիները, ստորոգելիներ՝ որոնց կնիքը զրոշմունցաւ մեր հոգիներու ճակտին, և որոնց նմանելու կարելիութեան շունչը փչունցաւ մեր ունեցեալներու: Աստուածայնացումի այս ներքին տենչանքը Աստուծոյ և Անոր անհուն ստորոգելիներէն ուրիշ բանով մը չի յագենար:

Մեր հոգեկան կեանքը պէտք ունի նաեւ պահպանութեան: Ինչպէս որ մեր մարմնական կեանքը հագուստի, բնական քանի և ուրիշ պաշտպանութեան պէտք ունի, այնպէս ալ հոգեւոր պահպանութեան պէտք ունի մեր հոգեկան կեանքը: Այո՛, Աստուծով և Անոր պատուիրանքներուն կատարումով միայն կարելի կ'ըլլայ այս պահպանութիւնը: Պէտք ունինք պահուելու Աստուածային բարկութենէն, որովհետեւ մեր մեղսալից խորհուրդները, մեր չար գործերը, մեր խաբեպատիր սիրտը և պատւանալից հոգին արժանի կը դարձնեն մեզ Անոր բարկութեան. բայց Աստուածային գութը կը պահպանէ զմեզ, երկարելով մեր կեանքերուն թիւը, շարունակելով փրկութեան միջոցները, պարգեւելով շնորհաց առատութեան ոռոգող անձրեւները. ահա այդ կերպով մեր հոգիները ազատ կը մնան Աստուածային զայրոյթէն, որ արդար է. զի Իսրայէլի առակեալ այգիին պէս, ամէն խնամք ու հոգածութիւն գործադրած է Աստուած որ մենք փրկութեան պտուղը հասցնենք, բայց մենք փուշ ու տատասկ յառաջ կը բերենք և մահաբեր ողկոյղներով զարդարուած ենք: Աստուծոյ սէրն է որ կը պահպանէ զմեզ: Ի՞նչ պիտի ըլլար մեր վիճակը՝ եթէ Աստուած սոսկ իր արդարութեամբ վարուէր մեզի հետ. այն ատեն Անոր բարկութեան առջև ո՞վ պիտի կրնար կենալ: Ո՞վ պիտի կրնար արդարանալ Անոր առջև, որ անհուն և յաւիտեանական Արդարութիւնն է: Զէ՞ որ Աստուածահայր կոչուած Դաւիթ մարգարէն իսկ ըսած է իրեն համար, «Անօրէնութեամբ յղացաւ և ի մեղս ծնաւ զիս մայր իմ»: Ուր կը մնանք մենք որ մեղքի մշակներ ենք, և ախոյեանները՝ անիրաւութեան: Ուրեմն, Աստուած է որ կը պահպանէ մեր հոգիները. և

մեր հոգեւոր կեանքը Անոր հոգածութեան առարկայ մնալով միայն կարող է չարութեան հակադէմ, հակառակ ներքին ու արտաքին աննպաստ և մահացուցիչ ազդեցութիւններու: Այո՛ մեր հոգիները պէտք ունին նաեւ պահպանութեամբ շարին ազդեցութիւններէն. չարին, որ թունաւորած է մեր հոգիին կեանքը. և այս ալ կարելի է դարձեալ մեր Երկնաւոր Հօր հոգածութեամբ և խնամքով:

Ահա այս կերպով մեր հոգիներուն սնունդը՝ Կենաց Խօսքով, Աստուածային պահպանութեամբ, հացն է մեր հոգիներուն, և մեր օրուան հացը ըսելով պէտք է հասկընանք նաեւ այս հոգեկան հացը: Բայց, այս կերպով հացին առաջին նշանակութիւնն ալ կարեւորութենէ զուրկ նկատել չենք ուզեր: Քրիստոնէութիւնը այնչափ վերացական կրօնք մը չէ, որչափ հասկնալ կը կարծեն ոմանք, որ բնաւ կարեւորութիւն չը տայ մեր մարմնական պէտքերուն, ու միայն աղօթք, Ս. Գիրքի ընթերցում, հոգեւոր խօսակցութիւն, պաշտօն և պաշտամունք, և ասոնք միայն ըլլան իր պահանջները: Այո՛, ասոնք էական և բարձր պահանջներ են, բայց պէտք չէ անտեսել նաեւ մեր մարմիններուն արդար պահանջները. որովհետեւ՝ մեր հոգեկան չէնք մեր մարմիններուն վրայ կառուցուած է: Մեր մարմինները կենդանի Աստուծոյ տաճարներ են. հոգիին տաճարներն են, և հետեւաբար, սուրբ են նաեւ մեր մարմինները և մարմնական պահանջները՝ իրենց օրինաւոր և Աստուածահաճոյ շրջանակին մէջ: Մեկնիչ կօտէ կ'ըսէ. «Աստուծոյ ծառայելու համար առաջին և էական կէտը ան է որ մենք ապրինք»: Այո՛, ապրինք, ո՛չ թէ չարաչար, մեր մարմինները լիկելով ու անիրաւելով, ինչպէս կ'ընէին ճգնաւորական դարու շատ մը մենակեաց անապատականներ. այլ ապրինք չափաւորութեան, ողջախոհութեան և պարզակեցութեան պահանջումներուն համեմատ: Որչափ որ մեղք է աշխարհասէր կամ աշխարհամոլ ըլլալ ճաշակով, փափաքով ու կենցաղով, այնչափ ալ մեղք է աշխարհատեսաց և ինքնազրկող ըլլալ՝ մեր կեանքին համար: Սուրբ են մեր քօներ, հանգիստը, առողջութիւնը, հացը, պտոյտը մարմնակրթանքը, ընթերցումները, խաղերը և ամէն միջոցներ, որոնցմով կը բարդաւածի կեանքը և անոր եռանդազին գործու-



նէութիւնները մեր մէջ, նոյնպէս սուրբ են մեր հոգեւոր կեանքին բարգաւաճման համար գործածուած բոլոր հոգեւոր և կրօնական միջոցները: Ասոր համար է որ Քրիստոնէութիւնը կոչուած է ըլլալ ապագայի ալ կրօնքը, առաւելապէս իր այս առողջ սկզբունքներուն պատճառաւ:

Հետեւաբար, «Հաց» խնդրելով հայցած կ'ըլլանք նաև այն բոլոր միջոցները, որոնցմով մեր թէ՛ հոգեկան և թէ՛ ալ մարմնական կեանքին շարունակումը կ'ապահովուի: Աստուած մեռելներու Աստուածը չէ, այլ՝ կենդանիներուն: Գերեզմանը զԱստուած չի փառաբաներ. Աստուած մեղաւորին մահէն հաճոյք չի զգար: Ահա այս պատճառներով Ան կ'ուզէ որ մենք ապրինք և առատապէս կը շնորհէ մեզ մեր կեանքի պահպանութեան միջոցները:

(2). — Հայցուածին երկրորդ բառն է Մեր: Ինչո՞ւ մեր հացը: Նախ՝ որովհետև Աստուած զայն մեր աշխատութեան հետ կապած է. «Քրտամբք երեսաց քոց կերիցես զհաց քո» (Ծննդ. Գ. 19): Այս՝ ուրիշ խօսքով՝ կը պատուիրուի նաև Ա. Թեսաղ. Թուղթին մէջ. «Հանդարտել և գործել զիւրաքանչիւր, և գործել ձեռքք ձերովք, որպէս և պատուիրեցաք ձեզ, զի զնայցէք պարկեշտութեամբ առ արտաքինսն, և մի իւրի կարօտեալ իցէք (Ա. Թես. Գ. 11): Առաքեալը աւելի վճռականօրէն կը կրկնէ իր այս պատուէրը երկրորդ Թուղթին մէջ՝ ըսելով. «Քանզի մինչ առ ձեզն իսկ էաք, զայս պատուիրեցաք ձեզ, թէ որ ոչն կամիցի գործել, և կերիցէ մի» (Բ. Թես. Գ. 10): Հետեւաբար, այս հացին մեր աշխատութեան լծորդուած ըլլալը կերպով մը յարմարութիւնը կուտայ մեզ զայն անուանելու Մեր Հացը. որովհետև, առանց աշխատութեան ինչ որ ուտենք՝ մեր հացը չէ ան:

Ուրիշ կէտ մըն ալ սա է, թէ «Մեր» կ'ըսենք, այսինքն յոգնակի կ'աղօթենք, և այս կերպով ուրիշներու համար ևս աղօթած կ'ըլլանք, խնդրելով նաև անոնց օրական հացը: Որովհետև, այս աղօթքին Մուտքին մէջ երբ «Հայր Մեր» կ'աղօթէինք, բոլոր մարդոց հետ մեր ունեցած եղբայրութիւնը կը հասկնայինք: Ահա՛ այդպէս ալ երբ մեր հացին համար կ'աղօթենք, բոլոր մարդոց ալ նոյն այս մեզի տրուած հա-

ցէն շնորհուիլը հայցած կ'ըլլանք: Այս, ինչպէս որ մենք մեր հացը մեր ճակտին քրտինքովը կը շահինք և Աստուծմով իրաւունքը կ'ունենանք ըսելու, «Մեր հացը», այնպէս ալ բոլոր մարդիկ կը շահին իրենց հացերը. և պէտք է որ շահին ալ, որովհետև, ա՛յս է արդարութեան պահանջը. «Ով որ չի գործեր՝ թող չուտէ» կանոնը շատ արդար է և տրամաբանական: Բայց այս մեր բառին նշանակած եղբայրական կապակցութիւնը ուրիշ զգացում մը ևս կ'արթնցնէ մեր մէջ. այն է անկարներու և տկարներու օգնելու զգացումը, գութի զգացումը: Այսպէս աղօթելով մեր վրայ առած կ'ըլլանք այնպիսիներու ալ օգնելու նուիրական պարտականութիւնը, եթէ մեր հացը շնորհուի մեզ, հոգ չէ թէ այն օրուան հաց միայն ըլլայ, պէտք ենք անկէ բաժին հանել մեր կարօտ եղբայրներուն: Որովհետև, խնճոյքներ սարքող և համադամներով գիրցող անսիրտ մեծատուններուն դռներուն քով չունենէ միայն այցելուած աղքատ Ղազարոսներ քիչ չեն: Մարդկութեան անցուդարձի ճամբաներուն վրայ վիրաւոր ինկածներ անպակաս չեն. անոնց համար Բարի Սամարացիներ ըլլալ պէտք ենք: Առանց այսպիսի ներքին տրամադրութեան մը՝ վախճանք աղօթելու խնդրելով «մեր հացը» հապա ըսենք, «իմ հացս». որովհետև, Աստուծմէ իբրև մեր հացը առնել և զայն իբրև սոսկ մեր անձերուն յատուկ հաց գործածել՝ զԱստուած խաբել պիտի ըլլար. և արդէն գիտենք որ զԱստուած չենք կրնար խաբել:

(3). — Հանապազօրդ, այսինքն ամենաուր հացն է զոր կ'ուզենք: Այս բառով ալ կը հասկնանք գոհ ըլլալ մեր ամենաուր հացով. և արդէն հանապազօրդ հացն է մեր անմիջական և ամենակարեւոր պէտքը: Յիսուս կը պատուիրէ վաղուան համար չի հոգալ, որովհետև՝ մեզմէ ո՛չ մէկը իր հոգ ընելովը հասակին վրայ կանգուն մը կրնայ աւելցնել: Դաշտին շուշանները և երկնքի թռչունները մեր երկնաւոր Հօր հոգածութիւնը կը պատմեն մեզ. չէ որ Բընութիւնը իր ամէն գարնանային վերածընութեան առթիւ յոյսի նոր թելեր կը թըրթըռացնէ մեր մէջ. թռչունները իրենց դալալիկներու հրճուագին շեշտերով Աստուծոյ խնամքը չեն եղանակեր մեր ականջը:



ներու: Բոլոր արարածներ, շնչաւոր ու անշունչ, պերճ փառսեր չեն Աստուծոյ հայրական խնամքներուն շարունակման: Ուրեմն, ինչո՞ւ հոգալ վաղուան համար. որովհետեւ վաղուան օրը իրեն համար հոգ պիտի ընէ. օրուան իր նեղութիւնը հերիք է: Ըսել կ'ըլլայ, ուրեմն, թէ ամենաւեր հացին համար աղօթել պէտք ենք: Բայց, կան կարգ մը մարդիկ, մանաւանդ ծոյլ քրիստոնեաներ, որոնք Յիսուսի յանձնարարած այս «վաղուան համար չի հոգալէն» անհոգութիւն և անփութութիւն հասկընալ և սորվիլ կը սիրեն: Մինչդեռ, այդ պիտիներ չարաչար կը սխալին, որովհետեւ, մեր հացը ամենաւեր ըլլալով, մերը ըլլալէ, մեր աշխատութեան լծորդուած ըլլալէ, և անկէ ուրիշներու ևս բաժին հանելու համար տրուած ըլլալէ չի դադրիր: Ահա այդ խել պատճառաւ Յիսուսի այս խօսքերէն անհոգ, ծոյլ ու մեղկ կեանքի ծրագիր մը հանել և անոր համեմատ ապրելու աշխատիլ մեծ սխալ է: Քրիստոնէութիւնը մականորոշներու կրօնք մը չէ. ան օրհնած է աշխատութիւնը, դրամը, բարիքի ամէն միջոցները, և պարտք կը դնէ որ ամէն մարդ իր հացին համար աշխատի: Հոս՝ այս անհոգութեան իմաստը բաղդատական է. ինչ որ արգիլուած է սա է, թէ օրուան համար, օրուան հացին համար հոգալը Աստուծոյ Թագաւորութեան չի նախագասուի, ինչ որ կ'ընեն շատ մը աշխարհասէրներ: «Խնդրեցէք նախ դարձայնութիւն Աստուծոյ, և այդ ամենայն յաւելցի ձեզ»: Ահա այս է նշանակութիւնը «Հաւապազորդ Հաց»ին:

Ոհ, ո՞րչափ պիտի խաղաղէր աշխարհ եթէ մարդիկ գոհունակութեան այս գգացումով համակուէին. ո՞րչափ դիւրին պիտի ըլլար մղել կեանքի պայքարը. ո՞րչափ դիւրաւ պիտի լուծուէր Հացի Խնդիրը. ո՞րչափ աղէկ հասկցած պիտի ըլլային մեծահարուստ միլիոնատէրներ իրենց պարտականութիւնները իրենց ի շահ գործողներու հանդէպ, և գործաւոր դասակարգն ալ՝ գործելու իր բաժինը: Մինչդեռ աշխարհ՝ մոռցած իր ամենաւեր հացը՝ կը հետեւի իր մոլութիւններուն, զրկումի և անիրաւութեան: Արդեօք ե՞րբ մարդիկ օրուան հացին պարզութեամբ ապրելու պարզակեցութեան, դէպի Բնութիւնն ու բը-

նականը պիտի վերադառնան, հոգ չէ թէ միլիոններու վրայ հանգչին: Ամենաւեր Հացը օրհնելու պտուղն է աշխատութեան, արդէն Մանան ալ ամէն օր չէ՞ր հաւաքուէր, օրուան մը բաւելու չափ: Այսպէս է նաև մեր հոգեկան սնունդը, ինչպէս մարմնաւորը: «Ամենաւեր Հացով» աղօթած կ'ըլլանք մեր միտքերուն համար՝ օրական մտածութեան առարկայ, մեր սիրտերուն համար՝ օրական փափաքներ, որոնք պիտի օգնեն մեր հոգիին սննդառութեան և զարգացման:

(4). — «Տուր մեզ» բայն է հայցում ծին, որ շարունակութեան իմաստն ալ ունի. այս պաղատական-հրամայական մըն է, որ կը նշանակէ, հաճէ, փափաքէ, ուզէ տալ: Աստուած է բոլոր շնորհաց Արարիչը, Աստուած ինքն է մեր հացը, որ միշտ կ'իջնէ երկինքէն: Խորաշխարհները անապատին մէջ Մանան կերան և մեռան, բայց, երկինքէն իջած այս հացը ուտողը յաւիտեան կ'ապրի: «Տեսնո՞ւ երկիր լրիւ իւրով»: Ան կ'ուտայ մեր սնունդը, հագուստը, բնակարանը և ամէն ինչը: Անով ինչ ենք, և առանց Անոր՝ ոչինչ: Ուրեմն, յարմարապէս է որ կ'աղօթենք, «Տուր մեզ»: Կ'աղօթենք Մէկու մը, որ ունի, կրնայ տալ, կ'ուզէ տալ, տուած է անցեալին մէջ, կուտայ ներկայիս մէջ, ուստի՝ պէտք չէ՞ հաւատալ թէ պիտի տայ նաև ապագային մէջ: Միայն թէ ուզենք Անոր կամքին համաձայն. Որդին կը հրամայէ մեզ ուզել Անկէ, Ուզել մեր նիւթական պէտքերուն համար, ուզել մեր հոգեկան պէտքերուն համար:

(5). — Հայցում ծին վերջին բառն է «Այսօր»: Ղուկասու Աւետարանին մէջ կ'ըսուի «Օր ըստ օրէ» որուն մէջ ալ շարունակութեան իմաստ կայ, ինչպէս բային մէջ: Կարծես թէ այս ճամբորդի մը, ուխտի ճամբան գացողի մը երգն է: Եւ արդէն ի՞նչ է կեանքը, եթէ ոչ օր մը միայն. և ի՞նչ ենք մենք՝ եթէ ոչ ուխտաւորներ, ճամբորդներ դէպ երկնաւոր Քանանը, պէպի սրբազոյն երկիրը, արդարութեան հայրենիքը: Այո՛, մեր օրական երգն է այս՝ երազի նմանող մեր կեանքին համար. մեր «ստուերի պէս» անցնող, «ոստայնանկին կիողին պէս» սահող օրերուն համար: Մենք «Այսօր»ը ունինք մեր ձեռքերուն մէջ. բան մը չենք գիտեր վաղուան համար.



## ՍՈՒՐԲ ՍՏԵՓԱՆՈՍ

«Այր ի հաւատով եւ Հոգւով Սրբով»  
(Գ. Առաք. 2. 5)

Գործք Առաքելոցին անանուն հեղինակը, որ շատ հաւանաբար երբորդ Աւետարանին հեղինակն է, գեղեցիկ և վճիռ կերպով բարացուցած է Ս. Ստեփանոսի նկարագիրը «այր լի հաւատով և Հոգւով Սրբով»: Աւագ Տօներէն երկրորդն է Ս. Ստեփանոսի տօնը: Ան «նախասարկաւագ», «նախաժկայ», «առաքեալ», «առաջին մարտիրոս» կը յորջորջուի, և նախնական Գլխատնէական Եկեղեցւոյ փառապանծ դէմքերէն մին եղած է և որ առաջինը եօթանց խումբին, որոնք ապա Սարկաւագ անունը ստացան, որ Եկեղեցւոյ մէջ ծառայող և կամ սպասուորող կը նշանակէ: «Եօթանց» խումբին ընտրութեան զլիսաւոր պատճառը և շարժառիթը եղած էր, երուսաղէմի մէջ ամենօրեայ հացի բաշխումին մէջ (դրամ կամ սնունդ) հեղինակս աշխարհաբան անտէր մնալին, ինչպէս որ կը կարգանք «զի արհամարհեալ լինէին ի պաշտամանն հանապազորդի աշխրք նոցա»: Այսինքն՝ հեղինակս հրեաներու աշխարհաբան ամենօրեայ ողորմութեան մէջ կ'անտեսուէին (Գ. Առաք. 2. 1 և շար.):

հետեւաբար, սխալած կ'ըլլանք երբ աղօթենք, «Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր»:

Պէտք է սորվինք այս հայցուածով, նախ՝ հաւատք, երկրորդ՝ վստահութիւն, երրորդ՝ գոհունակութիւն, չորրորդ՝ չափաւորութիւն, հինգերորդ՝ աշխատասիրութիւն, և վեցերորդ՝ իրերօգնութիւն:

Ուրեմն, Տէրունական Աղօթքին մեզ վերաբերող այս հայցուածը, որ մարդկային հայցուածներուն առաջինն է, մեր կարծածէն շատ աւելի ընդարձակ և խորունկ նշանակութիւն ունի թէ՛ հոգեւորապէս, թէ՛ մարմնաւորապէս: Այս գիտակցութեամբ աղօթենք, — «Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր»:

ԳՐ. ՍՐԿ. Հ. ԳԱՆՈՒՍՏԵԱՆ  
(Շարունակելի՝ 13)

Երկոտառան առաքեալները ի տես այս կացութեան, աշակերտներու և հետեւողներու խումբը կանչեցին, ինչ որ բաւական մեծցած էր, առաքելական քարոզութեանց շնորհիւ և հանապազորեայ բաշխումի հարցը եւ կատարուած անկանոնութիւնները հարթելու համար, առաջարկեցին որ եօթը անձերէ բաղկացած մարմին մը ընտրուի, «զորս կացուցուք ի վերայ պիտոյիցս այսօրիկ», իսկ իրենք ալ ազատ ըլլան աղօթքով և պաշտամունքով զբաղելու «աղօթից և պաշտաման բանին հպատակ լիցուք»: Թէ՛ ինչո՞ւ համար եօթը անձեր ընտրուեցան, այդ մասին որոշ բան մը չենք գիտեր, բայց շատ հաւանական է որ, եօթը զլիսաւոր ճիւղերու բաժնուած ըլլալ այդ գործին մատակարարութիւնը:

«Եօթանց» այս խումբը, առաքեալներէն ձեռնադրութիւն ալ ստացան, «եղին ի վերայ նոցա զձեռս», և իրենց գործունէութեան սկսան:

Ս. Ստեփանոս, «Եօթանց» այս խումբին զլիսաւոր առաջնորդն էր. իսկ իր վեց միւս ընկերներն էին. 1. Փիլիպպոս, 2. Պրօքսորոն, 3. Նիկանորա, 4. Տիմոթէա, 5. Պարմենա, 6. Նիկողայոս Անտիօքացին: Աւանդութեան մը համաձայն, Ստեփանոսն ալ, այսինքն Ս. Ստեփանոս և իրեն զասակից վեց ընկերները, Սիոնի լեռան վերնատան մէջ՝ ուր Ս. Հոգին իջաւ առաքելոց վրան, սարկաւագ ձեռնադրուեցան առաքեալներէն:

Պաղեստին, այդ ժամանակ, հռոմէական պետութեան գերիշխանութեան ներքեւ կը գտնուէր: Սակայն և այնպէս, հրեաները Պաղեստինի մէջ կարգ մը առանձնաշնորհութիւններ կը վայելէին: Պաղեստինաբնակ հրեաները երկու զլիսաւոր խումբերու բաժնուած էին: Պաղեստինցի, արամերէն խօսող հրեաներ: Արտաքոյ Պաղեստինի, հեթանոսութենէ ի հրէութիւն դարձող հրեաներ, որոնք յունարէն կը խօսէին և մեծամասնութիւն կը կազմէին: Պաղեստինի զլիսաւոր քաղաքներուն մէջ, մանաւանդ Երուսաղէմի մէջ, հրեայ ժողովարաններ (Սինակոկ) կային, ուր՝ Ս. Գիրքը յունարէն լեզուով կը կարդացուէր, այս իսկ պատճառաւ յունարէնը եթէ ոչ տիրապետող, գոնէ մըցորդ լեզու մըն էր արամերէնին հետ:



Այս «Եօթանց» ընտրութեամբը, որուն մէջ Ս. Ստեփանոս ազգեցիկ զիրք և հեղինակութիւն ունէր, իրրեւ քարոզիչ, կազմակերպիչ և հրաշագործ մանաւանդ, տիրական հեղինակութիւն մը ունեցաւ: Երուսաղէմի նորահաստատ Եկեղեցին իր ունեցած ներքին վարչականով, սկսաւ զօրանալ, աճիլ, զարգանալ, ո՛չ միայն ռամիկ ժողովուրդը անոր քարոզութենէն և հաւատքի զօրութենէն ու անոր խորունկ ներշնչումէն ազդուելով Քրիստոնէութեան գիրկը կուգար, այլ բազում քահանաներ, «բազումք ժողովք քահանայիցն անսային հաւատոցն»: Ս. Ստեփանոսի մասին չենք գիտեր թէ երբ Քրիստոնէութիւնը ընդունեց, որոշ է սակայն իր հիւլէնախօս հրեայ մը ըլլալը, ինչպէս իր անունէն ալ կը մակարերուի: Եկեղեցւոյ հայրերէն, Ս. Եպիփան կ'ըսէ թէ, Ս. Ստեփանոս Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընտրած 72 աշակերտներէն մին էր, սակայն և այնպէս որոշ տուեալներ և փաստեր չունինք այս վկայութեան ճշտութեան մասին: Ս. Ստեփանոս գերազանցապէս հաւատքի, Աստուածգլխութեան մարդն էր, և աստուածային շնորհները կը փայլեցնէր իր անձին վրայ: Հիւլէն բարձրաթոփչ միտքը եւ հրէական կրօնական միսթիք հոգին կերտեցին և բարձրացուցին Ս. Ստեփանոսի անձը, բազմազան Աստուածային շնորհներով, կրօնական երկիւղածութեամբ եւ իմաստութեամբ եւ հոգեկան անընկճելի զօրութիւններով: Ան՝ կայծ մը ունէր Մովսէս Աստուածատես մարգարէէն. եւ ժառանգած էր Երրայեցի մարգարէներու և տեսանողներու հոգեկան ուժը:

Ս. Ստեփանոս, իր բարձր ոգիով հըրաշներ կը գործէր ժողովուրդին մէջ, և օր ըստ օրէ իր մասին ժողովրդական համակրութիւնը և սքանչացումը կը շատնար, իր առաքելական գործունէութիւնը եւ կատարած գործին համբաւը օրուան մարդը պիտի դարձնէին զինքը:

Երուսաղէմի մէջ, կարգ մը նախանձոտ անձեր, որոնք «Լիբէացւոց», «Կիւրենացւոց», «Աղեքսանդրացւոց» և «Կիլիկեացւոց» ժողովարաններէն էին, չէին քաշեր զինքը, չէին սիրեր, կը նախանձէին իր ունեցած ժողովրդական համբաւին, և անընդհատ կը վիճէին հետը:

Այս նախանձոտ և քսու անձերը, որոնց անունները չենք գիտեր, սակայն անոնց մէջ շատ հաւանաբար Սողոմոն ալ կար, սկսան ծուռ, սխալ և մուլար միջոցներով հետապնդել և նեղել զինքը: Անոնք կարգ մը մարդիկ կաշառեցին եւ անոնց ըսել տուին թէ՝ մենք իրմէն հայհոյանքներ եւ լուտանքներ լսեցինք Մովսէսի և Աստուծոյ դէմ: Ուխտեալ այն հակառակորդները, առիթը ներկայանալուն պէս, ժողովրդային զիրահաւանութիւնը զրգուելով զայն բռնեցին և տարին Սենեդրիոն: Հոն, հրէից մեծագոյն ատեանը միայն իրաւունք և իրաւասութիւն ունէր, ո՛չ միայն դատելու օրէնքի սահմանին մէջ, այլ նաեւ դատապարտելու և մահուան վճիռ արձակելու, նամանաւանդ օր՝ Ս. Ստեփանոս կը ներկայանար իրրեւ ծանր ամբաստանեալ, իրրեւ հայհոյիչ Մովսէսի և Աստուծոյ:

Հրէական Գերագոյն Ատեանին մէջ, կաշառուած սուտ և վարձկան վկաները, Ս. Ստեփանոսին դէմ իրենց օրինական ամբաստանութիւնները կատարեցին և ըսին Քահանայապետին և Սենեդրիոնի 72 անդամներուն «այսու այս ոչ դադարէ խօսիլ բանս հայհոյութեան զտեղւոյն սրբոյ և զօրինացն»:

Սենեդրիոնի անդամները, հրեայ օրէնսդէտներ, կրօնականներ, կրօնական առաջնորդներ, քահանայապետները, զպիւրները, օրինաց վարդապետները և ձեր ու աղեղարդ իշխանները և տարուան քահանայապետը, երբ Ս. Ստեփանոսի դէմքին նայեցան, զմայլեցան և յափշտակուեցան. ան՝ հրեշտակային տեսիլք և անմեղութեան շող մը ունէր իր դէմքին վրայ: Եւ ահա օրուան Քահանայապետը կը սկսի իր հարցաքննութեան և կ'ըսէ Ս. Ստեփանոսին. «Եթէ արդարեւ այդ այդպէս իցէ»:

Ո՛վ Ստեփանոս, այս բոլոր ըսուածները, ամբաստանութիւնները ճիշդ են արդեօք: Ս. Ստեփանոս, ատեանին առջև կրակոտ, խիստ և երկար ճառ մը կը խօսի, որուն մէջ Երրայեցւոց անցեալ պատմութիւնը կը պատմէ իմաստասիրութեամբ և վերլուծութեամբ «Աստուած փառաց երեւեցաւ հօր մերում Աբրահամու» կ'ըսէ և այնպէս յաջորդաբար պատմական մեծ դէմքերը կը վերլիչէ, ինչպէս Աբրահամ, Յովսէփ, Մովսէս, Դաւիթ և ուրիշներ:



Ս. Ստեփաննոսի ճառին մէջ կան հետեւեալ կէտերը: 1. Աստուծոյ յարաբերութիւնը իր ուխտեալ ժողովուրդին հետ: 2. Ս. Գիրքը ցոյց կուտայ թէ, Իսրայէլը սկիզբէն ի վեր միշտ դէմ կեցած է Աստուծոյ պաշտօնեաներուն: 3. Աստուծոյ ուխտը կը կանխէ Օրէնքը և անկէ անկախ է: 4. Աստուծոյ կողմէն զրկուած բոլոր մարգարէները, միշտ ժողովրդեան կողմէն հալածանքի ենթարկուած են: Ս. Ստեփաննոս իր հոյակապ ճառովը, հրեղէն լեզու եղած է կարծես, Սենեգրիոնի անդամներուն հոգիները այրող: Ս. Ստեփաննոս, հաւատքի և տեսիլքի մեծ մարդը, իր ճառին վերջաւորութեան, ատենանին մէջ դոնուոդները խիստ և բուռն բառերով կը յանդիմանէ և անոնց բոլորին ուղղելով իր հատու խօսքերը կ'ըսէ անոնց «ո՛վ խտապարանոցներ և սրտով ու ականջով չթլփատուածներ, դուք միշտ Ս. Հոգւոյն (ճշմարտութեան) հակառակ կը կենաք, ինչպէս ձեր հայրերը, այնպէս ալ դուք»:

Այս խիստ յանդիմանական ու յարձակողական խօսքերուն վրայ, քահանայապետը և Սենեգրիոնին անդամները սկսան զայրանալ ու յուզումէն իրենց ականները կը կրճտէին «կրճէին զատամուշս ի վերայ նորա»: Ս. Ստեփաննոս, այդ պահուն հոգիացած ու վերացած, ամէն բան աչք առած էր արդէն և հոն խռնուած բազմութեան մէջ կ'աղաղակէ և կ'ըսէ. «Ահա՛, կը տեսնեմ, երկինքը բացուած, ու Մարգու Որդին, Աստուծոյ աջ կողմը նստած»:

Հրեայ ամբոխը մոլեգին և կատաղած, ալ չի կրնար համբերել. չի կրնար սանձել իր զայրոյթը, և բոլորը մէկ՝ իրեն վրայ յարձակեցան, քաղաքէն դուրս հանեցին և քարկոծեցին զայն:

Քարկոծումը հրէից մէջ, սովորական պատիժ մըն էր և ըստ օրինի պէտք էր զործադրուէր երկու կամ երեք վկաներով, և ոչ թէ մէկ վկայով միայն. «Երկուք և երեք վկայիւք մեոցի որ մեռանիցին և մի՛ մեոցի միով վկայիւ»: Ս. Ստեփաննոսի վերջին խօսքերը կ'ըլլան. «Տէր Յիսուս ընկալ զոգի իմ», և ան քարերու տարափին տակ ծունկի կուգայ և կ'աղաղակէ. «Տէր, մի համարեր նոցա զայս մեզս», ու կ'աւանդէ իր հոգին առ Աստուած: Սուղոս, ըստ Գործք Առաքելոցի՝ «էր կամակից սպանման նորա»:

## ԱՆՄԱՀՈՒԹԵԱՆ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Հակառակ այն ամենուն որ ըսինք գալիք կեանքի մասին, արդի մարդոց անհոգութեանը շուրջ, անմահութեան կարելիութիւնը անոնցմէ շատերուն համար աւելի խնդրական է քան անոր նշանակութիւնը: Անոնք կրնայ ըլլալ որ հետեւած չըլլան ոչնչացման նշանակութեանը իր բոլոր կցորդութիւններով, բայց բնազդաբար զգացած են տարբերութիւնը որ կայ անձնական յոյսի համար գալիք կեանքը հաստատելու կամ ուրանալու մէջ: Անոնք մշտածելով նոյնիսկ իրենց մահուան վրայ կամ ուրիշներու կորուստին մէջ զրկանքի հանդուրժելով, իրենց անտարբեր դիրքը հալած գտած են կսկիծի մէջ ու յոյսի համար անչէջ բաղձանքի խորը, և երբ ի յաւելումն այս բնական հակազդեցութեան, ի ներկայութեան մահուան, կը տեսնեն ազդեցութիւնը կեանքի հա-

Ս. Ստեփաննոս, այսկերպ անթառամ պսակին արժանացաւ, իր սուրբ արիւնովը մկրտուեցաւ ի սէր Քրիստոսի, ի սէր ճշմարտութեան և ի սէր իր սուրբ հաւատքին:

Ս. Ստեփաննոսի տօնը՝ տօնն է բոլոր զպրոցականներուն, զպիւրներուն, աշակերտութեան և ուսանողութեան: Իսկ Սուրբ Երուսաղէմի մէջ, տօնն է իրեն գասակից Սարկաւազներուն:

Հին աւանդութիւնը Ս. Ստեփաննոսը կը ներկայացնէ սպիտակ պատմութեանով, փայլուն և կարմիր զգեստով, մոմ և բուրմառ ի ձեռին: Սպիտակ պատմութեանը խորհրդանշանն է իր անմեղութեան, անբռնութեան: Կարմիր զգեստը իր արիւնը կը ներկայացնէ որ տուաւ Եկեղեցւոյ համար: Մոմը՝ խորհրդանշանն է լոյսին, զիտութեան և ճշմարտութեան: Իսկ բուրմառը՝ խորհուրդն է իր աղօթքին, որ կը բարձրանայ առ Աստուած: Ս. Ստեփաննոս, պատակ մը եղաւ իր անունովը, պսակուեցաւ մեր Տիրոջ կողմէն և փառաւորուեցաւ երկնային անթառամ պսակով...:

ՊԱՐԿԵՒ ԿՐԴ. ՎՐԹԱՆԷՍԵԱՆ



մար այն հաւատալիքին թէ գերեզմանը կը վերջացնէ ամէն բան, առանց հարցնելու թէ անմահութիւնը կեանքը տարբեր կ'ընէ՞ թէ ոչ, և թէ իրենց հաւատքին համար կարելի՞ է երբեք բանաւոր կերպով հետեւիլ իրենց անմահութեան բաղձանքին: Հիւքսլէյ, թէև անգէտ ապագայ կեանքի մասին, 1883 ին կը գրէր Ճօհն Մորլէյ. «Ամէն ժամանակ մէջս կը փայլատակէ տեսակ մը սարսափ թէ 1900 ին հաւանականաբար այլ ևս չպիտի գիտնամ բան մը աւելի 1800 ի գիտցածէս: Ծատ պիտի ուզէի աւելի կանուխ ըլլալ դժոխքին մէջ, ամէն գնով մէկուն մէջ այն վերին շրջանակներէն ուր կլիման և ընկերութիւնը շատ փորձիչ չեն: Կը զարմանամ եթէ նեղուիք այս կերպով: Ուշ կամ կանուխ, կա՛մ մահուան վախին կապուած փորձառութեամբ և կամ անմահութեան վրայ անհաւատութիւն ստեղծող աշխարհի տեսակին լուսաբանութեամբ, շատեր կը հասնին հոն ուր ապագայ կեանքին հաւատալու կարելիութիւնը ստիպողական կը դառնայ անոնց համար:

Հետեւաբար, երբ կը պնդենք, ինչպէս պնդած ենք, թէ անձնական յաւերժութեան ժխտումը մեծ կարեւորութիւն ունի մարդկային կեանքի ամբողջ նշանակութեան համար, շատեր մեզի պիտի դառնան ըսեն, «Ոչ ոք պէտք ունի մեզի ըսելու թէ անմահութեան հարցը մեզի համար կը պարունակէ ծանր հետեւանքներ: Մենք մահուան քովիկը կեցած ենք, զիտենք: Մեր յարաճուն տարիներուն հետ մտածած ենք մեր սեպհական մահացութեան վրայ և նկատած ենք թէ ինչ անդանալի քայլերով կը քալենք գէպի մեր ըստոյգ վախճանը: Դիւրին չէ մտածել մեր պարտուած սէրերուն վրայ, մեր գաղափարականներուն վրայ որոնց չենք հասած, մեր բոլորովին մարած յիշողութեան վրայ, և իբր թէ բնաւ եղած չենք ի վրայ: Երբեմն երբեմն կը մտածենք նաև մեր ցեղին վրայ, անոր խորհրդաւոր ծագմանը վրայ, անոր երկար, աշխատութեանը վրայ, մեղքին և պարագային հետ անոր ունեցած տարօրինակ բաղխումին վրայ, և կը հետաքրքրուինք թէ չի կրնա՞ր ըլլալ որ վերջ ի վերջոյ ուրիշ բան չի մնայ ցուցնելիք բոլոր այս պայքարէն, տենչանքէն, յոյսէն ու զոհո-

ղութենէն, եթէ ոչ նոր աշխարհներ չինուած հինին աւերակներէն և այն նոր աշխարհներուն մէջ յիշատակն իսկ չմնայ բոլոր անոնցմէ որոնք փորձուեցան հոս, մասամբ ձեռք բերուեցան և վերջապէս բոլորովին կործանեցան: Ոչ ոք պէտք ունի մեզի ըսելու թէ ասիկա կարեւորութիւն ունի: Մենք կ'ուզենք հաւատալ անմահութեան, բայց կրնա՞նք: Կարելի՞ է անմահութիւնը: Անոր դէմ ի՞նչ զօրաւոր փաստեր կը հանուին: Որովհետև ճիշդ այն եղանակով կ'ուզենք հաւատալ անմահութեան որ մեր իմացականութիւնը հաշուեյարդարի չենթարկուի մեր փափաքին: Յոյց տուէք մեզի թէ անմահութիւնը կարելի է»:

Երբ մարդ անձնատուր կ'ըլլայ պատասխանելու այս խոր հարցումին և յստակօրէն կը ջանայ որոշել թէ անմահութեան հաւատքին դէմ առարկութիւնները համոզիչ են թէ ոչ, նախ դէմ յանդիման կուգայ սատակաւորիչ իրողութեան հետ թէ մարդիկ այսօր կատարելապէս ծանօթ ապագայ աշխարհի վրայ հաւատքի դէմ բոլոր փաստերուն, և կարող կ'ուզուի անոնց բովանդակ նշանակութիւնը, տակաւին կը փափախեն յոյսեր, բոլորովին անվախ, յաւիտենական կեանքի մասին: Այն իրողութիւնը թէ բընական գիտութեան մէջ Սըր Օլիվըր Լօճի, հոգեբանութեան մէջ Ուիլիեմ ձէյմսի, իմաստասիրութեան մէջ Բրօքֆէսէօս Հերման Լօցի, բժշկութեան մէջ Տօքթոր Ուիլիեմ Օսլէյի նման մարդիկ բանաւոր կարծած են անմահութեան յոյսեր փայփայելը, անմիջապէս կը թելադրէ թէ մինչ անմահութիւնը չի կրնար ապացուցուիլ, ստուգուի հերքուած չէ: Այդպիսի մարդոց հաւատքին ի տես ակներեւ է որ գիտութեան կամ իմաստասիրութեան գիւտերէն ոչ մին անհրաժեշտօրէն կ'արգիլէ մարդ մը զաւիթ կեանքի բանաւոր յոյսէ մը: Անձնական յաւերժութիւնը կարելի է:

Կ'արժէ շեշտել ասիկա որովհետև շատ յաճախ ծանրացած են հակառակին վրայ, որովհետև շարունակ կը յիշենք որ երբեք գտնուած չէ տակաւին գոհացուցիչ փաստ մը անդրգերեզմանական կեանքի մասին: Կան կ'ըսեն նկատողութիւններ, դրական և ապահովիչ, որոնք կրնան բերուիլ զօրացնելու համար անմահութեան յոյսը, բայց խնդրին բնօրին այնպէս է որ չի կրնար ա-



պացուցուիլ մաթեմատիկական խնդրի մը ստուգութեամբ կամ շօշափելի գործերու վերաբերեալ գիտական ենթադրութեան մը ստուգելի ճշտութեամբը: Ասիկա ապագայ կեանքի վրայ ամէն հաւատացող պէտք է դիւրաւ ընդունի, բայց ասոր լծորդուած է այն իրողութիւնը թէ եթէ մարդիկ գծուար գտած են գոհացուցիչ կերպով ապացուցանել անմահութիւնը, բացարձակապէս ալ անկարելի գտած են զայն հերքել: Երբ կոլտ-վին Սմիթն կ'ըզակացնէ իր փորձը որուն մէջ ինք իրեն համար կը թողու ամէն հաւատք անդրգրեղմանական կեանքի վրայ, իրաւամբ կ'աւելցնէ սա վճռական նախադասութիւնները, «Այս ամէնը ըսուեցաւ այն ենթադրութեան վրայ թէ գիտական սկեպտիկութիւնը կը յաջողի ապագայ կեանքի մը յոյսը կործանելու մէջ: Ամէն բանէ վերջ, մեծ է մեր տգիտութիւնը, և տակաւին կըրնայ բան մը գտնուիլ քողին ետին»: Շատեր այսօր կ'աշխատին այն պատրանքին տակ թէ, մարդուն մահը հիմա ստոյգ իրողութիւն մը դարձած է, և լուսաւորուածներուն և խելամուտներուն անունով պէտք է յայտարարուի թէ չկայ խօսքը լրջօրէն նկատի առնուելիք մէկը որ յաւակնի հերքել զալիք կեանքը: Թէպէտեւ կան շատ նկատելի առարկութիւններ, բայց ընդունուած է որ անոնք տարհամոզիչ են:

Դիտողութեան արժանի աւելի նախապատրաստական մէկ հարցը սա է որ խնդրին բնոյթովն իսկ կրնանք ակնկալել որ անմահութեան հաւատքը պաշարուի անհամար գծուարութիւններով: Ընդունելով որ մենք կ'ապրինք դերեղմանէն անդին, ենթադրելի՞ է որ մենք դիւրաւ կարենանք զայն կարելի երեւակայել: Մեր միտքերը ընդդիմութեան պիտի՞ չբաղխին կեանքի շարունակութիւնը հասկնալու փորձին մէջ պարագաներու տակ որոնք այնչափ օտար են այն պարագաներէն որոնց մէջ կեանքը միշտ կը զգացուի, և մեր երեւակայութիւնը պիտի չփշրուի՞ իր ճիգին մէջ որով կը ջանայ երեւակայել թէ ինչպէս մտածումն ու սէրը կրնան տակաւին յարատեւել, երբ այն պայմանները, որոնք կարելի ըրած են հոս մտածումն ու սէրը, փոխուած են: Դեռ չի ծնած մանուկ մը, նոյնիսկ եթէ իմաստասէր ըլլար, ազատ ժամանակ պիտի չունենար ինքզինքին պարզելու համար մեր երկ-

րային կեանքի դէպքերը: Ան կ'ապրի առանց օդի: Ինչպէս կրնայ ապրիլ առանց օդի: Ան երբեք լոյսը չէ տեսած: Ինչպէս կրնայ ըմբռնել զայն: Ան բացարձակապէս կախում ունի փայփայող շրջապատէն որուն մէջ կը գտնէ ինքզինքը, և չի կրնար ինքզինքը երեւակայել առանց ատոր ապրող: Մենքեան տազնապը՝ դեռ չի ծնած մանուկին պիտի թուէր մահուան նման, եթէ կարենար նախատեսել ինքզինքը խլուած բոլոր այն պայմաններէն որոնք մինչև այն ատեն պահած են իր կեանքը: Եթէ իր չի յիշուած սաղմնային օրերուն մէջ, «Աստուծոյ իր գլխուն զուռները գոցելէ օրեր առաջ», մարդ ունենար յոյսի կամ անյուսութեան իմաստասիրութիւններ, այդ իմաստասիրութիւնները ուշագրաւօրէն պիտի նմանէին իր սկեպտիկութիւններուն և իր գծուարաւ փայփայած ակնկալութիւններուն, երբ հիմա կ'երազէ իր գալիք կեանքին վրայ: Գուշակելու ենք որ այնչափ գծուար է գտնել մահուանէ վերջ անհատականութեան շարունակութեան կարելիութիւնը հասկնալու գործը:

Յաւիտեանական կեանքին հաւատալու մէջ գծուարութիւն մը չծագիր խնդրին բնոյթէն, բայց մեզի համար ստեղծուած է մարդոց տգիտութեամբը, վարդապետականութեամբը և աւելորդապաշտութեամբը: Ո՛րքան միտքերու մէջ անդրգրեղմանական կեանքը այնչափ սերտօրէն ընկերացած է ապագայ աշխարհին բնութեան մասնաւոր գաղափարներուն հետ, որ, ողբալի ճշտեալորով մը, մարդիկ կ'ուրանան անմահութիւնը յորմէհետէ այլևս չեն կրնար զայն երեւակայելու իրենց հին եղանակները պաշտպանել: Ընդելուզումը կը մերժուի և անոր հետ միասին զուրս կը ձգուին ազամանդները: Կալ կեանքին դէմ փաստելու ատան և դիւրին մեթոտ մըն է ծանրանալ երկնքի կամ գծովքի ըմբռնումին վրայ, և յետոյ նախատել իբր թէ այնչափ անհեթեթ հաւատք մը: Ապագայ աշխարհին վրայ մարդկային մտածումի պատմութիւնը կ'առաջնորդուի այդպիսի հեղեղութեան մը: Գրիստոնեայ գրականութեան մէջ ահարկու հատուածներ կան ուր վրէժխնդրութեան բաղձանքը, ամենանողկալի ձևերու մէջ, ինքզինքին ազատ ասպարէզ կուտայ, ամենէն անգուսպը, որովհետեւ բարեպաշ-



տուութեան արդարացումը ներկայ է: «Ո՛ր-  
չափ պիտի հիւանամ», կ'աղաղակէ թէո-  
թիւիւն, «ո՛րչափ պիտի խնդամ, ո՛րչափ  
պիտի ուրախանամ, ո՛րչափ պիտի հրճուիմ»,  
երբ տեսնեմ այնքան բազմաթիւ հպարտ  
միապետներ և երեակայուած աստուած-  
ներ որոնք կը հեծեն խաւարին ամենաւար-  
անդունդին մէջ. ա՛յնքան բազմաթիւ ա-  
տենակալներ, որոնք կը հալածէին Տէրօջը  
անունովը, հալելով աւելի կատաղի կրակ-  
ներու մէջ քան այն կրակները զորս կը  
վառէին քրիստոնեաներուն դէմ. ա՛յնքան  
բազմաթիւ իմաստասէրներ որոնք կը շա-  
ռագունին հրաշէկ բոցերու մէջ. իրենց  
խաբուած դպրոցակիցներուն մէջ. ա՛յն-  
քան բազմաթիւ հռչակաւոր բանաստեղծ-  
ներու զողզալը ոչ թէ Մինոսի, այլ Դրիս-  
տոսի դատարանին առջեւ: Եթէ անմահու-  
թիւնը այդպիսի հաւատք մը կը պարու-  
նակէ, ուրեմն այլևս չի կրնար ունէ ողջմտու-  
թեան տէր մարդու կողմէ լրջօրէն նկատի  
առնուիլ: Հետեւաբար կրնանք պնդել թէ  
անմահութիւնը ճշմարիտ կարենալ ըլլալով  
հանդերձ, մտածումի ամէն ձև որով մարդ-  
կութիւնը ցարդ երեակայած է զայն, կըր-  
նայ սուտ ըլլալ: Արդարեւ, երբ մարդ  
նկատէ թէ որչափ անհրաժեշտօրէն կը  
գործածենք մեր երկրային կեանքի խոր-  
հըրդանիչները ամէն ճիգի մէջ նկարագրե-  
լու համար ապագայ կեանքը, նկարագրա-  
կան լեզուի մեր վեհագոյն թռիչներուն  
մէջ ի՛նչպէս ունինք ոսկիէ փողոցներ եւ  
մարգարիտէ դուռներ, ջուրի գետեր եւ  
բուժիչ տերմներով ծառեր, ի՛նչպէս նոյն  
խակ երաժշտութիւնը, ամենաբնական խոր-  
հըրդանիչը մտքի յափշտակութեան, այն-  
չափ սարսափելիօրէն տաղակալի կը դառ-  
նայ երբ կ'երեակայենք երկնքի ուրախու-  
թիւնը անոր սահմաններուն մէջ, որ, ինչ-  
պէս Տօքթօր Ճուէթ կ'ըսէ. «Մեզի պէս  
կազմուած էակներուն, սաղմոսներ երգե-  
լու միօրինակութիւնը այնչափ մեծ վիշտ  
մը պիտի ըլլար որչափ դժոխքի տառա-  
պանքները, նոյնիսկ եթէ այս վերջինները  
հաճելիօրէն ընդմիջուէին սաղմոսերգու-  
թիւններով», երբ մարդ նկատի կ'առնէ  
անըմբռնելիութիւնը աշխարհի մը՝ որուն  
մէջ երբեք եղած ըլլանք, և որուն պա-  
րագաները խնդրին անհրաժեշտութեամբը  
օտար են մեր երազել կրցած ունէ մէկ

բանին, պարզապէս հաւանական չէ, ան-  
խուսափելի է, որ ապագայի մասին մեր  
բոլոր կարծիքները աւելի աննման ըլլան  
իրողութեանց քան տղու մը փայտիկներէ  
տունը՝ Թաթ Մահալի: Փայտէ տնակոյտ-  
ները և մարմարեայ մինարէնները առնուազն  
գոյութեան միւսնոյն ծրագրին մէջ են,  
բայց այս աշխարհը և գալիքը աներեակա-  
յելիօրէն տարբեր են: Ծամարտակը միայն  
կը յաւակնի գիտնալ գալ աշխարհին պա-  
րագաները: Ապագայ կեանքին լաւագոյն  
նկարագրութիւնը ցարդ գրուած՝ նոր կտա-  
կարանին մէջ գտնուելու է. «Ինչ որ ոչ  
աչքերը տեսած են, ոչ ականջը լսած է և  
ոչ ալ մարդու սրտին մէջ մտած»:

Անմահութեան ճշմարտութիւնը, ու-  
րեմն, կախում չունի այդ մասին խոր-  
հուրդներու ընդունելութենէն որուն երբեք  
հաւատացած ըլլան մարդիկ: Մովսիսա-  
ղացիները իրողութիւններ ըլլալէ չեն  
դադրած յորմէհետէ մարդկութիւնը կը  
կարծէր թէ անոնց պատճառը կէտ ձուկն  
էր որ կը կլլէր ծովը և յետոյ կը փսխէր  
զայն, ոչ ալ պատրանք մըն են խաւա-  
րումները որովհետեւ չինացիները ծնծղայ  
կը զարնեն սարսափեցնելու համար՝ վի-  
շապը որ կը լափէ արեւը: Ոչ մէկ ճշմար-  
տութիւն կախում ունի մարդուն այդ մա-  
սին ունեցած անբաւարար գաղափարնե-  
րէն: Անձնականութեան յաւերժութիւնը  
կրնայ պարուրել շարունակուած յիշողու-  
թիւնը ամէն բանի որ պատահած է հոս  
երկրի վրայ, կամ կրնայ մեր սեպհական  
սաղմնային օրերուն կամ մեր մանկու-  
թեան նախնագոյն օրերուն մասին մեր ու-  
նեցած յիշողութենէն աւելի բան մը չը  
պարունակել: Հոգիին պատահարին մասին  
մեր լաւագոյն երեակայութիւնները, երբ  
մահուան մէջէն կ'անցնինք միւս աշխարհը,  
ապահովաբար թերի են, թերեւս այնչափ  
թերի որ անոնց ոչ մէկ մանրամասնու-  
թիւնը ճշմարիտ է, և տակաւին անմահու-  
թիւնը կրնայ ըլլալ իրականութիւն մը, և  
հոգիին պատահարը ոչ-պատրանք մը: Հե-  
տեւաբար, գալ աշխարհին բնութեան մա-  
սին մասնաւոր յղացումի մը նողկանքին  
վրայ հիմնուած ապագայ կեանքի ոչ մէկ  
առարկութիւն կրնայ պաշտպանել իր գե-  
տինը:

(Գարունակիլի)

X



ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ**Ա.ՍՏՂԵՐԷՆ ՊԱՅԾԱՌ**

•

Աստղերէն պայծառ, աստղերէն բարի,  
Աչերն են իմ մօր, աւանդն անցեալին:  
Բոլոր ձայներէն աւելի անուշ,  
Կը բաշխուի նորէն ձայնն իր իմ հոգւոյս:

Ո՛չ մէկ փայփայանք կրնայ ինծի տալ  
Քաղցրութիւնն անհուն անոր ձեռքերուն.  
Ինչ որ կը մնայ իմ մէջս դեռ սուրբ,  
Հաւասքն է իմ մօր, հէքեաք անանուն:

Իր արցունքներու բիւրեղէն գուցէ,  
Իմ մէջս ինկան աստղեր երազին,  
Ահա թէ ինչու տղերն այս տեսում,  
Նորէն իր անյայտ համբուն կը նային:

ԵՂԻՎԱՐԴ

•

4734

163-98





## ՀՆԶԵԱԿ ՎԻՈԼԱՆՏԻ ՀԱՄԱՐ



Պէտք է գրեմ մէկ հնչեակ սիկինին վիտանս.  
Իր պահանջը տալնալ կը պահառէ ինծի.  
Տասնըչորս տղ պէտք է որ հնչեակ մը կազմուի.  
Ասեղծեցի դիւրութեամբ ասոնցմէ երեք հաս:


Կը վախճայի գուցէ յանգն ըլլար շատ նեղիչ.  
Բայց քառեակը երկրորդ լրացաւ կիսովին.  
Եթէ ան ինձ կ'ազդէ դեռ երբեակն առաջին,  
Քառեակներն ըսուգիւ չունին վախ տուող ոչինչ:

Կը մտնեմ առաջին երբեակին մէջ այսպէս,  
Եւ կարծեմ թէ նոյնիսկ կը մտնեմ լաւ ձեւով.  
Վասնորոքի այս տղով զայն լրման կ'ընեմ ես:

Կը յուսամ ես այժմիկ երկրորդին մտնելով՝  
Հնչեակին տասներեք տղերը լրացած են,  
Մէկ ալ այս՝ տասնըչորս. վերջացաւ ան արդէն:

Lope de Vega

Թրգմ. Գրանտրեկէ Ն. Ծ.





## ԱՂՔԱՏՆԵՐՈՒՆ ՄԱՀԸ

Մահն է որ մեզ կ'սփոփէ, աւա՛ղ, եւ մեզ կ'ապրեցնէ,  
Ան նրպասակն է կեանքին, ու միմիակ յոյսն է ան՝  
Որ դիւքացուր մը ինչպէս, կ'ոգեւորէ, կ'արբեցնէ  
Եւ սիրս կուսայ փալելու մինչեւ իրկունը օրուան:

Քօղին տակէն փոքորկին ու սառոյցին ու ձիւնին,  
Ան նրբոյլն է քրքուցող հորիզոնին վրայ մըռայլ,  
Ուղեգետինն ցոյց տուած օրեւանն է անուանին՝  
Ուր կարենանք պիտի մենք ուտել, հանգչիլ, քնանալ:

Հրեշտակ մ'է ան որ բարակ մասներուն մէջ հըմայիչ  
Կը պանէ փունն ու շրմորհն երազներու երկնաքօիչ,  
Եւ կը շփէ անկողինն աղփատ ու մերկ բազմութեանց:

Աստուածներու փառքն է ան, շեմարանն է միսքիք,  
Զըփաւորին քրտակն է եւ հընամեայ հայրենիքն,  
Ան դուռն է մեծ անծանօթ երկինքներու վըրայ բաց:

ՇԱՌՒ ՊՈՏԼԷՌ

Թրգմ. Վ.Ա.ՀԱՆ ԹԷՔԷԵԱՆ



## ՀԱԹԱԾ ԶԱՆԳԱԿԸ

Զմեան երկար գիշերներ ի՛նչպէս դառն է եւ անուշ  
Մըսիկ ընել կըրակին մօտ հարնասող, ծըխացող,  
Մեր հեռամասց անցեալին տակաւ յառնելը առ յուշ,  
Ի ձայն զանգին որ կ'երգէ իր բարձունքէն մեծասօղ,


Ա՛հ, երանի՜ զանգակին որուն կոկորդն է ուժեղ  
Եւ որ, տարիքն իր մոռցած, միշտ քաջառողջ ու միշտ ժիր,  
Գիտէ իր կանչն երկիւղած եւ կ'արձակէ զայն անշեղ,  
Զերդ ծեր զինուոր մը հսկող վըրանին տակ՝ անձանձիր:

Մինչ իմ, հաքած է հոգիս՝ եւ երբ կ'ուզէ երգերովն  
Իր լեցընել գիշերուան պաղ մթնոլորտը շուրջի,  
Կը պատահի որ յանախ իր զրկար ձայնը լուսի

Իբր հոքնդիւնը խորունկ՝ վիրաւորի մ'որուն քով  
Կայ արեան լին մ'ու իր վըրայ մեռելներու կան դէգեր  
Եւ կը մեռնի՝ ընելով հոն մեծ նիւեր, աներեր...:

ՇԱՌԼ ՊԱՏԼԷՌ

Թրգմ. Վ.Ս.ՀԱՆ ԹԷԲԷԵԱՆ





## ԲԱՆԱՍԻՐԱԿԵՆ

### Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻԶ

Հանդէս Ամսօրեայ Հայագիտական Ուսումնաթիւթի 1949 տարւոյ Ապրիլ-Դեկտեմբերի միացեալ թիւին մէջ (էջ 1-58) Գեր. Հ. Ն. Ակինեան ընդարձակ յօդուած մը ունի Սուրբ Գրիգոր Լուսաւորչի մասին, «մահուան 1700 ամեակի առթիւ»։ Այդ յօդուածին մէջ ուշագրաւ մի քանի կէտեր կան որոնց պատշաճ է որ անդրադառնանք։

Ա. — Ազաթանգեղոս. — Մեր հնագոյն պատմիչներէն մին է Ազաթանգեղոս. եւ զլիաւոր կենսագիրը Հայաստանեայց Լուսաւորչին։ Անոր անունով ծանօթ մատենանք 226-326 թուականներու հարիւրամեայ շրջանին համար առաջնակարգ աղբիւր մըն է։ Այժմ տեսնենք թէ ինչ կարծիք ունի Գեր. յօդուածագիրը Ազաթանգեղոսի մասին։

1. — Ազաթանգեղոս «չառ անկատար տեղեկութիւն ունեցած է 226-326 տարիներու քաղաքական և եկեղեցական իրադարձութիւններու մասին։ Իր հազարդած տեղեկութիւնները ոչ ակնառտի, ոչ ժամանակակիցի և ոչ ալ մերժամանակակիցի հաւատաւորներ են. ան ոչ միայն ժամանակագրութեան անհմուտ է, այլ և ժամանակի գաղափարին անտեղեկ» (էջ 10)։

2. — «Մենք կը տեսնենք զինքը [Ազաթանգեղոսը] միջամուխ հիմն է վեր բրելու հայոց պատմութեան շէնքը» (էջ 24)։

3. — «Ոչ թէ թագաւորն կամ քաղաքացիքն են զիւարախ մօլեղնոցները, այլ ինքն «Ազաթանգեղոս», որ իր աչքի առջ ունեցած յստակ աղբիւրը մօլեղնաբար կը պղտորէ, ստեղծելու համար եղջերուաքաղներ, անհեղեղ հրէշներ։ Գոնէ կեղծելու արուեստը գիտնար։ Բարեբախտաբար իր անճարակութեամբը պահած է մեզի սկզբնագրէն բառեր, որոնք հնարաւորութիւն կուտան մեզի վերականգնելու բնագիրը գէթ մասամբ։ Թէ հոս սկզբնագիրը զիտմամբ խանդարուած է, ակնյայտնի կը տեսնուի. թագաւորը իր զօրքին որսի ժամ

կուտայ. անոնք որսի շունները կ'առնուն իրենց հետ։ Կը հասնին որսավայրը. կ'արձակեն պառականը «խուճապական կը սրբունն, երազազ, թակարդ կը ձգեն, փառական դաշտի վրայ»։ այս նախադասութենէն ետքը լեռն իմաստ ունի «թագաւորը զեռ նոր կառք նստած քաղաքէն դուրս ելլել կ'ուզէր»... Միւս կողմէ թագաւորը կառքով պիտի մասնակցէր որսին» (էջ 38)։

Վերոգրեալ երեք հատուածներու մասին թոյլ տրուի մեզի ներկայացնել մեր նկատողութիւնները համառոտակի։

1. — Ազաթանգեղոսի մասին հնագոյն հեղինակներ Գեր. յօդուածագրէն բոլորովին տարբեր կարծիք ունին։ Ղազար Փարպեցի զայն կը կոչէ «այր բանիբուն զիտութեամբ» և լի ամենայն հրահանգի, ստուգարան ի կարգադրութիւն ճառից և յարմարագիր ի պատմութիւնս ասացուածի իւրոյ» (էջ 2)։ Խորենացի զայն կը ճանչնայ իբրեւ «աջող քարտուղար Տրդատայ» (Բ. կէ)։ Երբ բաղդատենք Տրդատի, Հովհ. սիմէի և Լուսաւորչի մասին Ազաթանգեղոսի ունեցած ծանօթութիւնները Գեր. յօդուածագրին ընդունած ուրիշ հնագոյն հեղինակներու տուածին հետ, ակնյայտ կերպով կը տեսնենք Ազաթանգեղոսի ճշխութիւնը և զերազանցութիւնը։ Եթէ Ազաթանգեղոսի ունեցած տեղեկութիւնները անկատար են, այդ պարագային միւս հեղինակներուն ունեցածները անկատարագոյն են և աղքատագոյն։

2. — Մենք բնաւ չենք տեսներ միտում մը Ազաթանգեղոսի վրայ հիմն ի վեր բրելու հայոց պատմութեան շէնքը, ընդհակառակը ան հայոց պատմութեան շէնքին ամենէն հոյակապ յուշարձաններէն մին ճարտարապետած է և լուսաւոր պալատի մը մէջ զետեղած է Հայաստանի Լուսաւորչին յաւերժայն կենդանագիրը։ Հայոց պատմութեան շէնքը հիմն ի վեր բրելու ունայնափառ ճիգը ակներեւ չէ՞ արդեօք Ազաթանգեղոսը դատափետել փորձողին վրայ, որ իր բրիչը կը վերցնէ որ մը եղիչէի, որ մը Խորենացիի, որ մը փաւստոսի, որ մըն ալ Փարպեցիի դէմ, և չի քաշուիր իր զոհերը ամբաստանել իբրեւ քանդիչներ, այն բազմաբախտ անձերը, որոնք հայոց անցեալին լուսաւորման հա-



մար իրենց աչքերուն լոյսն են թափեր այնքան անձնուիրօրէն և ազգասիրաբար:

3. — Գեր. յօդուածագիրը կը կարծէ թէ Ազաթանգեղոսն է որ իր աչքի առաջ ունեցած յստակ աղբիւրը մօլեգնաբար կը պղտորէ, ստեղծելու համար եղջերուաքաղներ, անհեղեղ հրէշներ: Ազաթանգեղոսի վրայ այդպիսի մօլեգնութիւն մը չնշմարեցինք մենք: Այդ երեւոյթը սակայն պիտի չվրիպի աչքէն անոնց որոնք կը կարդան «Քաջ քարտուղարին» դէմ այդ ամբաստանութիւնները մրոտողին անարդար տողերը: Իր առջևի աղբիւրները մօլեգնաբար պղտորելու մրցանակը այն միայն կըրնայ չահիլ որ զիտէ «կեղծելու արուեստը», և ոչ թէ Ազաթանգեղոս, որ զուրկ է այդ զիտութենէն: Դաւով որսորդական արշաւանքի մը նախապատրաստութեան, սքանչելի կերպով նկարագրած է զայն Ազաթանգեղոս, այդ նախապատրաստութենէն յետոյ Տրդատ թագաւոր ճամբայ կ'ելլէ իր կառքով, որ Գեր. յօդուածագիրին անհասկընալի մնացեր է, հակառակ անոր որ թագաւորներու կառքով որսի ելլելը ծանօթ իրողութիւն մըն է Ասորեստանի վեհապետներուն օրերէն առնուազն:

Բ. — Հռիփսիմէ. — Ս. Հռիփսիմէի և իր ընկերուհիներուն մասին Ազաթանգեղոսի գրածները չհանելով Հ. Ն. Ակինեան կ'աշխատի ճարել օտար աղբիւրներ: Տեսնենք թէ ինչեր կ'ըսէ.

1. — «Իր [Հռիփսիմէի] մասին ճշգրտյն տեղեկութիւններ կը գտնեմ օտար աղբիւրներու մէջ»: . . . «Գերի կին մը կ'ապրի» մայրաքաղաքի մէջ (էջ 36):

2. — «Թէ ի՞նչ եղաւ Հռիփսիմէի (և Գայիանէի) բախտը Գրիգոր եպիսկոպոսի գալէն ետքը, չգիտենք» (էջ 42):

3. — «Անոնց վկայաբանութիւնը, զոր տուած է մեզի Ազաթանգեղոս, ցոյց չի տար թէ անոնք քրիստոնէութեան համար նահատակուած են, այլ պարզապէս անոր համար, որ Հռիփսիմէ յանձն չէ առած Տրդատի կին ըլլալ» (էջ 32):

Այս երեք կէտերուն շուրջ ևս ունինք զիտողութիւններ եթէ կը ներուի.

1. — Ո՞ւր են ճշգրտյն տեղեկութիւնները: Մայրաքաղաքի մէջ ապրող գերի կնոջ անունը ի՞նչ է: Ո՞րն է այդ

մայրաքաղաքը: Աղբիւր մը որ այս էական կէտերուն մէջ խակ մուծ է, ի՞նչպէս կրնայ նախապատիւ սեպուիլ Ազաթանգեղոսէն, որ շատ աւելի մանրամասնութիւններ կը հաղորդէ Հռիփսիմէի և իր ընկերուհիներուն մասին:

2. — Գեր. յօդուածագիրը չի զիտեր թէ ի՞նչ եղաւ Հռիփսիմէի բախտը Գրիգոր եպիսկոպոսի գալէն ետքը: Ազաթանգեղոս մեզի կը հաղորդէ թէ Գրիգորի դեռ վերապի մէջ գտնուած ժամանակ արգէն նահատակուած էր Ս. Հռիփսիմէ: Բայց թէ ի՞նչ եղաւ անանուն գերի կինը, ա՛յդ է որ չենք զիտեր:

3. — Ազաթանգեղոսի տուած վկայաբանութիւնը կը ցուցնէ թէ Հռիփսիմէ և իր ընկերները քրիստոնէութեա՛ն համար նահատակուած են: Սուրբն Հռիփսիմէ յանձն չառաւ Տրդատի կին ըլլալ, որովհետեւ ինքը քրիստոնեայ էր իսկ Տրդատ կռապաշտ (հմտ. նաև Սոփիերք Դ. էջ 22-24, և 39):

Գ. — Ս. Գրիգոր Լուսաւորիչ. — Հ. Ն. Ակինեան մէկ կողմ նետելով Ազաթանգեղոսը իբրև «անհեղեղ հրէշներ» ստեղծող, կու տայ մեզի նորակերտ Գրիգոր եպիսկոպոս մը: Տեսնենք իր աղբիւրները և անոնց համաձայն յերկրուած Գրիգորի կենսագրութեան կարգ մը զիծերը:

1. — Գեր. յօդուածագիրը կ'ըսէ. «Գրիգորի կենսագրութեան համար կը մնայ մեր ձեռքը միակ աղբիւր Փաւստոսի պատմութիւնը» (էջ 47):

2. — «Գրիգոր ծնած է իբր 190 ին» (էջ 54):

3. — «Տրդատ ուղարկեց պատգամաւորութիւն մը կեսարիա, խնդրելու եպիսկոպոս: Այս պատգամաւորութեան մասնակցած էին 16 զլխաւոր նախարարներ» (էջ 55):

4. — Գրիգոր «վախճանեցաւ 249/250 տարւոյն» (էջ 56):

5. — «Ջարմանալի է սակայն այս ամէնը, անով որ Գրիգորի ոսկորներու յայտնութիւնը Մանայարք լերան վրայ և փոխադրութիւնն ի Թորդան կատարուեցան 490/91 ին, Վահանի մարզպանութեան օրերուն» (էջ 54):

6. — «Հեղինակը [Ազաթանգեղոս]



իրբն Գրիգորի վարդապետութիւն ղետեղած է իր Պատմութեան մէջ Մաշտոցի յաճախապատում Ճառերը» (էջ 12)։

Մենք գուրս թողուցինք Գրիգորի գործունէութեան վերաբերող կէտերը որոնք ընդհանրապէս Ագաթանգեղոսէն առնուած են։ Տեսնենք այժմ այս վեց կէտերը։

1. — Փաւստոսի մէջ Գրիգորի մասին տրուած տեղեկութիւնները ունին իրենց արժէքը, բայց Գրիգորի կենսագրութեան մասին մեր ձեռքը միակ աղբիւր Փաւստոսը չենք նկատեր. վասնզի Փաւստոս տեսած է որ իրմէ առաջ ուրիշներ հանգամանօրէն գրած են Գրիգորի պատմութիւնը ինքը հարկ չէ տեսած զանոնք կրկնելու։ Ուրեմն Գրիգորի պատմութեան մասին մեր գլխաւոր աղբիւրն է և կը մնայ Ագաթանգեղոս, այլ անունով «Գրք Գրիգորիսի» (Փարպ. էջ 1)։ Ասկէ զատ ունինք Յ. Ոսկերեքանի հրաշալի ներքողեանը «Յաղագս վարուց և նահատակութեան Ս. Գրիգորի Հայոց Մեծաց Հայրապետի», որ պատմական շատ մը գիծերու մէջ համընթաց է Ագաթանգեղոսի և կը հաստատէ վերջինին տեղեկութեանց ճշգրտութիւնը։

2. — Գրիգորի 190 թուականին ծնած ըլլալը զուրկ է ապացոյցներէ և հակառակ պատմութեան ընդհանուր կազմին և զընացքին։

3. — Կեսարիայէն ուէ եպիսկոպոս մը խնդրելու համար 16 գլխաւոր նախարարներու պատգամաւորութիւն մը կը կարծենք թէ շատ է. իսկ բնական և վայելուչ կը դառնայ նման փառաշուք պատգամաւորութիւն մը ընկերանալու համար մեր ճանչցած պարթևաղն և քաղմաշարչար և հրաշագործ Գրիգորին, զոր կը պանծացնէ Ագաթանգեղոս իրաւամբ։ Չմոռնանք նաև որ ուրիշ առիթներով ալ նման պատգամաւորութիւններ իրենց հետ կը տանին ընտրեալ թեկնածուն։

4. — Գրիգորի վախճանման իբր թուական նշանակուած 250 տարին ալ չի հաշտը իր պատմութեան ընդհանուր կազմին հետ, ինչպէս անհաշտ կը մնար անոր ծննդեան համար նշանակուած թուականը։

5. — Գրիգորի նշխարները գտնուեցան իր մահէն 2-3 տարի վերջ և փոխադրուեցան Թորգան (հմտ. Ագգպ. յօդ. 96)։ Այդ նշխարներու յիշատակութիւնը Ե. զա-

րու կիսուն, Փարպեցիին կողմէ, ծանօթ է Գեր. յօդուածագրին (էջ 54), Գրիգորի Թորգանի մէջ թաղուած ըլլալուն համար է որ հոն կը թաղուին նաև Տրդատ, Արիստակէս, Վրթանէս և Յուսիկ։ Ուրեմն այստեղ ոչինչ կայ զարմանալի, այլ բոլորովին բընական է և հասկնալի։ Բայց կայ յիշաւի զարմանալի բան մը, այն է թէ Գեր. յօդուածագիրը կարեւորագոյն աղբիւրները եւ անոնց հարազատ իմացումները թողած կը հետևի 1316ին ընդօրինակուած Ժողովածոյքի մը, որմէ կ'իմանայ թէ նշխարաց գիւտը տեղի ունեցած է Վահան Մամիկոնեանի և Ջենոնի ժամանակ։ Այդ օրերուն տեղի ունեցած գիւտը կը վերաբերի Լուսաւորչի թողան Գրիգորիսի (հմտ. Ագգպ. յօդ. 346)։ Ժողովածոյքը կազմողը չփոթ պատմութիւն մը տուած է, որուն հետեւելով յարգելի յօդուածագիրն ալ ինկած է զինքն իսկ զարմացնող հակասութեանց թոհուրոհին մէջ։

6. — Եթէ յաճախապատում Ճառերը Մաշտոցինն էին, ինչու հապա Ե. զարու հայ գրողները դիտողութիւն մը չէին ըրած այդպիսի կոպիտ սխալի մը կամ աղաղակող խարդախութեան մը գէմ։ Գեր. յօդուածագրին այս հաւաստումն ալ խախտու է հիմնովին։

Դ. — Եկեղ. Գաւազանագիրք. — Հ. Ն. Ակինեան տքնաջան պրպտումներով կարգաւորած է հետեւեալ նորանշան Եկեղ. Գաւազանագիրքը.

Գրիգոր	ամս	Լ.	219-249
Մեհրուժան	»	Է.	250-257
Վրթանէս	»	ԺԵ.	258-272
Գրիգորիս	»	ԺԷ.	272-289
Յուսիկ	»	Ձ.	289-294
Փառներսեհ	»	Դ.	294-297
Արիստակէս			298-338
Ներսէս	»	ԼԴ.	338-372

Չոնակ (Մահակ) հակաթ.

Յուսիկ Բ. 373-374 (էջ 27)։

Մեր բոլոր Գաւազանագիրքերուն մէջ Արիստակէս անմիջապէս յաջորդած է Գրիգորի, նոյնիսկ իր հօրը կենդանութեան աւոր գործակից ըլլալով։ Գեր. յօդուածագիրը — առանց հայոց պատմութիւնը հիմն ի վեր բրելու մտադրութեան! — Գրիգորը հե ի հե փոխադրած է Մեհրուժանէն ալ



## ԽՈՐԵՆԱՑԻ, ԵՂԻՇԷ

ԵԻ

### Հ. ՆԵՐՍԷՍ ԱԿԻՆԵԱՆ

Ա. ՄԱՍ

### ԽՈՐԵՆԱՑԻ ԵԻ Հ. ԱԿԻՆԵԱՆ

1

Հ. Ն. Ակինեան, Վիեննայի Մխիթարեան միաբան, քաջածանօթ դէմք է հայ բանասիրական աշխարհի մէջ:

Դրեթէ քառասուն երկար տարիներէ ի վեր ան տքնաջան կ'արտագրէ: Վիեննայի Մխիթարեան տպարանի վերջին գրացուցակը զինք կը ներկայացնէ որպէս հեղինակը քսան երեք մեծ ու պզտիկ աշխատութիւններու:

Ան կը գրէ չոգեպինդ արագութեամբ և առանց դադարի, և իր գրութիւնները ուսումնասիրելուդ այն տպաւորութիւնը կը ստանաս թէ այս անխոնջ Հայրը տէրն է ինքնաշարժ գրչի մը, որը համբերատար սպիտակ թուղթի անխոնջ մակերեսին վրայէն այնքան սրնթաց կ'ընթանայ, որ յաճախ — դժբախտաբար շատ անգամ — իր միտքը կարծես չի կրնար հասնիլ իր գրչին ետեւէն:

առաջ, և հօրը ու որդիին միջև տեղ բացած է հինգ աթոռակալներու: Այս հերթիւնեան ճիգը սակայն չենք կարծեր թէ յոգնեցուցած ըլլայ այդպիսի ըմբռնական մարզանքներու վարժ իր բազուկները: Այս կերպով Արիստակէս հայրապետը իր հօրը մահէն 50 տարի վերջ միայն կաթողիկոս կ'ըլլայ, երբ արդէն 92 տարեկան ծերունի մը դարձած ըլլալու էր, և 40 տարի կաթողիկոսութիւն կ'ընէ... կարծենք աւելի գրելու պէտք չկայ, հաստատելու համար թէ այս Գաւազանացանկը իսպառ հակապատմական է և բանասիրական ոչ մէկ արժէք կը ներկայացնէ:

ՆՈՐԱՅՐ ՎՐԴ. ՇՈՎԱԿԱՆ

Ասիկա թերևս տանելի ըլլար գրական ուրիշ մարդերու մէջ, բայց բանասիրութեան — մանաւանդ հայ բանասիրական ասպարէզի մէջ — պէտք է լինէր ճիշդ հակառակը: Ծրջահայեաց զգուշաւորութեամբ իր քայլերը չափող մտքին՝ գրիչը հետեւելու էր ալ աւելի չափափուն և կըշռադատուած քայլով:

Թերթեցէք վերջին քանի մը տարիներու «Հանգէս Ամսօրեայ»ները և կը տեսնէք թէ իւրաքանչիւր թիւին գրեթէ երեք քառորդը առանձինն կը լեցնէ Հ. Ակինեան:

Շեշտեցինք հայ բանասիրութիւնը, և իրաւացիօրէն: Հայ ժողովուրդի պատմութեան — քաղաքական, ընկերային, եկեղեցական և մշակութային — վերաբերեալ խնդիրները խիստ բարդ են: Առեղծուածային հանգոյցներ կը զիմագրուեն քեզ, կնճիռներ, որոնք եթէ իրարու չհակասեն իսկ, միոյն կամ միւսին տրամաբանական լուծումը կը բարդացնեն և կը ստիպեն, որ բանասէրը առատ ուղեղի քրտինք թափէ, ճակատի և գրչի քրտինքէն առաջ, որպէսզի կարենայ ըստ կարելւոյն ամենահաւանական, եթէ ոչ ճշգրիտ, եզրակացութեան մը յանդի տրուած հարցի մը մասին:

Բազմադարեան ժամանակաշրջան մը ունինք, գէպքերով, դէմքերով և շարժումներով լի: Մեր դասական մատենագիրներու ձեռագիրները, դարերու ընթացքին բազմահազար ընդօրինակողներու ձեռքերէն անցած ըլլալով, չունին բաղձացուած այն կատարելութիւնը, որը բանասէրին աշխատանքը մի քիչ թեթեւեղէր: Հետեաբար, եթէ բանասէրը կ'ուզէ որ հայ բանասիրութեան իր տալիք լուծման արժէք մը ներկայացնէ, արթնամիտ զգուշութիւնը խստապահանջ առաջնորդ պարտի ունենալ իրեն, և ամէն բանէ վեր, պէտք չէ աճապարէ, նոյնիսկ երբ «նոր» գիւտ մը ըրած է, որը միւս բանասէրներու մատ խածնել պիտի տայ:

Հ. Ներսէս Ակինեանի, որպէս բանասէրի, ի մասնաւորի Մովսէս Խորենացիի և Եղիշէի վերաբերմամբ, մեր այս գրութիւնը, որ խոստացած էինք. 1945 թ. (տես Հայրենիք Ամսագիր, 1945, Յուլիս-Օգոստոս), ուշացուցինք սպասելով իր Եղիշէի մասին գրած երկու հատորներու յաջորդ (և վերջին) գրքին: Սակայն ցարդ սոյն հա-



տորը լոյս չէ տեսած: Իսկ «Հանդէս Ամսօրեայ» 1947 Հոկտեմբեր-Դեկտեմբեր համարին մէջ Խորենացիի նոր աղբիւր մըն ալ գտած ըլլալու պարագան առիթ կուտայ որ մեր խանար կարծիքը յայտնենք Հ. Ակինեանի վերոյիշեալ երկու մատենագիրներու մասին կատարած մտամարզանքին և անոր ի յայտ բերած բանասիրական մեթոտին:

Հայ ապրող բանասէրներու մէջ Հ. Ակինեան թերևս ամենէն շատ կարդացուած անձն է: Հարիւրաւոր հատորներու լէջերուն վրայ աչքի լոյս թափեր է, պրպտեր, քններ, նոթադրեր է ապշեցուցիչ առատութեամբ: Իւր միտքը նմաներ է ընդարձակ շտեմարանի մը, որ մինչև առաստաղի անկիւնները լեցուեր է պատմագիտական տեղեկութիւններով:

Սակայն ինչ որ ճիշդ է խճողուած շտեմարանի պարագային, ճիշդ է նաև ծանրաբեռնեալ մտքին: Ուր առարկաները դէպ զէպ վրայ կուտակուեր են, յորդած են նրբանցներուն, շարժելու տեղ չձգելով, և ուզուած առարկայ մը փնտռելու շատ մը ուրիշներ առեր դրեր են մինչև փնտռածը գտնելը: Կարգով կանոնով շարագասելու այլևս ոչ ժամանակ և ոչ ալ միջոց կը մնայ:

Խնդրոյ առարկայ երկու մատենագիրներու հանդէպ Հ. Ակինեանի գործադրած մեթոտը այնքան ցայտուն կերպով կը յայտնէ այս պարագան: Եւ կարդալուց կ'աւաղես թէ զրոյր փոխանակ իր վերլուծական ջանքերը կեղծոնացնելու միմիայն առաջադրած նիւթին, պատմական անձի մը կամ տեղւոյ մը անունը յիշելուն կը յամենայ այդ անձի կամ տեղւոյ մասին զիտցածները ըսելու: Գլխաւոր ճանապարհի երկայնքին կ'ախորժի երկրորդական և կողմնակի արահետներուն արագ պտոյտ մը տալ: Իր գրելու սրարշաւ ընթացքին նոր նոր գիւտեր կ'ընէ, որոնք նոր շեղումներու տուն կուտան:

Այս այնքան ալ ծանրակշիռ չհամարուէր և թերևս նկատուէր որպէս հետաքրքրական անհատական յատկանիշ մը, որ խսկատիպ դրոշմ մը կրնայ տալ հեղինակի գրելակերպին, առանց զգալիօրէն խաթարելու իր բանասիրական և գիտական լուրջ վերլուծումները:

Սակայն այդպէս չէ եղած գոնէ Խո-

րենացիի և Եղիշէի մասին իր աշխատասիրութեանց մէջ: Առաւելապէս այս երկու գործերու մէջ Հ. Ակինեան կը յայտնաբերէ բանասիրական իւրաքանչեւ մեթոտ մը, որ հեռու է գիտական ըլլալէ, որուն համար կը տատամսիմ նոյնիսկ մեթոտ բառը գործածելու, քանզի մեթոտը տրամաբանական օղակաւորումով կարգ կանոն մը կ'ենթադրէ: Ուրիշ բառ մը չգտնելու պիտի գործածեմ մեթոտ բառը:

Իր նախորդ քանի մը տասնեակ տարիներու մատենագրական աշխատութեանց արժանիքներուն վրայ մօայլ ստուեր մը կը ձգէ վերոյիշեալ մեթոտը. և այս աւելի քան ցաւալի է: Քանզի Հ. Ներսէս Ակինեան բազմապատակ մշակ մըն է, որուն ըսածն ու գրածը ամենայն ուշադրութեամբ կը սիրենք ի մօի առնուլ. մանաւանդ երբ Խորենացիի և Եղիշէի նման հայ բանասիրութեան ամենալուրջ երկու կնճոտ խնդիրներու մասին կը խօսի, և կը խօսի բուրովին նոր և շատ շատերու համար անակնկալ և արմատական բաներ:

Մեր դասական գրողներէն առաւելապէս Խորենացիի և յետոյ Եղիշէն բանասէրէն և ուսանողէն կը պահանջեն զգուշաւոր և լուրջ վերաբերում: Պիտի քննենք զանոնք, պիտի վերաքննենք, պայմանաւսկայն մեր աշխատանքը հիմնուի գիտական հողի վրայ:

Մեթոտը, որ Հ. Ակինեան յարմար դատած է ընտրել հեռու է գիտական ըլլալէ և եթէ շարունակուի կամ հետեւողներ ունենայ աղիտաբեր կրնայ ըլլալ հայ պատմագրութեան համար: Աղիտաբեր բառը գործածելի երկար մտածելէ վերջ, եւ քիչ յետոյ պիտի տեսնենք թէ ան ոչ միայն տեղին է այլ թերևս իրեն ընկեր ունենալու էր չարաբաստիկ բառն ալ:

## 2

Իւր տարիներու մատենագրական աշխատանքները յախուռն անձնավստահութիւն մը տուած են Հ. Ակինեանին, և ասով է որ կարելի է բացատրել այն բացասական յատկանիշները որոնք կը վարեն իր վերլուծումի մեթոտը:

Այս յատկանիշներն են, անհամբեր արագութեամբ գրել, որ պատճառ կ'ըլլայ



հակասութեանց մէջ իյնալու: Երբեմն այնպիսի անհաճոյ հակասութիւն, որ ընթերցողին զարմանք կը պատճառէ, իսկ պատմադրական ուսանողի մը շփոթ և կակիծ:

Յետոյ ան կը սիրէ ենթադրութիւններ ընել: Ենթադրութիւնը անպայման յոյժ օգտակար է բանասիրական մարզի մէջ: Բայց Հ. Ակինեանի ենթադրութիւններէն ոմանք մէկը մէկու կը հակասեն: Ինչ որ աւելի տարօրինակ է, ենթադրութեամբ, «ամենայն հաւանականութեամբ» կամ «ինձ կը թուի»ով յղացուած միտք մը, շատ չանցած արդէն իրեն համար համոզում դարձած է, եղած է իրողութիւն մը, և հիմնուած նման «իրողութեան» վրայ պատմական գծուարին հարցի մը շուրջ վճիռ կը կայացուի:

Ապա Հ. Ակինեան կը սիրէ տեսութիւն մը կամ վարկած մը իւրացնել և անկէ վերջ անտեղիտալի յամառութեամբ, երբեմն կամայական, յաճախ բռնազբօսիկ փաստարկութիւններ յառաջ կը քէ, որպէսզի կանխակալ այդ տեսութիւնը իր զետեղած պատուանդանին վրայ ամուր կանգնած տեսնէ: Նոր կօշիկ մը գտնելէ վերջ կ'ուզէ ոտքը կօշիկին յարմարցնել և եթէ հարկ տեսնէ չտատամսիր պզտիկ տաշուներ ընելու ոտքէն որպէսզի ան յարմարի կօշիկին:

Կամայական իր մարզանքները Խորենացիի պարագային դժբախտաբար, քինախնդիր, գրեթէ անարգական շեշտով մըն ալ կը կէտկիտէ: Կարծես խեղճ Մովսէսի դէմ անձնական ատելութիւն մը ունի: Միտն Յ. Տաղբաշեան գիրք մը գրած ունի, Փաւստոս Բիւղանդացի եւ իր Պատմութեան խաղախոյր (Վիեննա, Միլիթարեան Տպարան, 1898): Այս անձը վրէժնորդական ատելութեամբ մը կրնայ գրել. «Առ այժմ մենք Խորենացու ցնդաբանութիւնները մէկ կողմ թողնենք» (էջ 13: Կամ, «... Ահա մի նոր ապացոյց մեր զառամեալ պատմաբանի անբարեխղճութեան և այն ողորմելի հասկացողութեան մասին որ նա ունի պատմութեան վրայ» (17), կամ, «... Նոյն կեղծիքն է անուամ Խորենացին» (20), կամ, «Այս ծերունին որչափ խարդախ, նոյնչափ միամիտ է» (47), և այլն, և այլն:

Բայց ի՞նչպէս կարելի է հաւատալ որ Հ. Ակինեան կրնայ իրեն թոյլատրել Խո-

րենացիի դէմ ամենադոյզն անարգական արտայայտութիւն մը իր բանասիրական ուսումնասիրութեանց մէջ: Միթէ ե՞ս Հ. Ակինեանին յիշեցնելու եմ հոռմէական հիւստածը. «Այն ինչ վայել է եղին, վայել է Արամազդին»:

Ի՞նչ գոհացում կարող է ստանալ զիտնական բանասէր մը իր ժամանակէն հազար կամ աւելի տարիներ առաջ մեռած հեղինակի վերաբերմամբ գործածել բանագող, Բաղրատունիներու կապարճակիր կամ խնկարկու արհամարհական արտայայտութիւնը: Ո՞ւր կը հասնինք եթէ ես կամ ուրիշ մըն ալ ելլենք Փաւստոսը, Փարպեցին և Եղիշէն կոչենք Մամիկոնեաններու կապարճակիրները: Եւ ես թերեւ աւելի հող ունենամ այդպէս կոչելու դանոնք, երբ նկատի առնենք որ սոյն երեք պատմիչները որքան մոլեռանդ և լորձնաշուրթն փառաբանողներն են Մամիկոնեաններու:

Յետոյ բոլորովին անբացատրելի, չըսելու համար անհեթեթ բան մըն է տեսնել թէ ինչպէս Հ. Ակինեան, որ Ղևոնդ և Խորենացի միեւնոյն անձն է կ'ըսէ, Ղևոնդի հանդէպ այնքան համակրանք ունի, իսկ Խորենացիի անձին դէմ արհամարհանք: Միթէ միեւնոյն անձը թէ չար է և թէ բարի: Վախճամ Այո՛ պիտի պատասխանէ և որպէս ապացոյց յիշէ վիպասան Սթիվընսընի «Տաբբը ձեֆիլ եւ Մըսթըր Հայս» վիպակը:

Հ. Ակինեանի մեթոտին ուրիշ մէկ յատկանիշը, մանրամանր և երկարապատում քննութեան ենթարկել երկրորդական կամ երրորդական կարեւորութիւն ներկայացնող դէպք մը կամ նախադասութիւն մը, և անկէ հանած արդիւնքը յարմարցնել գլխաւոր նիւթին: Այս մէկ պարագան սակայն յատուկ է միայն Հ. Ակինեանին:

Ատենօք շատ շատեր տարուեցան այս մանրախուզութենէն, որ համաճարակի մը համեմատութիւնները ստացաւ և ծանօթ է որպէս Hypercriticism: Մենք քանի մը տարի առաջ բանասիրական այս երևոյթը կոչած էինք Sbruttamento: Տերեւը բարակ մաղերէ անցնել և անոր այսպիսի մանրամանր քննութենէն ձեռք բերուած արդիւնքով ծառին բունն և արմատը կը շաղկատել, առանց այդ բունն ու արմատը ենթարկելու նման քննութեան:



Մեր մէջ Hypercriticism-ի կամ Տերեւաւադուլթեան կարեւորուն ներկայացուցիչները կը հանդիսանան Գր. Խալաթեանց և իրմէ վերջ չ. Ակինեան:

Կը մոռցուի սակայն որ գրեթէ յիսուն տարի առաջ Hypercriticism-ը որպէս նորաձեւութիւն կորսնցուց իր թափը և այժմ բոլորովին մէկդի ձգուած է գիտնականներու կողմէ:

## 3

Ի սկզբան որոշած էինք չ. Ակինեանի Խորենացիի և Եղիշէի մասին յայտնած կարծիքները կամ եզրակացութիւնները քննել և յայտնել մեր խորհրդածութիւնները որպէս պատասխան:

Սակայն երբ ուսումնասիրեցինք իր երկու գրքերը, առաջին Մասեմագրական Հետազոտութիւններ, Հատոր Գ. 1930, երկրորդ, Եղիշէ վարդապետ եւ իւր Պատմութիւն Հայոց Պատերազմին, Հատոր Ա. 1932, Հատոր Բ. 1936, և ծանօթացանք իր մեթոտին և անոր վերոյիշեալ յատկանիշներուն, հրաժարեցանք մեր սկզբնական որոշումէն:

Հարկ չտեսանք հակաճառելու չ. Ակինեանին քանզի իւր իսկ գրքերը առատորէն կը հայթայթէին իր այնքան տքնաջան աշխատանքով բարձրացնել ջանացած կառուցուածքը խաթարող, իւր փաստարկութիւնները անդամալուծող զէնքեր: Վերը յիշածս բացասական յատկանիշներուն ամէնն ալ խանգարեր էին չ. Ակինեանի տեսութեանց այնքան հապճեպօրէն իրարու ագուցուած կապերը, առկա եւ աննկատելի ձգելով իր նոր գիւտերը որպէս սոսկական ենթադրութիւններ և ոչ աւելի:

Մենք պիտի բաւականանանք իր իսկ գրքերուն մէջէն վերոյիշեալ յատկանիշները ցուցադրող մէջբերումներ ընելու, այն խորին համոզումով որ առաջինը ինքը չ. Ակինեան, վերաքննէ իր գրածները, և ապա եթէ տակաւին միևնոյն հիմնական տեսութիւնները ունի, մեզի տայ իր վերլուծումը և փաստարկութիւնները աւելի յստակ և իրերամարտ հակառակութիւններէ մաքրուած գրութեամբ:

Ինծի համար սիրելի աշխատանք մը է այս, բայց կը լծուիմ անոր որովհետեւ

այլեւս չ. Ներսէս Ակինեան իր այս գրութիւններով հայ պատմագիրները և հայ բանահիւսութիւնը շփոթութեան կը մատնէ: Վստահ եմ որ նման արդիւնք մը բազմաճիւղաւոր Հայրը մտքէն իսկ չէր անցուցած, բայց իր գրելու անխնամ ձեւը, իր ըրած գիւտերու կամ նոր ենթադրութիւններու առթած չափազանց խանդավառութիւնը, և իր աճապարանքը զինք առաջնորդած են անել ճամբու մը, ուր ան իր ետեւէն կ'ուզէ տանիլ հայ բանասիրութիւնը, ինչպէս այն կարելի է կռահել դատելով իր կշտամբական և ծաղրական արտայայտութիւններէն այն բանասէրներու հանդէպ որոնք «ի խոր քուն» են:

Վերոյիշեալ երկու գրքերը ուսումնասիրելուդ ակամայ կուգաս այն եզրակացութեան թէ չ. Ակինեան որպէս բանասէր յամառ թշնամի մը ունի, և ան է չ. Ներսէս Ակինեան:

## 4

Այժմ հետեւինք իր ցուցմունքներուն Մովսէս Խորենացիի մասին:

Դուն և ես տարիներէ ի վեր հե ի հե հետեւած էինք Խորենացիի ժամանակի շուրջ յարուցուած փոթորիկին: Առաւել կամ նուազ չափով ջղայնացած գիտնականներ մեծ պատմագիրը Հինգերորդ դարէն դուրս հանած կը տանէին հոս հոն: Այս տարի Վեցերորդ դար, յաջորդին՝ Եօթներորդ, միւսին՝ Ութերորդ, յետոյ Իններորդ: Եթէ Տասներորդ դարու մատենագիրները յիշած չըլլային Մովսէսը, հոն ալ պիտի տանէին զինք և, փառք մարդկային մտքի ճկունութեան, «փաստեր» ալ պիտի գտնէին իրենց պնդածին կուռան հայթայթելու:

Այլեւս յաջորդող բանասէրներու համար ասպարէզը կը նեղնար: Անոնք որ մարմաջը ունէին նոր բան մը ըսելու եւ Խորենացիի նոր թուական մը տալու, բայց հաւանական չորս դարերը արդէն գրաւուած էին, և որովհետեւ անոնցմէ անդին չէին կրնար երթալ, տխուր հարկին տակ պիտի ըլլային սոսկ կրկնելու արդէն ըսուածները:

Խորենացիի պարագային չ. Ներսէս Ակինեան կուգար բոլորովին անակնկալ նոր բանը ըսելու իր գրքին մէջ:

Յոգնաջան Հայրը կ'ըսէր թէ Խորենա-



ցիւր Պատմութեան հեղինակը Մովսէսը չէ, այլ Ղևոնդ երէց, որ իւր կարգին ծանօթ է որպէս հեղինակը Արարական տիրապետութեան շրջանի Հայաստանի պատմութեան, 150 տարուայ պատմութիւն, 640 թուականէն մինչև 789: Որով մեզի ծանօթ այս երկու Պատմութիւններու հեղինակը մէկ անձ էր, Ղևոնդ:

Երկու գրքերու իւրաքանչիւրին ոճին ակնբախ տարբերութիւնը միւսէն, Խորենացիի գեղաճաշակ, կուռ և բարձրագոյն մշակոյթի մը տուեալներով թրծուած մշտքին դիմաց՝ Ղևոնդի համեստ գրական ձիրքը, կը խորհիս թէ անյաղթելի դժուարութիւն պիտի յարուցանէ:

Ոչ Հ. Ակինեանի համար:

Գրքին Յառաջարանին մէջն իսկ կը լուծէ խնդիրը:

Ա. Զօպանեան «Անահիտ»ի մէջ մատնանշելով մեր յիշած դժուարութիւնը զբւժեցնէր. «բայց կայ կարեւոր կէտ մը որ կը դժուարացնէ (երկու հեղինակներու) նոյնացումը. ի՞նչպէս սեղմեցնել Ղևոնդի գրական նիհար անձնաւորութեան մէջ քաղմաձև, հոյակապ գրագէտի այն գեղասէր, հելլէնապաշտ, գիւցազնապաշտ կրակոտ և արուեստագէտ խառնուածքը, հզօր ու ջերմ հայրենասէրի այն ճոխ ու ցցուն անհատականութիւնը որ Խորենացիի անունով ծրարուած խորհրդաւոր գրողին է. Ղևոնդ ժամանակագիր մըն է, մինչ Հայոց Պատմութեան, Հախիսիմեանց, Վարդափառի ձառերուն հեղինակը, քաղմաթիւ գործերու հմուտ թարգմանիչը, մեր հին մատենագրութեան ամենէն մեծ բանաստեղծներէն և ամենէն ծաղկեալ մտքերէն մին է»:

Հ. Ակինեան անմիջապէս կը պատասխանէ.

«Ամէն հասակ ունեցած է իւր տխրեղծ տարիքը, ամէն մեծութիւն՝ իւր մանկութիւնն ու երիտասարդութիւնը: Եթէ Ղևոնդ երիտասարդական հասակին կրցաւ հիւսել իւր Պատմութիւնն այնքան վայելչօրէն, կը յուսացնէ թէ զարգացած տարիքին մէջ պիտի նիւթէր աւելի հոյակապը, աւելի մեծ վայելուչը» (Յառաջարան, էջ Գ.):

Ուրեմն պարզ է Հ. Ակինեանի բացատրութիւնը: Ղևոնդ Արարական շրջանի պատմութիւնը գրեց երիտասարդ հասա-

կին, իսկ երբ ծերացաւ, գրեց աւելի հոյակապ և մեծ վայելուչ ոճով:

Այս բացատրութեամբ, Հայրը կ'ընդունի Ղևոնդի ոճին ակնբախ տարբերութիւնը Խորենացիի ոճէն: Երկու մատենագիրներու ոճերուն այս զանազանութիւնը թէև իր միտքը կը չարչարէ, բայց հաւատարմ ձև մը կը դնէ պարտկելու զայն, թէև երբեմն ընթերցողը մութի մէջ է ըսածին նշանակութիւնը հասկնալու:

Յառաջարանէն զատ գրքին մէջ ալ քանիցս կը խօսի այս հարցի մասին, որոնցմէ մէկը հոս արձանագրենք, քանզի տակաւին առիթը պիտի ունենանք երկու պատմադիրներու լեզուի և ոճին մասին իր ըսածներու քաղմահանգոյց բացատրութիւններուն անդրադառնալու:

Կը գրէ Հ. Ակինեան. «Լեզուն և ոճը Ղևոնդի քով աւելի կենդանի է և պատկերաւոր, երիտասարդական խանդն է հոն արտայայտուողը. մինչ Մովսէս ծերութեան ալիքով ծաղկած, աւելի խոհական ոճով, աւելի պերճաբան լեզուով կը ջանայ արտայայտութիւն շնորհել իր մտածմունքներուն... հասակի տարբերութիւնը և իբրեւ պերճաբան վայելելու ձգտումը յառաջ բերած է երիտասարդ Ղևոնդի և ծերունագարդ Մովսէսի մէջ զանազանութիւն ոճից և լեզուի»:

Մինչև հոս լաւ. բայց անմիջապէս կ'աւելցնէ հեռեկալ շուարեցուցիչ և անհասկնալի բառերը. «Բայց մէկ խմորով զանգուած է ամբողջութիւնը, մէկ է բառագանձը, մտքերը մարմնաւորելու հանդերձանքը» (187):

Հ. Ակինեան ի՞նչ կ'ուզէ որ հասկնանք վերջին երկու տողէն: Եթէ երկու գիրքն ալ մէկ խմորով զանգուած է, եթէ երկուքին բառագանձը մէկ է, և նոյնն է մրտքերը մարմնաւորելու հանդերձանքը, գրող մը կրնա՞ր աւելի ազգու եղանակաւ ըսել թէ երկու գրքերուն ոճը միևնոյնն է: Այլ ի՞նչ ոճի և լեզուի զանազանութեան մասին է որ կը խօսի Ղևոնդին կենդանի և պատկերաւոր, Խորենացիին խոհական և պերճաբան:

Միթէ՛ կարելի՞ է ուրիշ եզրակացութեան յանդիլ քան այս կանխակալ մտքով թէ հեղինակը որոշած է Ղևոնդ և Մովսէս միևնոյն անձը համարել, և ստիպուած



այսպէս պատէ պատ կամայական բացատրութիւններ տալու ապերախտ աշխատանքին կը լծուի:

Հ. Ակինեան, «մէկ է բառապանծը», ապացուցանելու համար իր գրքի 16 էջերու մէջ կը գետեղէ 103 բառեր ըսելով թէ, «պիտի ամփոփեմ այս բաժնի մէջ այն տեղիքները, ուր երկու հեղինակները կ'արտայայտուին միեւնոյն բառերով» (187):

Այս բառերուն մեծամասնութիւնը սակայն Ս. Գրքէն են, և մատչելի ուրիշ հեղինակներուն ալ, եթէ սա ապացոյց պիտի զօրծածուէր իր այնքան լուրջ համոզման թէ երկու հեղինակները միեւնոյն անձն են, ինչը կ'արգիլէ զինք Ղեւոնդը նոյնացնել ուրիշ մատենագիրներու հետ ալ, որոնց գրութեանց մէջ նման բառեր շատ պիտի գտնէր:

Բաղդատութեան համար էական է երկու հեղինակներու ամբողջական՝ բառացանկը նկատի ունենալ, իսկ ամէն բանէ վեր՝ իւրաքանչիւրին ոճը:

Բայց աւելի զարմանալին կայ Ղեւոնդի ոճի մասին Հ. Ակինեանի արտայայտութեանց: Պահ մը մոռնա՞ք Խորենացին:

Գիտարար Հայրը կը յայտնէ թէ Ղեւոնդ իր Պատմութիւնը մէկ անգամէն ալ չգրեց: Այլ երկու անգամով: Առաջին մասը որ գրքին Ա-ԼԳ գլուխները կը կազմէ, Ղեւոնդ գրի առաւ հաւանորթ 774 թուականին: Յետոյ սպասեց տասնվեց տարի և 790ին գրեց մնացածը:

Մենք յետագային կը քննենք Հ. Ակինեանի այս յայտարարութիւնը, այժմ գոհանանք միմիայն յիշելով իր հետեւեալ միտքը.

«Թէ լեզուն և թէ պատմելու ոճը զգալի կերպով կը փոխուին յաջորդ մասին մէջ, ուր պատմիչը աւելի հասուն տարիքի մէջ կ'երևայ և գէպքերուն ի մերձաւոր ժամանակակից և հանդիսատես» (63):

Տրամաբանօրէն կ'ակնկալես որ Հ. Ակինեան աւելցնէր նաև թէ, այսպիսով տասնվեց տարի վերջ գրուած երկրորդ մասի լեզուն ու ոճը աւելի նմանութիւն ունի Ղեւոնդ - Խորենացի Պատմութեան ունին: Այդ չընենք, նոյնիսկ, բաղդատական յարմար կամ անյարմար մէջբերումներու սիրահար Հայրը, Ղեւոնդի գրքին առաջին և երկրորդ մասէն մէջբերումներով ցոյց չտար զգալի փոփոխութիւնը լեզուի և ոճի:

ՀՐԱՆԴ Բ. ԱՐՄԷՆ

(Շարունակելի՛ 1)

## ՊԱՏՄԱԿԱՆ

ԿԻԼԻԿԵԱՆ ԱՄՐՈՑՆԵՐ

ՀՌՈՍԿԼԱՅԻ ԴՂԵԱԿ

(Շարունակելու՝ Սիոն, Մայիս 1950, էջ 150)

Շնորհալի մահէն յետոյ իրեն յաջորդեց իր աւագ եղբորորդին, միշտ Պահաւունի տոհմէն, Տ. Գրիգոր Ի. Տղայ՝ որ պատանի հասակէն Հոռմկայի կաթողիկոսութեան մէջ մեծցած և իր կաթողիկոս հորեղբայրներուն առաջնորդութեամբ ստացած էր եկեղեցական բոլոր աստիճանները: Նախորդին օրով Կ. Պոլսոյ բիւզանդական արքունիքին և ասոր կողքին եղող պատրիարքարանի կողմէ սկսած «Միութենական» զիմուժը իր օրով ալ կրկնուեցաւ Մանուէլ կայսեր կողմէ հասած նոր նամակով մը: Գրիգոր կաթողիկոս տեղեակ ըլլալով իր նախորդին օրով Կ. Պոլսոյ և Հոռմկայի միջև կատարուած բանակցութիւններուն, ինքն ալ հետեւեցաւ անոր քաղաքովար՝ բայց զգուշաւոր ընթացքին:

Մեր ազգային եկեղեցւոյ պատմութեան մէջ «Միութենական» խնդիրը պէտք եղածէն շատ աւելի ընդարձակ տեղ է զբաւած, տրուած ըլլալով իր կարեւորութիւնը, խնդիր մը որ տակաւ բարդանալ սկսաւ յաջորդ դարերուն վատիկանի բռնած ուղղութեամբ: Ըլլա՛յ Արեւելեան Հայաստանի ըլլա՛յ Կիլիկիոյ աշխարհագրական դիրքը, իրր կրկին ճանապարհներ եւրոպայի և Ասիոյ միջև, անձանօթ չըլլալով հայկական արքունիքներուն և սոսնց կողքին ապրող ու գործակցող կաթողիկոսներուն, միշտ որդեգրել պարտաւորած են իրատես ու զգուշաւոր ընթացք մը, առանց հեռանալու անվստահութենէ մը ակնկալուած յոյսերէն. բայց Բիւզանդիոնի և յետագային Հոռմի առաջարկ ու պայմանները յաճախ այնքան ծանր թուած են որ ստիպուած են ծանրերուն առջև հաստատամիտ ու աներկիւզ մնալ, պահելու համար Հայ. եկեղեցւոյ վարդապետական նկարագիրը և թեթեւ թուած պայմաններու հանդէպ զիջող գտնուիլ, եկե.



ղեցական համագումարներու ուժով միան ուղելով օրինականացնել այդ անյնաս կարծըւածն ալ։ Եւ այս ողջամիտ քաղաքականութեան և սիրալիր քաղաքավարութեան շնորհիւ է միայն որ Հայ. Եկեղեցին այնքան դժուարին ճամբաներ կտրելով յաջողեցաւ պահել իր անկախութիւնն ու ազգային գիմագիծը՝ որ պիտի մնայ առ յաւիտ մեր ազգային անկախութեան մեծագոյն ազդակներէն մին, ազատ ու անկախ Եկեղեցի, նոյնպէս ազատ ու անկախ Հայրենիքով։

Մանուէլ կայսր քաղաքական պատճառներով չկրցաւ իր Թէօրիանոս պատգամաւորը Կիլիկիա շրջել ու կաթողիկոսին ուղղուած նամակը Հռոմկէլայ հասաւ մասնաւոր սուրհանդակով։ Գրիգոր Տղայ գոհ մնաց ի հարկէ որ Մանուէլ իրեն հանդէպ ալ կը պահէր միեւնոյն յարգանքն ու սէրը, ինչպէս որ պահուած էր իր հօրեղբայրներուն հանդէպ։ Գրութեան բովանդակութիւնը, ոճը և պայմանները կը մնային նոյնը. կաթողիկոսին կը մնար ճարտար դիւանագիտութեամբ անցընել տալնապը ու աւելի քաջալերուիլ երբ Ստեփանոս եպս. Արեւելքէն դառնալով անգամ մըն ալ կը շնչոտէր արեւելեան վարդապետներու անդառնալի կամքը, հաւատարիմ մնալու եկեղեցւոյ դաւանութեանց, չարունակելով սիրալիր յարաբերութիւն պահել քրիստոնեայ եկեղեցիներու հետ։ Կաթողիկոսը կը փութայ պատասխանել Մանուէլ կայսր նամակին, անձնականէ աւելի համազգային հանգամանքով, փափկօրէն իմացնելով որ պարտաւոր է հետեւիլ իր նախորդի ընթացքին և թէ աւելի հանգամանօրէն նման կարևոր նիւթի մը՝ չուրջ անդրադառնալու փափաքով պիտի աղօթէր որ կայսրը յաջութութեամբ աւարտելով իր մղած պատերազմը Իկոնիոյ սուլթանութեան դէմ, զար Հռոմկէլայ, լրացնելու միութեան շուրջ յաբուցուած խօսակցութիւնները։

Գրիգոր Տղայ կաթողիկոս ուրախ էր որ եկեղեցւոյ համար բաւական փափուկ ժամանակի մը իշխանութեան գլուխը Ռուբէնի նման բարեպաշտ և բանիմաց անձ մը կը գտնուէր որ կրնար նպաստել Յոյներու հետ բարեկամական մերձաւորութեան նըպատակին, և ինչպէս որ գիտել կուտայ իրաւամբ Օրմանեան (Ազգապատու՝ Ա. էջ

1454), փափաքուած միութիւնը կաթողիկոսին համար ո՛չ միայն եկեղեցասիրական, այլ և ազգասիրական, ազգապահպանման գործ մըն էր։ Կաթողիկոսը յաջողակ օգնական մը ունէր իր մօտ, Ներսէս վրդ. Լամբրոնացին, որ գրիչով ու գործերով իրեն կը նպաստէր և որուն գործունէութեան ասպարէզը ընդարձակելու, Շնորհալիէն աւանդուած կտակ մը իրագործելու, ծնողաց ուխտագիր փափաքը իրագործելու համար, 1175ին զայն արքեպիսկոպոսութեան կը բարձրացնէր երբ Ներսէս հազիւ 22 տարեկան էր և անոր կը յանձնէր Լամբրոնի և Տարսոնի եպիսկոպոսութիւնը և Սկեւռայի վանահայրութիւնը, ծառայելու համար իր հօրը՝ Օշին իշխանի ձեռակերտ վանքին բարոյական և եկեղեցական պայծառութեան։ Աւելի քան երկու տարի տեղոյ յոյն-սելջուկեան պատերազմին, չարաչար պարտուող Մանուէլ կայսր նոր գիր մը ևս խմբագրել կուտայ որուն կ'ընկերանայ պատրիարքին և իր գլխաւոր եպիսկոպոսներուն կողմէ ստորագրուած և զոյգ պաշտօնագրերը կը յանձնուին Կոստանդին յոյն եպիսկոպոսին՝ որ իբր կայսերական և պատրիարքական կրկին պատուիրակ 1177ին կը հասնի Հռոմկէլայ, զրբը կը յանձնէ կաթողիկոսին և կը խնդրէ հայ եկեղեցական-ազգային ժողովի հրաւեր ուղղել և ջանալ միութեան գործը գլուխ հանել։ Հռոմկէլայ հասած գիրբը նախորդ գրութիւններէն շատ աւելի մեղմ լեզուով խմբագրուած էին, ու զանց առնուած երկրորդական պայմանները, շնչոտելով աւելի «երկու բընութեանց» խնդրը, այն վստահութեամբ որ Հայերը ընդունած էին արդէն «անշփոթ միաւորութեան» վարդապետութիւնը ու կը մնար Հայց. Եկեղեցին առնել Քաղկեդոնի ժողովը ընդունողներու կենսական տարածութեան մէջ։ Միքայէլ պատրիարքի նամակը կարևոր էր անոնց՝ որ կը կրէր քսան թեմակալ Մետրապոլիտներու ստորագրութիւնները, իբր սիւնհոգական թուղթ (անդ, 1458) և կաթողիկոսարանը պարտաւոր էր իբր այդ նկատի առնել զայն։ Գրիգոր Տղայ իբր առաջին պարտաւորութիւն հասած պաշտօնագրերը կը կարգայ Հայրապետանոցի եպիսկոպոս և վարդապետներուն որոնք քանի մը օր յետոյ աւելի լայն շրջանակի մը մէջ գումարուելով կ'որոշեն



ազգային ժողով գումարել ու կը փութացնեն ժողովի հրաւերները, Մեծ Հայքէն մինչև Սեաւ լեռ և Երուսաղէմ: Արեւելեան Հայաստան թէև օտար բռնապետութեան և լուծի տակ էր ու մէկ դարէ աւելի առաջ Մայր Աթոռի Կաթողիկոսարանը Կիլիկիա փոխադրուած, նախ Շղուր ու Ծովք և ապա Հոռմկլայ ու թէև պանդուխտ Կաթողիկոսարանը կը վայելէր Հայ կիսանկախ իշխանապետութեան պաշտպանութիւնը, բայց «արեւելեան վարդապետ»ները, զխաւորաբար Հաղբատի ու Սանահինի զոյգ վանքերն էին որ զգալի ուշադրութեամբ կը հսկէին Հայց. եկեղեցւոյ դաւանութեան ու վարդապետութեան վրայ, ամենեւին հակառակելով միութենական ունէ գաղափարի: Զորագետի միաբանները մանաւանդ ոչ մէկ վստահութիւն ունէին օտար առաջարկներու վրայ և Կաթողիկոսին ուղղուած հաւաքական գրով կը քննադատեն յունական քաղկեդոնիկ դաւանութիւնը և կը հրաւիրեն Գրիգորը մերժել Յոյներուն առաջարկը, ո'չ թէ կասկածելով անոր ուղիղ դաւանութեանը վրայ այլ որպէս զի Յոյները իմանան որ Հայերը աշխարհիկ պատուոյ և փառքերու ցանկացող չեն: Բնական է որ արեւելեան վարդապետներուն գիրը խորթ լի չթուէր Կաթողիկոսին՝ որ երկու կողմերուն համար պատուաբեր համաձայնութեամբ մը կը փափաքէր միութեան գետին մը պատրաստել, ջանալով աւելի տանելի դրութիւն մը ստեղծել բիւզանդական իշխանութեան Փոքր Ասիոյ մէջ ապրող հայազաւան բաւական ստուար թիւ մը կաղմող համայնքներուն որոնք հինէն ի վեր Յոյներու ատելութեան առարկայ կը մնային իբր ոչ քաղկեդոնիկներ, և հետեաբար «հերետիկոս» ճանչցուած: Կաթողիկոսը այս և ուրիշ յարակից պարագաներ գրով մը կը յիշեցնէր Արեւելեան Հայաստանի թեմական առաջնորդներուն և զխաւոր վանքերու վանահայրներուն, զիրենք հրաւիրելով ազգային համագումար ժողովի մը ուր կարելի ըլլար ազատ կերպով քննութեան ենթարկել բիւզանդական արքունիքի և սինոդի առաջարկը: Հայրապետին գրաւոր և բացատրական հրաւերը ընդունելութիւն գտնելով արեւելեաններէն, 1179 տարւոյ մեծ պահոց մէջ ժողովականներ, թիւով 33, հետզհետէ կը հասնին Հոռմկլայի կա-

թողիկոսարան և զատկական տօներէն յետոյ Կաթողիկոսի նախագահութեամբ կը ձեռնարկեն ժողովական աշխատանքի, քննելու համար հասած պաշտօնագրերը: Կիլիկեան իշխանապետութեան սահմաններէն դուրս, Հոռմկլայի նորահաստատ Կաթողիկոսարանի մէջ առաջին անգամն էր որ կը գումարուէր ազգային-եկեղեցական համագումար, բաւական փափուկ օրակարգով ժողովին անձամբ ներկայ կ'ըլլան, հակառակ ուղեկան դժուարութիւններու, Ստեփանոս Աղուանից Կաթողիկոս, ընդդիմադիրներու պետ Անիի Բարսեղ արքեպսկ., Բասիլիոս Տփղիսի, Ստեփանոս Սիւնեաց, Յովսէփ Իււրինի, Խաչիկ Նախիջևանի, և Խաչատուր Կարսի եպիսկոպոսներ: Հարաւային Հայաստանէն՝ Ստեփանոս Բզնունեաց, Գէւորգ Մանազկերտի, Դաւիթ Տարոնի, Ստեփանոս Ծովագ, Դաւար Հեր և Զարեանգի և Ստեփանոս Սալմաստու եպիսկոպոսներ: Կիլիկիայէն ներկայ կ'ըլլան՝ Անտիոքի, Տարոնի, Անարգաբայի, Սելակիոյ, Սամոստիոյ, Մամբատիոյ, Կիպրոսի, Ալմուշատի և Կոկիսոնի եպիսկոպոսները, թիւով ինը, որոնց կարգին կը յիշուին նոյնպէս Սիւրիոյ, Միջագետքի և Երուսաղէմի եպիսկոպոսներ և Կեսարիոյ Յովհաննէս, Մելիտինէի Յակոբ, Սեբաստիոյ Պսակ և Նեոկեսարիոյ Կոստանդին եպիսկոպոսներ: Թէև վարդապետներու անուններ չեն տրուած, բայց յայտնի է որ ներկայ են Սեաւ լեռներու զխաւոր վանահայրները: Նկատելի է որ եկեղեցւոյ հետ ազգը հաւասարապէս շահագրգռող այն կարեւոր համագումարին ներկայ չեն ո'չ Կիլիկիոյ Ռուբէն և ոչ ալ Լամբրոնի Հեթում իշխաններ, հաւանաբար Հոռմկլայի իրենց թեմարկութենէն դուրս գտնուելուն պատճառաւ (ամդ, էջ 1469):

Կաթողիկոսին կողմէ Մանուէլ կայսեր և Սինոդին ուղղուած պատասխանագրերով շատ քաղաքավար ոճով Հոռմկլայի ժողովը երկու կողմերու մտքերու հաւանութիւնը հաստատելով հանդերձ, մերժեց յունական բանաձեւը, ո'չ Քաղկեդոնի ժողովը ճանչցաւ և ոչ ալ Լեոնի տոմարին հաւանեցաւ և ընդհանուր կերպով իր միտքը բացատրելով, այդչափով գոհացաւ: Սոյն փափուկ կացութեան առջև արեւելեան եպիսկոպոսներ էին որ անգամ մըն ալ ապացոյցը



տուն իրենց անշեղ օրինապահութեան, տիրելէ աւելի գրաւելով ժողովական իրենց միւս կարգակիցներուն սիրտն ու միտքը հաւասարապէս ու ի պատիւ Գրիգոր Դ. կաթողիկոսին, պէտք է յիշել որ ունեցաւ նոյնքան ուղղամիտ ընթացք, պահպանելով Հայց. եկեղեցւոյ դարաւոր ոգին ու նկարագիրը, անոր ծիսական, տօնական և արարողական աւանդութեամբ:

Հռոմկլայի Հայրապետանոցի դիւանատան մէջ ի պահ դրուած էր թղթակցութիւն մը միայն. Տուտէորդիի խիստ գրութիւնը Տղայի ուղղուած: Սանահին և Հաղբատ և իրենցմէ վերջ Տաթև, իրենց վանահայրներով ու բովանդակ միաբանութեամբ մը նացին ջերմ պաշտպանները Հայց. եկեղեցւոյ դաւանութեան և համաձայն չէին Յոյներէն և Լատիններէն հասած առաջարկներուն. բայց ա՛յլ էր գրութիւնը Մովք, կամ Հռոմկլայ կամ Սիւ յաջորդաբար նստող կաթողիկոսներուն՝ որոնք պարտաւոր էին բոլորովին զաղջ յարաբերութիւն պահել Բիւզանդիոնի և Հռոմի եկեղեցիներուն հետ քրիստոնէական եղբայրութեան ոգիով և այդ ոգին է որ, իբր հետեանք սոյն անմիջապէս բանակցութեանց, կը դիտուի մեր շարական, մաղթանք ու քարոզներու կարգ մը պարբերութեանց մէջ: Նկատելի է նոյնպէս որ մեր կողմէ ցուցադրուած քաղաքավարական և երբեմն զիջողական վերաբերումէն իսկ դժգոհ, Բիւզանդական կայսրեր, ինչպէս Իսահակ Անգեղոս, սկսան բռնական միջոցներու դիմել, փորձելով յունադաւան դարձնել կայսրութեան սահմաններուն մէջ բնակող բաղմահազար Հայերը և անուղղակի կերպով պարտադրել Ռուբէն իշխանը՝ որ իր մտադրութիւնը Լատիններուն կողմը դարձնէ, մինչև իսկ խնամութիւն հաստատելով անոնց հետ, ինչպէս որ քիչ յետոյ Գրիգոր Տղայ միշտ պաշտպանութիւն զբաւնելու ակնկալութեամբ, Ղուկիոս Գ. պապին:

Գրիգոր Տղայի օրով Ուրբանոս Գ. պապի նախաձեռնութեամբ կազմուեցաւ երրորդ Խաչակրութիւնը, Յրանսայի, Անգղիոյ և Գերմանիոյ վեհապետներուն մասնակցութեամբ: Գերմանիոյ կայսրը՝ Յրետերիկ, Սելեկիայի մօտ կալիկազնոս զեաթի մէջ խեղդուելով, իրեն յաջորդեց

որդին Կոնրադոս որ հօրը ընկերացած էր: Կաթողիկոսը Սիւ եկած էր անձամբ կայսեր հետ տեսակցելու՝ որուն մահուան լուրին վրայ Մամեստիա եկաւ կայսրորդւոյն վըռտակցութիւն յայտնելու: Մամեստիայէ մերադարձին կաթողիկոսը ուղղակի Սիւ մեկնեցաւ ու մնաց Լեոն իշխանի մօտ և այնտեղ ալ վախճանեցաւ ու մարմինը ամփոփուեցաւ Դրազարկի վանքը, քսան երկար տարիներ վարելէ յետոյ Հռոմկլայի կաթողիկոսութիւնը, բաւական նշանակելի եղելութեանց մասնակից ըլլալով: Արտաքին տեսքով յաղթանդամ, ներքինով ալ զօրաւոր և ձեռնարկու բնաւորութեան տէր ճանչցուած, նոր և նշանաւոր գործերու ձեռք զարնող էր, հակառակ աննպաստ պարագաներու: Եթէ իր օրով կազմուած «Հռոմկլայի Ժողով»ը կրցաւ պահել իր լրջութիւնը և դուրս մնալ Բիւզանդիոնի և Հռոմի յաջորդական ոտնձգութիւններէն ու ապահովել եկեղեցիի անկախութիւնն ու աւանդութեանց պահպանութիւնը, այդ բոլորը պարտական ենք որքան Տղայի ողջամիտ քաղաքականութեան, նոյնքան Արևելեան վարդապետներու հաստատուն կեցուածքին:

Եկեղեցական բարեկարգութեան տեսակէտով ալ Տղայ ունեցաւ որոշ և նշանակելի դեր, եթէ ոչ բոլորովին՝ գէթ մեծ մասով իրեն վերագրելով Շնորհալիի յաւելուածներուն տակաւ սովորական դառնալն ու պարտաւորիչ ձև առնելը մեր ժամապաշտութեան մէջ, վասնզի 1274ին Ստեփանոս Վահկացիի կողմէ Լեոն Բ. Թագաւորի համար գրուած ու նկարագրուած ժամագրքին մէջ շատ բան դուրս ձգուած կը տեսնենք մեր առձեռն ժամագրքերէն(\*): Գրիգոր Տղայէ, իբր գրական գործ, մեզի հասած են քանի մը նամակներ և Շնորհալիի եղեսիոյ ողբին նամակութեամբ երուսաղէմի վրայ գրուած ողբ մը (Ազգապատմ., Ա. անդ):

ԱՐՏԱԽԱՂԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

(Շարունակելի)

(\*) Տես մեր «Մայր Յուդայի Հայերէն Զեռագրաց Երապայի Մասնաւոր Հաւաքումներ» Փաթիկ, 1950, էջ 36 - 42:



## ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

# ՀԱՅԵՐԸ ԾԱՅՐԱԳՈՅՆ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՁ

## ՀԱՄԱՐՈՐԴՈՒԹԻՒՆ ԴԷՊԻ ԾԱՅՐԱԳՈՅՆ ԱՐԵՒԵԼՔ

Պատմութիւն մը ընել է նպատակս Սիւն-ի այս անձուկ էջերուն մէջ, այլ համառօտ տեղեկագիր մը և հաշուեփակը տասներեք տարիներու Հեռաւոր Արեւելք պաշտօնավարութեանս և ծառայութեանս ազգիս դարաւոր և պատկառելի մէկ հաստատութեանը, Հայ Եկեղեցւոյն և անոր միջոցաւ իմ ազգիս վտարանդեալ բեկորներուն՝ որոնք ցրուած կ'ապրին աշխարհի այդ հեռաւոր անկիւնները:

Չունենալով ձեռքիս տակ աճ այժմս որ և է նօթագրութիւն, որոնց ժամանման դեռ կը սպասեմ, յիշողութեանս թեւերով ետ պիտի սլանամ տասներեք տարիներ, որը կը դգամ թէ շատ աղաւաղուած է այսօր: Այսքան երկար տարիներ ետքը թուղթին կը յանձնեմ սոյն առաջին յօդուածս և յառաջիկայ յօդուածներուն համար կը յուսամ թէ ձեռքիս տակ կ'ունենամ իմ կարգ մը համառօտ նօթերս զորս օրագրի ձեւով պահած եմ Հեռաւոր Արեւելք ճամբորդելու օրէս մինչև վերադարձիս օրը, ի բաց առեալ պատերազմի երկու տարիներունը որ կորսնցուցած եմ, փոխադրութեանց ժամանակ իմ կարգ մը անձնական ուրիշ գիրքերուն և գոյքերուն հետ միասին:

Յառաջիկային եթէ Աստուած յաջողէ, մտադիր եմ գրելու պատմութիւնը այն Հեռաւոր Արեւելքի ցիր ու ցան Հայ գաղութին, որը կարծեմ թէ օգտակարութենէ զուրկ պիտի չըլլայ ապագայի Հայ գաղութներու պատմութեան համար իբրեւ պիտանի վաւերագիր մը, ներկայացնելով Հեռաւոր Արեւելքի Հայ գաղութը:

Պաշտօնավարութեանս առաջին չորս տարիներուն, կը տեղեկագրէի յաճախ նաև մակի ձեռք Ս. Պատրիարքին, որոնք Սիւն-ի

վերջին էջերուն մէջ տեղ կը տրուէր իմ բազրութեան կողմէ, «Ժողովեցէք զնշխարեալ բեկորս զի մի ինչ կորիցէ» վերտառութեամբ:

1937 Մարտ 17ին որ Մեծ Պահոց առաջին Չորեքշաբթին էր Երուսաղէմի համար, Արեւագալի ժամերգութեան «Առաջնորդեա մեզ» աղօթքը յուզուած սրտով և արցունքոտ աչքերով կարդալէ յետոյ, հըրաժեշտ կուտամ մեր վանքի պաշտպան Դիսազի Ս. Յակոբին և Մայր Տաճարին, Միաբանակից եղբարց և ուրիշ բարեկամներու ուղեկցութեամբ, դուրս կ'ելլեմ Սրբոց Յակոբեանց վանքէն, օծակից եղբայրներու հետ միասին ինքնաշարժ մը կը նստինք և կ'իջնենք Լիտտա կայարանը, ուր եկած էին նաև Եաֆայի մեր վանուց սիրելի տեսուչը Հոգ. Տ. Հայկազուն վրդ. տեղւոյն կարգ մը ազգայիններուն հետ, վերջին հրաժեշտը կուտանք բոլորին, փոխադարձ ողջագուրմամբ եւ շոգեկառք կ'առնենք գէպի Եգիպտոս:

Այդ օրը ամբողջ ճամբու ընթացքին մեղամաղձոտ ու յուզեալ վիճակ մը ունէի, կը բաժնուէի վերջապէս կեանքիս մէջ առաջին անգամ ըլլալով իմ սիրելի ընկերներէս, այն ծանօթ գէմքերէն և վայրերէն, որոնց ի տղայ տիոց վարժուած էի և կ'երթայի հեռու երկիր, մնալու մինակ ու անընկեր: Հովուական ցուպը ձեռքիս, կ'երթայի գէպի անձանօթ հորիզոններ, քսանեւօթ տարեկան անփորձ երիտասարդ մը, կը խորհէի թէ ի՞նչ պիտի ընեմ այդ անձանօթ երկրի մէջ, ի՞նչպէս պիտի կրնամ լսելի ընել տալ իմ տկար ձայնս այդ անկոխ երկրի մէջ տարահալած Լուսաւորչի փոքրիկ հօտին, որոնք տասնեակ տարիներով ցրուած ըլլալով օտարութեան մէջ, գրեթէ



անընտել պիտի ըլլային իրենց Մայրենի եկեղեցւոյ փարախին. ի՞նչ ուժով և հրաշքով պիտի կրնայի զանոնք մակաղել ի մի տեղ. պիտի լսե՞ն, պիտի ճանչնա՞ն զիրենք կանչող հովուին ձայնը որ այնքան խորթացած և մոռցուած էր անոնց համար և կամ յուսահատ ու անյաջող փորձէ մը ետքը ետ պիտի դառնայի ձեռնունայն. այս խորհուրդներով պաշարուած և մտասոյզ կ'երթայի երբ եգիպտական սահմանին մօտ երկու հոգի զինուորական համազգեստով պաշտօնեաներ յանկարծ սթափեցուցին զիս, տոմսակս և անցագիրս պահանջելով. կառաչարի մէջ պաշտօնավարող ազգային մը, տեսնելով իմ ընկճուած վիճակս և կրօնականի սքեմս, մօտեցաւ ինծի և օգնեց ինձ ճամբու ընթացքին, պաշտօնական բուրձնէակերպութեանց համար, որը զիս շատ զոհ ձգեց և երախտապարտ կացոյց, և այդ բոլորէն զգացի որ Նախախնամութեան Աջը իմ վրաս է և կ'առաջնորդէ իմ քայլերս անձանթ ճամբաներու վրայ. Անցանք Բանթարան և երեկոյեան ժամը ութի տեսները, հասանք Փորթ-Սայիտ և պայուսակս յանձնելով Բուքի պաշտօնեայի մը, կ'առաջնորդուիմ պանդոկ մը. Ըստ յանձնարարութեան Սրբազան Պատրիարք Հօր, յաջորդ օրը Նախաճաշէն յետոյ գտայ Տիար Աթանասեանը որ Ս. Գիրքի Ընկերութեան տնօրէնն էր հոն, որ ինծի օգնէ ճամբորդութեանս համար անհրաժեշտ եղող պաշտօնական ձեակերպութեանց նաւային ընկերութեանց մօտ. Իսկոյն զիս փոխադրեցին պանդոկէն իրենց տունը, մինչև օրս դեռ կը յիշեմ զիրենք, այր և կին սքանչելի, հիւրամեծար և աղնիւ զոյգ մը, որ ինձ հոգ տարին ամէն կերպով, իբրեւ անփորձ երիտասարդ հոգեւորական ճամբորդի մը, ինչ որ երբեք պիտի չմոռնամ. Կ'ուզէի տեսնել Գահիրէն, շատ ժամանակ չունէի, երեք օր միայն ատոր համար. նոյն օրն իսկ մեկնեցայ դէպի Եգիպտոսի մայրաքաղաքը, առանց դժուարութեան գտայ Ազգային Առաջնորդարանը, Գեր. Տ. Մամբրէ Եպս. Սիրունեանը, որ յայնժամ Առաջնորդական Տեղապահ էր Եգիպտոսի, բարեացակամ, հաճոյակատար և համակ կեանք և եռանդ է կարծես այս եկեղեցականը, զիս համակեց իր խօսուն վառվռուն բնաւորութեամբը, իսկոյն յա-

ջորդ օրն իսկ առաջնորդարանի փարապանը տրամադրեց որ ինծի ընկերանայ, կարգ մը տեղեր տեսնելու համար, ինչպէս նաև Պր. Ալթունեան, որ յայնժամ անգամ Հոգաբարձութեան, պտըտցուց զիս երկու օր թանգարանը և կենդանաբանական պարտէզը, որուն հետ երուսաղէմ ծանօթացեր էինք իր ուխտաւորութեան շրջանին, ինչպէս նաև, Տէր և Տիկին Թուֆանեաները Տիկին Մարի Բամպուկճեանին հետ տարին Բուրքը և Սփինքսը տեսնելու. այսպէս թուշուի աչքերով դիտեցի այդ քաղաքին տեսնելու արժանի վայրերը երկու օրուան մէջ. Կիրակի օր Մաղկազարդ էր նոր տոմարով և սակայն ես ժամանակ չունենալով հոն աւելի մնալու, պատարագի սկիզբին եկեղեցիէն ելայ և չոգեկառք առնելով վերադարձայ Փորթ-Սայիտ, Տէր և Տիկին Աթանասեանենց մօտ, ուր եւս անցուցի երկու օրեր, որովհետեւ նաւը ուշացաւ օր մը:

Իտալական Conte Resso, ովկիանոսի մեծ նաւ մըն էր 20-21 հազար թոննոց: Մարտ 23ին կէսօրէն յետոյ Տէր և Տիկին Աթանասեանները պղտիկ չոգեմակոյկով մը կը տանին նաւը, որ ճերմակ հսկայ քաղաք մըն էր կարծես, լեցուն ամէն կարգի և աստիճանի մարդոցմով. նաւի հիւրընկալ պաշտօնեան մեզ կ'առաջնորդէ փալիս մը ուր ինձմէ առաջ ուրիշ լատին քահանայ մը արդէն զետեղուած էր, պայուսակներս կը տեղաւորեմ իմ անկողնիս քով, կը ծանօթանամ Ֆրանչիսկեան այդ կրօնաւորին հետ որ Լեհացի մըն է և կ'երթայ իր պաշտօնավայրը Ժափոնի Եօքօ համաքաղաքը, հոն քրիստոնէութիւն քարոզելու, կամ կը վերադառնայ Եւրոպայի իր արձակուրդէն. առաջ եղած է Զինատան, որով չինարէն լեզուն գիտէ և այժմ սկսած է Ժափոնեան սորվիլ. Կը մտածեմ թէ արդեօք ես ալ պէտք պիտի ունենամ այդ լեզունները սորվելու:

Գիշերը կտրեցինք անցանք Սուէզի ջրանցքը, առտուն Նախաճաշէն յետոյ կը նստիմ և կը սկսիմ նամակներ գրել Սրբազան Պատրիարք Հօր եւ հոգեւոր եղբայրներուս, տեսածներուս եւ ճամբորդութեանս շուրջ: Ապա կը ծանօթանամ այդ հսկայ նաւուն զանազան մասերուն. ընդարձակ ճաշասրահներ, կահաւորուած



սրահներ՝ հանգստաւէտ փափուկ աթոռներով, ծխելու ընդարձակ սենեակներ, պառներ, լոգարան, եկեղեցիի սրահ, նուազածուներ, խաղեր, շարժապատկերներ իրիկունները, պարեր, ռատիոյի լուրեր եւ վերջապէս ինծի համար բոլորովին նոր ու ծփուն աշխարհ մը այդ նաւին վրայ։ Իտալերէն լեզուն տիրապետող է հոս ճամփները մեծ մասամբ Իտալացի են։

Կարմիր Ծովու վրայ ենք, Փորթ-Սալիտէն յետոյ, առաջին անգամ ըլլալով նաւը կը խարսխէ Մասափա անուն նաւահանգիստը, ուր զրեթէ բոլոր Իտալացիները դուրս կ'ելլեն, երթալու և գրաւուած Եթովպիոյ զանազան մասերը աշխատելու, կամ միանալու իտալական ուժերուն որոնք դեռ կը շարունակեն կռուիլ։

Հակառակ զարնան եղանակին, հեղցուցիչ է տաք Կարմիր Ծովուն վրայ։ Իտալացիներու պարպումէն յետոյ, իմ ընկերս իրեն ուրիշ քաղաք մը գտաւ և ես մնացի միւսակ երեք հոգինոց քաղաքի մը մէջ։ Թէև տաք բայց ճամբորդներէն շատերուն հետ։ Գացողները մեծ մասամբ առևտրականներ են, Եւրոպական մեծ հաստատութեանց պաշտօնեաներ և կամ անոնց ընտանիքները, որոնք կ'երթան միանալու ընտանիքի միւս անդամներուն և ոմանք կը վերադառնան պաշտօնատեղիները իրենց արձակուրդէն յետոյ, զանազան յարանուանութեանց պատկանող միսիոնարներ որոնք կը դիմեն Չինաստան կամ Ճափոն, Քրիստոնէական կրօնքը և Աւետարանը քարոզելու հեթանոս Արեւելքի մէջ։ Վերջապէս խայտարեղէտ բազմութիւն մը ամէն դասակարգէ և աստիճանէ. նաւը միջազային քաղաքի մը տպաւորութիւնը կը թողու վրաս իր բազմազգ և բազմալեզու մարդոց խառնուրդովը, բայց բոլորն ալ զրեթէ կը խօսին անգլիերէն, որով բարեկամ գտնելու գոյաւորութիւն չկար, այնպէս որ ես տակաւ առ տակաւ ծանօթացայ գերմանացի, իտալացի, անգլիացի, լեհացի միսիոնարներու հետ, ինչպէս նաև հնդիկ, չինացի և ճափոնցի մեծ առևտրականներու հետ, որոնք Եւրոպայէն կը վերադառնային ու անոնցմէ շատերը ի-

րենց այցեքարթերը տուին ի նշան բարեկամութեան։

Ահաւասիկ Պոմպէյ՝ Հնդկաստանի բերանը, հոս հասանք Փորթ-Սալիտէն ճամբայ ելլելէն տասն օր ետքը, այստեղ կը դիմեն Արեւելքէն և Արեւմուտքէն, աշխարհի ամէն կողմերէն զանազան մեծութեամբ և տարողութեամբ ամէն ազգի նաւեր, իրենց բեռները պարպելու և կամ բեռներ առնելու, պարպելու տանելու համար կարծես Հնդկաստանի բոլոր բարիքները գէպի օտար երկիրներ։

Իսկոյն դուրս կը նետուիմ նաւէն, մեզի տրուած չորս սուղ ժամերը օգտագործելու և տեսնելու Հնդկաստանի այդ հսկայ և փառաւոր քաղաքը և փնտռելու գտնելու հոն իմ ազգիս բեկորներէն գէթ քանի մը հոգի։ Քաղաքը շքեղ է, լայն պողոտաներով և փողոցներով բազմաշարկ շէնքերով և պաշտօնատեղիներով վաճառականական հարուստ հաստատութիւններով, հանրակառքերու, ինքնաշարժերու անհատնում և անվերջ շարքերով. առաջին անգամն է որ այսքան մեծ և շքեղ քաղաք մը կը տեսնեմ Արեւելքի մէջ. նոյն իսկ Գահիրէն փոքր և աննշան կը մնայ Պոմպէյի պէս բազմամբօս և հարուստ քաղաքի մը քով։ Քաղաքը շինուած է Եւրոպական ոճով. բազմաթիւ քրիստոնէական եկեղեցիներ տեսայ այդ հեթանոս աշխարհի մէջ։ Նաւէն ելլելէս տասն վայրկեան յետոյ՝ արդէն Հայոց եկեղեցին եմ Մէթօ Սթրիթ կոչուած փողոցին վրայ. համեստ եկեղեցի մը։ Վեր կը բարձրանամ երիցատունը, զիս կը դիմաւորէ երիտասարդ և հաճելի դէմքով տղայ մը որ քահանային զաւակն էր, իսկոյն դուրս կ'ելլէ քահանան, երկուքն ալ նոր Զուղայէն եկած. ընտանիքի միւս անդամները մնացեր են հայրենիք. ներս կը մտնենք. արդէն թէյը պատրաստ դրուած էր սեղանի վրայ. կը հարցնեմ թէ ինչքան հայեր կան այս քաղաքի մէջ — 50-60 հոգի, մաս մը տաճկահայեր, մաս մըն ալ պարսկահայեր, կը զբաղին արհեստներով և զանազան ընկերութեանց գրասենեակները կը պաշտօնավարեն և քիչ թուով ալ ոսկերիչ և գոհարավաճառներ կան կ'ըսէ տէրհայրը. պղտիկ զաղութ մը որուն ազգային գործունէութիւնը կը գառնայ միայն եկեղեցիին շուրջ։ Եկեղեցին մասամբ ապա-



հովուած է եկեղեցապատկան հասութեաբեր կալուածներով, որպէս զի ժողովուրդի վրայ միշտ բեռ չըլլայ և եկեղեցին պահէ իր անկախութիւնը: Մէկ բաժակ թէյ ընդունելէ յետոյ, վար կ'իջնանք. բակի մէջ կը տեսնեմ հայերէն գրերով գերեզմանաքարեր. եկեղեցին անունը Ս. Պետրոս է, շինուած մօտաւորապէս մէկ ու կէս դար առաջ: Երկտասարդ իր ֆօսալով կը լուսանկարէ մեզ բակին մէջ ու կը բաժնուինք:

Քաղաքի մէջ աչքի կը զարնեն իրենց տարօրինակ թաղիքէ գլխարկներով ֆարսիները: Այդ Եւրոպականացած քաղաքի վեհաշուք երեւոյթին հակապատկեր կը կազմեն տեղւոյն հնդիկ բնիկները իրենց խեղճ ու թշուառ երեւոյթներովը, ամէն մէկ հնդիկին ճակատին կարմիր դրօշմ մը կայ որ թերեւ իրենց կրօնական ինչ ինչ աղանդներու պատկանած ըլլալը կը ցուցնէ: Ուրախ եմ վերջապէս որ հոն գէթ հայ եկեղեցի մը և եկեղեցական մը կրցայ տեսնել: Ինքնաշարժով պզտիկ շրջան մը ընելէ ետք, կը վերադառնամ նաւ. քարափին վրայ կայ նամակատունը. անկէ կը գնեմ քարթեր և Միաբանակից եղբայրներուս կարճ կը տեղեկացնեմ Հնդկաստան հանդիպիս, ինչպէս նաեւ Ա. Պատրիարքին աւելի երկար նամակ մը, հոն հանդիպած ըլլալս և տեսածներս տեղեկագրելով:

Երեք օր ետքը կը հասնինք Քօլումպօ քաղաքը Սէյլան կղզիի վրայ, տասնեակ մղոն ծովուն բացերէն զիշերուան մէջ կը կարդացուի եզերքին վրայ ելեքտրական կարմիր լոյսերով ամէն ուպէ գրուող և մարուող սա բառերը՝ Lipton Tea, ամենանշանաւոր թէյին հայրենիքը. եզերք կ'ելլենք չոգեմակոյկով մը, քաղաքը օժտուած է ասֆալթի լայն պողոտաներով. հոս առաջին անգամ կը հանդիպիմ մարդատար երկանիւ թիթե կառքերու որոնք կը քաշուին մարդերէ: Ինծի ընկերացող լատին վարդապետին հետ ինքնաշարժ մը կ'առնենք և կ'երթանք իրենց ֆրանչիսկեան միսիոնարական հաստատութիւնը, զոր տեսնելէ յետոյ, վարդապետի մը ընկերակցութեամբ մէկ ու կէս ժամ ինքնաշարժով պտոյտ կ'ընենք քաղաքին զանազան մասերը. կ'երթանք նամակատունը նամակներ ձգելու համար, և ապա մարդաքարչ կառքով մը քարափ՝ որ շատ հեռու էէն:

Այստեղ թէյի անծայրածիր տնկարաններ և վաճառականական զանազան ընկերութեանց պատկանող մեծ տուներ կան:

Հոս հայ չգտայ. չողչողուն, արեւոտ և արեւադարձային բուսականութեամբ ճոխ կղզի մըն էր, ուր կար անգլիական ընդարձակ և հարուստ աղւմբը ծովեզերքի վրայ, պուտտայական մեծ մահեան մը, բարձրաբերձ և բազմազխտանի քարերով յօրինուած աշտարակով, որուն մէջ կ'աղօթէին խայտարղէտ բազմութիւններ: Խորունկ ու միստիք նայուածքով, մարդարէատիպ պրահմաններ, որոնք այնքան տպաւորիչ են, հակառակ իրենց թշուառ արտաքինին: Ամբողջ հեթանոս աշխարհի մը դուռներուն առջև կը գտնուինք. այս առաջին տեսարանն է որ այնքան սարսուռազգեցիկ ու տարօրինակ տպաւորութիւն մը կը թողու վրաս: Արդարեւ կ'արժէ տեսնել Արեւելքը իր հնարոյր հաւատալիքներու և քաղաքակրթութեան պատմութեան մէջ պարուրուած, վերապրելու համար մեր նախահայրերու հեթանոս կեանքը: Հընդկաստանը դեռ օրրանն է շատ մը հին կրօնքներու, Պուտիզմի, Պրահմանականութեան, Զրադաշտի, Հինտուիզմի և ուրիշ զանազան կրօններու: Մենք միայն թուրքի նայուածքով կը տեսնենք ու կ'անցնինք այս ազգերու և կրօններու օրրանը եղող պատմական վայրերէն, սակայն մտածումն ու երեւակայութիւնը զմեզ կը տանին շատ հեռունները, կ'արժէ զանոնք տեսնել իրենց մանրամասնութեան և բոլոր երեսներուն մէջ: Մենք սակայն անցորդ մըն ենք և տարբեր նպատակի է որ կը դիմենք: Մեր ըրածը ճամբու նօթեր են միայն:

ԱՍՈՂԻԿ ՎՐԴ.

(Շարունակելի)





# ԼԵԶՈՒԱԳԻՏԱԿԱՆ

## ՀԵԴԵՐՈՊԱԿԱՆ ՆԱԽԱԾՐՋԱՆ(\*)

Բայց որպէսզի բառը իրրե նախալեզուի բառ արժէք ունենայ, պէտք է անպայման որ ան ամբողջապէս նոյն կամ նման լինի համեմատութեան առնուած բոլոր լեզուներին մէջ։ Միայն արմատի հնդեւրոպական լինելը բաւական չէ ընդունել տալու մեզ թէ այդ բառն էլ հնդեւրոպական է։ Բարձրախօս բառի մէջ «բարձր» հնդեւրոպական է. բայց սրանից չի հետեւում որ «բարձրախօսը» հնդեւրոպական է։ Նմանապէս «աքաղաղ» բառի մէջ քաղ «զոչել, կանչել» հնդեւրոպական է, բայց չի հետեւում սրանից որ ամաղաղ հնդեւրոպական ժամանակի բառ է. — նա չինուած է բաժանումից յետոյ, հայոց կամ հայերէնի մէջ, արդէն ունեցած քաղ արմատից։

Այսպէս հասկանալ նաև միւսների համար։

Նախաշրջանի վերջը, որին պիտի յաջորդէր լեզուների բաժանումը (Ն. Բ. 2500-2000) ընկնում է նախապատմական այն դարաշրջանին, երբ յղկուած քարէ դարը վերջանալով՝ սկսում էր պղնձի և բրոնզի դարը։ Եւրոպայում այս շրջանը ընկնում է Ն. Բ. 2500 թուին, երբ քարէ դարը վերջանում է և երեան է գալիս պղինձը։ 2000 թուին գտնուում է բրոնզը, իսկ 900 թ. երկաթը։ Արեւելքում սակայն սրանք աւելի հին էին, ուր 3000 թ. եգիպտոսում դեռ 5000 թ. գտնուել էր պղինձը, իսկ երկաթը եգիպտոսում 1350 թ. ապա գործածութիւն ունէր(\*\*)։ Այս պատճառով էլ «մետաղ» ընդհանուր գաղափարի համար մի ընդհանուր բառ չկայ հնդեւրոպական ժառանգ լեզուների մէջ։ Կան միայն պղնձի կամ բրոնզի, ոսկու և արծաթի համար զանազան բառեր, որոնք ընդհանուր են միայն մասնաւոր շրջանակներում, բայց ոչ թէ բոլոր հնդեւրոպական լեզուների մէջ։ Այսպէս

1. Սանս. áyas, զնդ. ayo, լատ. aes, գոթ. aiz, հիւլ. eir, հրգ. er նշանակում են «պղինձ», արոյր, բրոնզ կամ նաև երկաթ»։

2. Սանս. lohás, պրս. rōi, > հյ. arnir, հւլ. ruda, հիւլ. raudi, լատ. raudus նշանակում են «պղինձ, երկաթ կամ մետաղ»։

3. Գոթ. guld, հրգ. gold, լեթթ. zelts, հւլ. zlato, ռուս. zóloto, լեհ. ztoto, բուլղար էլ նշանակում են «ոսկի»։ Նոյն են սանս. hi'anya. զնդ. zaranya «ոսկի», որոնք կազմւած են նոյն արմատից, բայց տարբեր մասնիկներով. բուլղարի հիմնական նշանակութիւնն է «զեղին»։

4. Լատ. aurum, հպրուս. ausis, լիթ. auksas, թոխար. wäs նշանակում են «ոսկի» և հաւանաբար պատկանում են նոյն արմատին։

5. Սանս. raj<sup>√</sup>atá, զնդ. արձata, թոխար. askyant, լատ. argentum, իւլ. airget, գալլ. ariant, կորն. arganto, հյ. urðarp, յն. árgyros, որոնք կազմւած են զանազան մասնիկներով, բայց բոլորն էլ նշանակում են «արծաթ» և ծագում են միևնոյն արմատից, որի հիմնական նշանակութիւնն է «փայլիլ»։

6. Գոթ. silubr, գերմ. silber, անգլ. silver, լիթ. sidžbras, հպրուս. siraplis, հւլ. si<sup>√</sup>rebro, ռուս. serebro, բուլղար էլ նշանակում են «արծաթ» և փոխառեալ են մի անծանօթ ոչ-հնդեւրոպական լեզուից։

Երկաթի համար եղած բառերը աւելի քիչ տարածութիւն ունին. առանձին առանձին ձևեր են հյ. brlarp, յն. sideros և լատ. ferrum. փոքրիկ խմբակներ են կազմում 1) գոթ. eisarn, հիւլ. i'sarn, հրգ. isarn, հիւլ. iarn, գալլ. haiarn, 2) հւլ. ze<sup>√</sup>le zo, լիթ. gelež'is, հպրուս. gelso, — իսկ սանս. áyas և զնդ. ayo, որոնք նշանակում են բուն «պղինձ կամ բրոնզ», յատկացուած են նաև երկաթին։

Այս բոլոր բառական համապատասխանութիւնները՝ հնազիտութեան տուեալների հետ համաձայնութեամբ հաստատում են որ Հնդեւրոպացիները մետաղներին դեռ ծանօթ չէին և նրանցից զէնքեր, զրահներ և այլ գործիքներ պատրաստել չէին։ Երկաթը բուլղարին անծանօթ էր. իսկ պղինձը կամ բրոնզը արդէն գտնուած էր, բայց դեռ ընդհանուր տարածութիւն

(\*) Շառնակալիւն՝ մեծագույն հեղինակի «Պատմութիւն Հայ Լեզուի» գործէն (Ա. Դալիս)։

(\*\*) Boule, Les Hommes fossiles, éléments de paléontologie humaine, Psria 1923, էջ 331։



չէր գտած. կամ դեռ նրանով գործել չգիտէին. որովհետեւ այլ բան է մետաղը ճանաչել այլ բան է նրանով գործել իմանալ: Այսպէս նաև ոսկին և արծաթը: Երբ հնդկ-եւրոպացիք սկսեցին ցրուել, գաղթավայրերում լայն չափերով ծանօթացան այդ մետաղների գործածութեան: Գերմանական և լեթթո-սլաւական ժողովուրդները փոխ առին «արծաթ» բառը մի անծանօթ լեզուից. յոյները ոսկին (chrysos) ստացան սեմականներից, թերեւս փրենկեցիներից (հմտ. ասուր. xurašu «ոսկի»): Երկաթը կելտական ժողովուրդները փոխ առին մի ոչ-հնդեւրոպական ժողովուրդից, այն ժամանակ, երբ արդէն բաժանուած էին իտալական միութիւնից. կելտականից էլ անցան լատիններին և գերմաններին. այսպէս նաև Բալթիկ-սլաւական ժողովուրդները: Աւելի ուշ են անագը և կապարը (արծիճ). վերջինը յոյները (αἰγυρδος) և լատինները (ferrum) ստացան Սպանիայից: Հայերը նախքան բաժանումը ունէին արծաթը, բայց ոսկին և երկաթը չէին ճանաչում, որ յետոյ փոխ առին ուրիշ ոչ-հնդեւրոպական լեզուներից:

Արհեստների նախնական ձեւերին ծանօթութիւն ունէին հնդեւրոպացիք, թէև նրանց մի մասը քարէ դարի արհեստների շարունակութիւնն էր ներկայացնում: Առհասարակ ձեռքով կամ գործիքներով որևէ բան շինելու համար Հնդեւրոպացիք գործէին ածում \*tek արմատը, որ լեզուների մէջ արտայայտուած է զանազան առումներով. այնպէս սանս. taks, զնդ. tas «շինել»: Բայց յատկապէս կացինով կամ ուրագով տաշելով շինել, սանս. ta'ksa, զնդ. tas'a, յն. tekton նշանակում են «տաղձագործ», թէև յն. téchne ամէն տեսակ արհեստի համար է. — հյ. քեֆել աւելի կոնկրտ մի բան շինելու իմաստն ունի, — լատ. texere «հիւսել, հիւսելով գործել», հրգ. dehsen «կաննփը ձեծել», սակայն հրգ. dehsala «կացին», իուլ. tal «կացին», հուլ. tesati, լիթ. tas'y'ti «կացինով կամ ուրագով գործել»: Կոնկրտ շինելու բառը գտնուում է եւրոպայի հիւսիսային և արևմտեան լեզուների մէջ (ինչ. հուլ. kovo, լիթ. káuju, հրգ. houwan, լատ.

լու. գաղափարը, որ աւելի ընդհանուր է յն. téretron, լատ. terebra, հիուլ. tarathri. «գլխի, ծակիչ գործիք»), բայց յատկանում է \*ter «շփելով մաշեցնել» արմատից (յն. teiro, լատ. tiro, հուլ. tiro ևն.) որից հետևում է թէ քարէ դարի հետքը դեռ շարունակում է: Կացինը անշուշտ ծանօթ էր հնդեւրոպացիներին. այս իմաստով կայ մի հետաքրքրական բառ (սանս. paraçu's = յն. pélekus, որ հնդեւրոպական երևոյթ չունի և լինելու է մի շատ հին փոխառութիւն (հմտ. ասուր. pilakku «կացին»):

Այս միջոցներով Հնդեւրոպացիք կարողանում էին պատրաստել իրենց առօրեայ պէտքերի համար կարևոր բաները. ինչ. արօր, երկանաքար, փաղացք, լուծ, սայլ, անիւ, նաւ, թի, սանդ (մէջը բան ձեծելու) վերջապէս բնակութեան համար տուն: Բրուտի արհեստը նոյնպէս ծանօթ էր Հնդեւրոպացոց. ամանեղէնների համար կայ մի ընդհանուր բառ \*k'oros, (սանս. caru's, հիուլ. huerr, իուլ. coire, գալլ. pair, հուլ. čara). Բրուտի անիւը կոչւում էր հնիս. \*dhrogho-, որից առաջացել են յն. trochos և հյ. դուրգն: Հետաքրքրական համեմատութիւններ են զնդ. tas'təm «տաշտ, գուշ» և լատ. testa «հողէ աման» (արմատը լատ. texere «հիւսել»), որից հետևում որ բրուտը նախ ամանները հիւսում էր ուռիի ճիւղերով և յետոյ հողով ձեւփում:

Շինարարական արուեստի համար կարելի է յիշել հնիս. \*dheig'h-, որ նշանակում է «հողէ պատնէշ, թումբ կամ ամբարտակ բարձրացնելը, պատ շինելու համար հողը դիզել» (հյ. դեգ, յն. teichos, սանս. dehe ևն.), — կամուրջ (յն. géphura) որ յետոյ նախապաշարմունքով զանազան լեզուների մէջ փոխանակուել է տարբեր դարձւածքներով. ինչ. սանս. «կապ», իւրան. «անցք», լատ. «ճամբայ», — դուռն սանս. dvar, յն. thúra, լատ. foris ևն.) — անդ, դրանդի (սանս. a'ta, լատ. antae, հիուլ. ond) — սիւն — յն. kiôn և վերջապէս snlն բառը, որի հոմանիշները կը տեսնենք քիչ յետոյ:

ՊՐՈՖ. Հ. ԱՃԱՌԵԱՆ

(Եւրոպական)

udo, բայց անծանօթ է յոյն, հայ և արիական լեզուներին: Կայ և «ծակեր բանա-



# Ս. ՏԵՂԵԱՑ ԲԱՐՁՐ ՎԵՐԱՅՍԿՈՂԻ ԱՐՔԱՅԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒՄ

## (HIGH CUSTODIAN)

Յորդանանի Վեհ. Ապստոլան Թագաւորի քարեխման կարգադրութեամբ Ս. Տեղեաց Բարձր Վերահսկողի (High Custodian of the Holy Places) պաշտօնին կարգուեցաւ Վսեմ. Բաղկայ Փաշա Նաշաշիպի:

Այս արքիւ 15 Յունուար երկուշաբթի կեսօրէ առաջ ժամը 10.30ին Ռաւոսայի պաշտօնատանին մէջ, կարգադրուած էր յատուկ հաւաքոյթ մը որուն հրահրուած էին Ս. Բաղափին յոյն կրօնական պետերը, կառավարական կազմն ու Հիւպատոսական Մարմինը:

Մասնաւոր հրահրի վրայ Պատրիարքարանիս կողմէ այն հաւաքոյթին ներկայ գտնուեցաւ Դեր. Տեղապան Հայրը, ընկերակցութեամբ Հոգ. Տ. Գարեգին Արք. Գազաննեանի եւ Բարձրագոյն Տիար Կարպիս Հինդեանի:

Հաւաքոյթի ընթացքին կարգադրուեցաւ Վեհ. Թագաւորին արքայական հրովարտակը որով կը հաստատուէր Վսեմ. Բաղկայ Փաշա Նաշաշիպին իր Ս. Տեղեաց Բարձր Վերահսկողի պաշտօնին մէջ:

Իր պատմական նշանակութեան համար Սիոնի ընկերացողներուն կուտանք ստորեւ այն հրովարտակին հայերէն քարգնանութիւնը Տիր. Յ. Մամուրի կողմէ կատարուած.

(ԿՆԻՔ ԹԱԳԱՆՈՐԱԿԱՆ)

Ապստոլան Իպն Ալ-Հուսէյն, Շնորհիւն Աստուծոյ,  
Թագաւոր Հաշիմական Պետութեան Յորդանանու,

Առ պարծանքն ազնուականութեան, իր առաքինութեամբ եւ արժանաւորութեամբ մարդոց մէջ ամենեւնի աջառուն, որ կը սնորհիք համայնքային եւ կրօնական գործերը իմաստութեամբ, եւ որ օժտուած է վստմութեամբ եւ շուքով եւ վեհանձնութեամբ, մեր սիրեցեալ գործակալը, որ ունի Առաջին Կարգի Ալ-Նահաա Շֆանեանը, Նորին Վսեմութիւն, Բաղկայ Փաշա Նաշաշիպի:

Նկատի ունենալով մեզի ծանօթ Ձեր գովելի նկարագիրն ու համբաւաւոր արժանիքները, Մենք կը հրահարակենք Մեր ներկայ Արքայական Հաշիմական (Հասանական) Հրովարտակը, կարգելով Ձեզ իբրեւ Պահապան Ալ-Հարամ Էլ-Շարիֆի եւ Բարձր Վերահսկիչ Սրբաւեղեաց, վստահ ըլլալով որ Ձեր արդիւնաւոր ջանքերովն ու խոհեմութեամբը, պիտի պահեք ապահով կերպով Ալ-Ախա Մզկիթը, որուն շրջակայքը Տեր օրհնած է եւ կարողութիւն տուած մեր զինուորներուն եւ մարտիկներուն զայն վերահաստատելու իր սահմանեալ կարգին մէջ:

Եւ Դուք պիտի տարածեք ձեր հովանաւորութիւնը եւ պաշտպանութիւնը բոլոր համայնքներուն եւ ամենագոյն ուխտաւորներուն եւ պիտի ընեք Ձեր կարելիք երաշխաւորելու անոնց ապահովութիւնը, եւ պահպանելու անոնց ազատութիւնները, սրբավայրերը, արհարողութիւնները եւ պաշտամանք վայրերը եւ արդարութեամբ պիտի որոշեք ամեն խնդիր եւ պահեք ամեն իրաւունք ըստ սահմանեալ գոյալիճակի (Status quo) որ կը կարգաւորէ բոլոր իրաւունքները բոլոր համայնքներուն, մզկիթներուն, եկեղեցիներուն եւ վանքներուն այնպէս որ բոլորն ալ պիտի ապահովուին եւ խաղաղութիւն, իրեհասկացողութիւն վայելեն եւ գերագոյն զաւաթարականները մեծ մարգարէներուն տիարայեսեն այնպիսի կերպով որ երեւակն բերեն երկնային հաւասքները մարդկային եղբայրութեան կառոյցին մէջ



Արաբ Հոգի վրայ, որ սուրբ է եւ մեծարուած բոլոր կրօններէն ալ, ուր կրօնական պատեամունքներ կը կատարուին, աղօթքներ կը մատուցուին, եւ աւանդներ սրբազան են, այդու իսկ պահելով Օմարի երաւեսիքը եւ ժառանգ մնացած աւանդութիւնները որոնք փոխանցուած են սերունդէ սերունդ իսլամական տարեգրութեանց մէջ:

Եւ Դուք պիտի պահպանե՛ք ի գորու կայսերական Ֆերմանները եւ Հրամանագրերը որ ունին Ամենապատիւ Պատրիարքները, արձանագրելով ամէն իրաւունք մասնաւոր տոմարի մը մէջ, որ պիտի օգտագործուի երբ անհրաժեշտ է եւ պիտի գործադրուի ամէն ժամանակ:

Եւ Դուք պիտի հետեւի՛ք մեր մեծարելի նախնեաց բարի օրինակին, պատեանելով բարին եւ խուսափելով չարէն, վանելով անարդարութիւնը եւ վեր բռնելով Տէրութեան սիւները, Ձեզ առաջնորդ ունենալով Գիրքին համարը. —

«Ով մարդիկ. ճամարիս որ Մենք ձեզ ստեղծած ենք արու եւ եգ. եւ Մենք բաժնած ենք ձեզ ազգերու եւ ցեղերու, որ դուք կարենա՛ք հանչնալ զիրար: Ճամարիս որ ձեզմէ ամենէն մեծարուածը, Աստուծոյ առաջ ձեր մէջէն ամենէն բարեպաշտն է»:

Թող ամենագործն Աստուած առաջնորդէ Ձեր քայլերը եւ բոլ առաստանէ Ձեր վրայ իւր օրհնութիւնը եւ բարեւոյնը եւ պատիւը Ձեր ջանքերը յաջողութեամբ:

Տրուած Մեր Պալատին մէջ, ի Մուսալլա, Բապի Ալ Աուալի 27րդ օրը Հինիւրէի հազար երեք հարիւր եւ եօթանասուն բուականին եւ Յունուարի 5րդ օրը հազար ինըհարիւր եւ յիսունը մէկ բուականին:

## ԱՊՏԱԼԼԱՆ ԻՊՆ ԱԼ-ՀՈՒՍԷՅՆ

Սոյն հրովարտական աջառու պարագան *է մականական այն տրամադրութիւնը որով Վահ. Քալաւորը կը հրամանագրէ, Ս. Տեղեաց իրաւաւարդին մէջ անփոփոխ պահել գոյալիճակը (Status quo).*

Քրիստոնէական հնազոյն դարերէն ի վեր Երուսաղէմի Սրբաւեհիւնները ճանչցուած են իրրեւ սեպհականութիւնը զանազան քրիստոնէայ հաւայեցիներու որոնք գլխաւոր Սրբաւեհիւններուն մէջ (մասնաւորապէս Ս. Զարութեան, Ս. Մննդեան, Հաւքարձման՝ եւ Ս. Աստուածածնի Տաճարները) իւրաքանչիւրը ունեցած է իրեն յատկ մասուններ, կրօնաւորաց քնակաւեհիւններ, եւ արարողական առանձնաշնորհումներ:

Սրբաւեհեաց բաժնէկից սոյն ազգերէն ամենէն ազդեցիկներն ու տիրականները եղած են Հայեր եւ Յոյներ, իսկ Խաչակիրներու արշաւանքին յետոյ նաեւ Լատիններ: Սոյն երեք ազգերը ցարդ կը պահեն իրենց այդ հանգանակը Սրբաւեհիւններու մէջ (\*), իրրեւ քաջարձակ սեպհականացիներ, մինչ Ղաթի, Ասորի եւ Հապէշ հաւայեցիներ Հայոց Պատրիարքարանի հովանաւորութեան տակ կը վայելին չնչին առանձնաշնորհումներ, առանց ունենալու որ եւ *է սեպհականացի-րութեան հանգանակ:*

Սակայն մինչեւ Ս. Տեղեաց այսօրուան գոյալիճակին վերջնական հաստատումը սոյն երեք գլխաւոր ազգերուն միջեւ՝ տեղի ունեցած են քառական քաղխումներ, իրարու ձեռք յափը չսպիւնելու համար՝ նախանձելի իրաւասութիւններ: Դարաւոր այս քաղխումներու մէջէն Երուսաղէմի Ս. Զարութեանց Միաբանութիւնն ու պատրիարքարանը դուրս եկած են պատուով, Ս. Տեղերէն ներս ամենայն նախանձախնդրութեամբ պաշտպանելով Հայ ժողովուրդի իրաւասութիւններն ու առանձնաշնորհումները, ու այսօր հպարտութեան ու քերականի առիթ միայն կրնայ

(\*) Սա տարբերութեամբ որ Բերդեճէմի Ս. Մննդեան Տաճարին մէջ Լատիններ բաղդասաբար Հայերու եւ Յայե-րու կը վայելին զանազան առանձնաշնորհումներ, իսկ Գերսեմանի Ս. Աստուածածնայ գերեզմանի տաճարէն ներս Լատիններ ոչ մէկ իրաւասութիւն ունին, սոյն տաճար սեպհականութիւնն է միայն Հայ եւ Յայն եկեղեցիներուն:



ըղալ իրաւանշիւր Հայց. Եկեղեցւոյ զուակ հայ ուխտաւորին հաւար երբ կ'այցելէ Երուսաղիմ, տեսնել առաջնակարգ ու փառաւոր այն դիրքը որ Հայ Ժողովուրդը կը վայելէ, յանձին Երուսաղիմի Հայ Պատրիարքութեան ֆիլիստինեական մեծագոյն Սրբախայրերէն ներս, Յունադաւան եւ Պապական մեծ Եկեղեցիներու կողմէն անոնց հոռասարսաղասիւ կարգով մը:

Սրբաեղեաց շուրջ Հայ, Յոյն եւ Լատին Եկեղեցիներու քաղիւմները ի վերջոյ այնքան սուր կերպարմով առին անցեալին մէջ որ, Սրբաեղեաց հարցը ստացաւ քաղաքական հանգամանք ու ԺԹ. դարուն առ մաս կազմեց Արեւելեան խնդրին: Քաղաքական շրջանակներու մէջ, Յունադաւան Եկեղեցւոյն իրաւանց պաշտպան հանդիսացաւ Ռուսիա, իսկ Պապական Եկեղեցին՝ իրեն պաշտպան ունեցաւ Ֆրանսան ու Եւրոպայի կաթոլիկ պետութիւնները: Մինչ Հայաստանայց Եկեղեցին իրեն զօրավիշ ունենալով միայն իր հաւատքին ուժը եւ իր վստահութիւնը առ Աստուած, յանձին Ս. Յակոբեանց Միաբանութեան վերցուցած է իր պայքարի քաճիկը, եւ հակառակ իր միջոցներու խեղճութեան, պատուով դուրս եկած է այս զուգարհէն, ապահովելով իր Ժողովուրդին հաւար Ս. Տէրերէն ներս փառաւորագոյն դիրք մը զոր կը պահէ ցայսօր: Այս պայմաններուն տակ Սրբաեղեաց հարցը պատճառներէն մին հանդիսացած է նաեւ 1852ի Ռուս-Քրիստոնէական պատերազմին:

Սոյն պատերազմին առիթով, Թուրքիոյ Ապտուլահմէտ Սուլթանը միանգամ ընդ միշտ վերջ տալու հաւար Սրբաեղեաց կեանքոս հարցին, 1852ին հրովարտակով մը կը հրաւանագրէ, Սրբաեղիներէն ներս ինչ որ է այն օրերուն զոյալիճակը (Status quo) պահուի անխախտ: Այս սկզբունքը ի զօրու եղաւ միեւն Պաղեստինի վրայ քրիստոնէական իշխանութեան վախճանը, որով միանգամ ընդ միշտ մեղուցանեց վիճերը ու արգիլուցանեց իրաւաստութիւններու փոխադարձ քրքրանքները: Իսկ Պաղեստինի Անգղիական Խնամաստութիւնը՝ եօրը տարիներու փորձառութեան մը շնորհ, իր կարգին, յանգեցաւ այն եզրակացութեան որ Սրբախայրերէն ներս ապահովելու հաւար խաղաղութիւնը անհրաժեշտ է որ իր շրջանին եւս իրագործուի զոյալիճակի անխախտ պահպանման սկզբունքը, ու 1924ին իր այս որոշումը հրապարակեց Լոնտոնէն տրածաւանդած վճռագիրով մը, որ ի զօրու եղաւ Պաղեստինի վրայ Անգլ. Խնամաստութեան անբողջ շրջանին:

Երուսաղիմի Երդանանեան գրաւումի այս օրերուն վեհ. Ապտալա Քալաւորի վերոգրեալ հրովարտակը, որով կը հրաւանագրէ իր կարգին Սրբաեղիներէն ներս զոյալիճակի (Status quo) անխախտ պահպանումը, շատցոյն շոժում մը կը բուի, երբ նկատի կ'ունենանք ներկայ օրերն ու անոնց պայմանները, պարագայ մը որ յատկէ գոհունակութեամբ կ'արձանագրենք Սիոնի այս հեղեղին:



## Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ՀԵՌԱԳԻՐ Ս. ԵԶՄԻԱԾ. ՆԵՆ

Ամենայն Հայոց Վեհ. Ս. Ս. Գեորգ Սրբազնագոյն Կաթողիկոսը Ս. Էջմիածնէն իր մասնաւոր մէկ հեռագրովը, Նոր Տաւրոյ եւ Ս. Ծննդեան տօնին առթիւ կը շնորհակալուի եւ իր Հայրապետական բարձր սերն ու օրհնութիւնները կը դրկէ Գեորգ. Տեղապան Հօր, Պատ. Միաբանութեան եւ Համայն Պաղեսիոյ հաւատարմաց Հայ ժողովուրդին: Մագրելով բարգաւաճութիւն եւ յառաջդիմութիւն Միաբանութեան եւ Պաղեսիոյ հայ եկեղեցւոյ:

### ԱՄՍՕՐԵԱՅ ԼՈՒՐԵՐ

\* 4 Դեկտ. Բշ. — Ընծայումն Ս. Աստուածմանի երկը ամաց ի Տանաւն. Դիւանաւորութեամբ Հօգ. Ս. Սուրէն Վրդ. Քէմանեանի, Հօգ. Վարդապետ Հայրեր հանդիսաւոր գնացքով իջան Գեթսեմանի Ս. Աստուածածնի Տանաւն: Հրաշափառի հանդիսաւոր մուտքէն ետք, Ս. Կոյսի Գեորգմանին վրայ պատարագեց Հօգ. Ս. Յակոբ Վրդ. Վարդանեան: Ընծայումն խորհուրդին շուրջ քարոզեց Հօգ. Ս. Սուրէն Վրդ. Քէմանեան: Ժողովուրդի հոծ բազմութիւն մը կը լեցնէր հնազարեան տանաւոր: Յետ Ս. Պատարագի կատարուեցաւ Հօգեհանգատեան պաշտամունք Ս. Աստուածածնայ տաճարի բարերար՝ Կիւլապի Կիւլպէնկեանի եւ Կիւլպէնկեան գերդաստանի համայն ճնշեցեցող հոգիներուն համար: Արարողութեանց աւարտին, վարդապետ հայրեր Նոյն հանդիսական գնացքով վերադարձան մայրաքաղաք:

\* 9 Դեկտ. Եր. — Կէսօրէն առաջ Գեորգ. Տեղապան Հօր այցելեց Երուսաղէմի Բրիտանական Հիւպատոսը Վսեմ Սըր Հիւ Տաու ընկերակցութեամբ Հիւպատոս Վսեմ Ա. Ր. Ուալմալէի եւ զերհիւպատոս Պր. Էրօքի:

\* 10 Դեկտ. Կիր. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ: Պատարագիչն էր Հօգ. Ս. Յարութիւն Վրդ. Մուշեան:

\* 13 Դեկտ. Դշ. — Կէսօրէն առաջ Գեորգ. Տեղապան Հօր իր առաջին այցելութիւնը տուաւ Երուսաղէմի Լիբանանեան Նոր հիւպատոսը, իր օգնականին ընկերակցութեամբ:

\* 15 Դեկտ. Ուր. — Երեկոյեան ժամերգութիւնն ու վաղուան տօնին նախատեսակը կատարուեցան Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, նախապահութեամբ Գեորգ. Տեղապան Հօր:

\* 16 Դեկտ. Եր. — Ս. Առաքելոց եւ Առաքին Լուսաւորչացն մերոց Թաղէտի եւ Բարթողիմէոսի. Հանդիսաւոր Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Դիւանաւորի մատարան մէջ: Պատարագիչն էր Հօգ. Ս. Նորայր Վրդ. Պողոսեան:

— Կէսօրէն յետոյ Գեորգ. Տեղապան Հայրը, ընկերակցութեամբ Ս. Ս. Յարութիւն Վրդ. Ի. Գարեգին Արեղայի եւ հարտարապետ ու նկարիչ Տիար Մարտիրոս Ալթունեանի փոխադարձ այցելութիւն տուաւ Ս. Քաղաքի Նոր Լիբանանեան հիւպատոսին:

— Նոյն օրը Հօգ. Ս. Սուրէն Վրդ. Քէմանեան ի զիմաց Գեորգ. Տեղապան Հօր, Ներկայ գտնուեցաւ յոյն կաթողիկոս պատրիարքարանէն սարքուած պաղարին պաշտօնական ընդունելութեան:

Այսօր իւրաքանչեւ վերադարձան Հօգ. Ս. Հայրիկ Վրդ. Ասլանեան եւ կալուածոց զիւանի քարտուղար Պր. Կարպիս Հինդեան, որոնք մեկնած էին Դեկտեմբեր 6ին Ս. Աթոռոյ կալուածական հարցերով զբաղելու:

\* 17 Դեկտ. Կիր. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տանաւոր մեր վերնատան մատուռին մէջ: Պատարագիչն էր Հօգ. Ս. Յարութիւն Վրդ. Մուշեան:

\* 20 Դեկտ. Դշ. — Գեորգ. Տեղապան Հայրը ընկերակցութեամբ Հօգ. Ս. Ս. Հայրիկ եւ Բարգէն Վարդապետաց մեկնեցաւ իւրայել, զբաղելու վանական - վարչական հարցերով:

\* 21 Դեկտ. Եշ. — Երեկոյեան ժամերգութիւնը եւ վաղուան տօնին նախատեսակը կատարուեցան Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, նախապահութեամբ Գեորգ. Ս. Սուրէն Վրդ. Քէմանեանի:

— Երեկոյեան Հալէպէն Ս. Աթոռ ժամանեց Հօգ. Ս. Ասողիկ Վրդ. Ղազարեան:

\* 22 Դեկտ. Ուր. — Յղութիւն Սուրբ Աստուածմանի ի յԱմենայն. — Հօգ. Ս. Սուրէն Վրդ. Քէմանեանի զԴիւանաւորութեամբ, Միաբանութիւնը պաշտօնական երթով իջաւ Գեթսեմանի Ս. Աստուածածնայ տաճար: Հրաշափառով հանդիսաւոր մուտքէն ետք, Ս. Կոյսի գերեզմանին վրայ Ս. Պատարագը մատուցեց Հօգ. Ս. Գարեգին Արեղայ Գաղանճեան, իսկ Հօգ. Ս. Հայկաներ Վրդ. Պարամեան քարոզեց Ս. Կոյսի սրբութեան եւ իսկական մայրութեան գաղափարին շուրջ:

\* 24 Դեկտ. Կիր. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ: Պատարագիչն էր Հօգ. Ս. Պարգե Վրդ. Վրթանէսեան:

\* 26 Դեկտ. Դշ. — Երեկոյեան Ս. Ծննդեան տօնին առթիւ, Գեորգ. Տեղապան Հայրը ընկերակցութեամբ հօգեշնորհ վարդապետներու, շնորհաւորական այցելութիւն տուաւ Ֆրանչիսկեան Միաբանութեան Գեորգ. Կիւսթոսին եւ Անկլիթան Գեորգ. Նպիոկոպոսին:

— Ի զիմաց Գեորգ. Տեղապան Հօր, Հօգ. Ս. Սուրէն Վրդ. Քէմանեան, ընկերակցութեամբ հօգեշնորհ վարդապետներու շնորհաւորական այցելութիւն տուաւ Յոյն Հռոմէականներու Հօգ.



Հովիւին, Մարտիկի համայնքի եպիսկոպոսին և Հայ Հռոմէականներու Հոգ. Հովիւին:

\* 28 Դեկտ. Եջ. — Գեր. Տեղապահ Հայրը ընկերակցութեամբ Հոգ. Տ. Գարեգին Արք. Գաղանձեանի և քարտուղար Պր. Կարպիս Հինդլեանի Ս. Իննդեան շնորհաւորական այցելութիւն տուաւ տեղւոյս բրիտանական Վսեմ Հիւպատոսին, և լուսերականներու ներկայացուցիչներ Տք. Մօլին և Պր. Մելիքեանին:

Մասնաւոր կարգադրութեամբ, այս երեկոյ Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, ի ներկայութեան Միաբանութեան և ժողովուրդի հոծ բազմութեան, կատարուեցաւ Եկեցեղ. եւ յաւելակցութեամբ, Կիլիկիոյ Վեմ. Տ. Գարեգին Հայրապետի առաջնութեամբ համար: Նոյնպիսի աղօթքներ պիտի կրկնուին թէ Մայր Տաճարին և թէ բոլոր սրբաւորներուն մէջ, մինչև Վեմ. Հայրապետին կատարեալ ապաքինումը:

\* 29 Դեկտ. Ուր. — Երեկոյեան ժամերգութիւնը և վաղուան տօնին նախատեսակը պաշտուեցան Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ նախագահութեամբ Հոգ. Տ. Սուրեն Վրդ. Քէմհանեանի:

\* 30 Դեկտ. Եր. — Ս. Յակոբայ Մծքնայ Հայրապետին. — Հանդիսաւոր Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարի Ս. Դիմադրի մատրան մէջ, Պատարագին էր Հոգ. Տ. Յարութիւն Վրդ. Մուշեան:

\* 31 Դեկտ. Կիր. — Ս. Պատարագը Ս. Յարութեան Տաճարի մեր վերնատան մատրան մէջ՝ մատոյց Հոգ. Տ. Նորայր Վրդ. Պողարեան:

— Այսօր Գահիրէէն Մայրավանք վերադարձաւ Հոգ. Տ. Հայկազուն Վրդ. Արքանան:

\* 5 Յուն. Ուր. — Երեկոյեան ժամերգութիւնը և վաղուան տօնին մեծահանդէս նախատեսակը կատարուեցան Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, նախագահութեամբ Գեր. Տեղապահ Հօր:

\* 6 Յուն. Եր. — Ս. Գալիի Մարգարէին եւ Յակոբայ Տեառնեղայր արդար առաւելոյն. — Տօն Առաքելական Արարչի Ս. Երուսաղէմի. — Աստուածահօրն Գաւթի և Երուսաղէմի եւ համայն Քրիստոնէական աշխարհի առաջին եպիսկոպոսապետին տօնը մայրավանքին մէջ կը կատարուի բացառիկ հանդիսութեամբ, անոր համար որ, Ս. Յակոբեանց Տաճարը հիմնուած է ճիշդ այն տեղւոյն վրայ ուր կը գտնուէր առաջին եպիսկոպոսապետին բնակարանը, ըստ այդ, Մայր Տաճարի դասին մէջ, մեր Պատարագական Աթոռին տեղը կը ցուցուի իբրեւ սրբազան այն վայրը՝ ուր աստատուած էր նաև Քրիստոնէական Եկեղեցւոյ առաջին պետին՝ Յակոբոս Տեառնեղբոր աթոռը(\*): Իսկ Տեառնեղբոր

իրեւ զերեզման արժանահաւատ աւանդութիւնները կը մատնանշեն Մայր Տաճարի Աւագ Խորանին ներքնամասը: Միշտ ինչ արդէն իսկ տաճարը իր ամբողջական զարգարանքով և աւելի քան 500 արծաթ կանթեղներու և բիւրեղեայ ջահերու լուսավառութեամբ պատրաստ է չքեղ տօնակատարութեանը մայրավանքի մեծ սուրբին և Քրիստոնեայ անդրանիկ եպիսկոպոսին: Յետ առաւտեան ժամերգութեան որ կատարուեցաւ նախագահութեամբ Գեր. Տեղապահ Հօր և մասնակցութեամբ բովանդակ Միաբանութեան, հանդիսաւոր Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Խորանին — Տեառնեղբոր Գերեզմանին — վրայ: Պատարագին էր Հոգ. Տ. Սուրեն Վրդ. Քէմհանեան, որ քարոզեց նաև օրուան տօնին խորհուրդին շուրջ ու մաղթանքներ ըրաւ Ս. Աթոռոյ և բովանդակ Հայց. Եկեղեցւոյ պայծառութեան համար: Յետ Ս. Պատարագի կատարուեցաւ Հոգեհանգստեան հանդիսաւոր պաշտամունք Ս. Աթոռոյս բոլոր հանգուցեալ պատրիարքաց հոգիներուն համար:

\* 7 Յուն. Կիր. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Հրեշտակապետաց Եկեղեցւոյն մէջ, պատարագին էր Հոգ. Տ. Հայկազուն Վրդ. Արքանան: Ս. Պատարագի ընթացքին Հաղորդ-

չի՝ կրնար ըլլալ ոչ Ս. Աւետարանը ոչ Եկեղեցւոյ արժանահաւատ աւանդութիւնը: Մինչ Տեառնեղբոր Երուսաղէմի Աթոռը իբրև Քրիստոնէական առաջին Աթոռ և եպիսկոպոսապետութիւն, առայդ իրեն յենարան ունի ոչ միայն Երուսաղէմի Եկեղեցւոյն արժանահաւատ աւանդութիւնը այլ մանաւանդ Ս. Գրքէն Գործ Առաքելոցի ստուգապատու վկայութիւնը, ուր ոչ թէ Պետրոսը այլ Յակոբոսը կը գտնենք իբրև առաջին եպիսկոպոս քրիստոնէական անդրանիկ Եկեղեցւոյն: Երուսաղէմի Հայոց Պատրիարքական Աթոռը ոչ միայն ուղիղ շարունակութիւնն է Տեառնեղբոր Առաքելական Աթոռին, այլ մանաւանդ սեպհականատէրը թանկագին այն Սրբատեղւոյն որ եղած է քրիստոնէական առաջին եպիսկոպոսապետին բնակավայրն ու աթոռանիստը:

Սակայն Հայաստանեայց Ս. Եկեղեցիէն ներս երբեք տեղ չեն կրնար գտնել քրիստոնէական Եկեղեցիներու միութիւնն ու խաղաղութիւնը վրդովող անհարկի ու հակաքրիստոնէական յաւակնութիւններ, որովհետեւ հոն մարդկային հաշիւներէն ու սին փառասիրութիւնէն աւելի իրազորուած ու տիրական են մինչև այսօր ալ Աստուածային սրբաբար սկզբունքները ու մանաւանդ Քրիստոսի այն սէրը, որուն խմբումին մէջ սրբուած իրենց բոլոր մարդկային տկարութիւններէն, հուսադաւաճ եղբայրացան առաքեալները, ու պէտք է եղբայրանան անխտիր բոլոր առաքելական Եկեղեցիները, իրազորութեամբ վերագոյն այն ամբողջութիւնը ուր գլուխը քան է Քրիստոսը, և ուր ըստ առաքեալի բացատրութեան չի կրնար ըլլալ տէր ու ծառայ, այլ ամենեքեան մի ի Յիսուս Քրիստոս:

(\*) Եթէ Հայաստանեայց Ս. Եկեղեցին ուղէր սնուցանել Պապական Եկեղեցիին նման նախաթոռութեան սկզբունքներ, յանձին Երուսաղէմի Հայ Պատրիարքութեան, ունեցած պիտի ըլլար շատ աւելի հիմնական ու զօրաւոր փառսմբ, քան Հռոմէականներու բոլոր այն յերկրամէջ փաստարկութիւնները, որոնց յենակէտը չէ՝ և



ուեցան Ս. Թարգմանչաց մանկապարտէզի ամբողջ աշակերտութիւնը:

Երեկոյեան ժամերգութիւնը և վաղուան տօնին նախատօնակը պաշտուեցան Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, նախագահութեամբ Գեր. Տեղապահ հոր:

✽ 8 Յուն. Բշ. — Ս. Ասեկիանոսի նախասարկաւոյն. — Այսօր ըլլալով նաև տօնը Ս. Աթոռոյ բարեկենտրոն սարկաւազներուն և ուրաւակիրներուն, առաւօտեան ժամերգութեան ընթացքին կատարուեցաւ նաև անոնց յատուկ հանդիսութիւն մը: Բարեկենտրոն սարկաւազներ և ուրաւակիրներ մարդարտադարձ թագերով, արծաթազամ կարմիր Շապիկներով և ուրաւներով, լուցեալ տապանակներ և բուրվառներ ի ձեռին, կատարեցին առաւօտեան ժամերգութեան վերջին բաժինը՝ «Փառք ի բարձունս»-էն մինչև Ս. պատարագի սկիզբը: Իսկ Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի յարակից Ս. Ստեփաննոսի մատրան մէջ, պատարագիչն էր Լոգ. Տ. Պարգե վրդ. Վրթանէսեան:

Յետ Ս. Պատարագի Գեր. Տեղապահ Լայրը ընկերակցութեամբ հոգ. վարդապետ Լայրերու, Յունաց Ս. Ծննդեան տօնին առթիւ, շնորհաւորական այցելութիւն տուաւ Յունաց պատրիարքարան, և ընդունուեցաւ Գեր. փոխանորդէն, Գեր. եպիսկոպոսներէն ու Սինոդի հոգ. անդամներէն, իսկ ի զիմաց Գեր. Տեղապահ Լոգ. Լոգ. Տ. Սուրէն վրդ. Քէմանճեան ընկերակցութեամբ հոգ. վարդապետներու Ս. Ծննդեան շնորհաւորական այցելութիւն տուաւ Ասորոց հոգ. Տեսչին, Ղպտոց Գեր. եպիսկոպոսին և Լապէշներու հոգ. Տեսչին:

Երեկոյեան ժամերգութիւնը և վաղուան տօնին նախատօնակը՝ պաշտուեցան Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, նախագահութեամբ Լոգ. Տ. Սուրէն վրդ. Քէմանճեանի:

✽ 9 Յուն. Դշ. — Ս. Առաքելոց Պետրոսի եւ Պողոսի. — Ս. պատարագը մատուցուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարի՝ Ս. Պողոսի և Պետրոսի վերնայարկ մատուռներուն մէջ: Պատարագիչն էր հոգ. Տ. Ասողիկ վրդ. Ղազարեան: Ս. Պատարագի ընթացքին Լաղորդուեցաւ Ս. Թարգմանչաց նախակրթարանի երկսեռ աշակերտութիւնը:

✽ 10 Յուն. Դշ. — Երեկոյեան ժամերգութիւնը և վաղուան տօնին մեծահանդէս նախատօնակը պաշտուեցան Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, նախագահութեամբ Գեր. Տեղապահ Լոգ.:

✽ 11 Յուն. Եշ. — Ս. Ողորդ Որոման Յակոբոս Ղլխապի խառնելոյն եւ Յովնանու Աստուածաբան Անթուանի: — Ինչպէս Տեառնեղբոր տօնը, այսօրուան տօնը եւս Ս. Յակոբեանց Մայր Տաճարին յատուկ է, անոր համար որ Ս. Յակոբ առաքեալը մէկն է այն երկու Յակոբներէն (Տեառնեղբայր և Գլխապի) որոնց անունով կը կոչուի Մայր Տաճարը, և որուն Սրբանեալ զբլուխը թաղուած է Տաճարին աջակողմը յատուկ մատուռի մը մէջ: Առաւօտեան ժամերգութեան յետոյ մատուցուեցաւ հանդիսաւոր Ս. Պատարագ, պատարագիչն էր Գեր. Տեղապահ Լայրը:

Իրեն կը սպասարկէին հոգ. վարդապետ հայրեր սարկաւազական զգեստաւորումով: Յետ Ս. պատարագի կատարուեցաւ մեծահանդէս թափօր, նախագահութեամբ Գեր. Տեղապահ Լոգ. որ ի ձեռին ունէր Ս. Խաչատրայտի թանկագին ճահնչազեղ մատուքը: Թափօրը Մայր Տաճարի մէջ յետ երիցս դարձման, կանգ առաւ կեդրոնական ատենին մէջ, ուր երգուեցաւ «Տէր ողորմեա» վարդապետ հայրերու և աշակերտ-զպիրներու փոխադարձ երգասացութեամբ: Օրուան շատ տպաւորիչ այս արարողութիւնը վերջ գտաւ Գեր. Տեղապահ Լոգ. պահպանիչով, որմէ յետոյ միաբանութիւն և ժողովուրդ թափօրով բարձրացան պատրիարքարան, ուր Տեղապահ Լայրը՝ օրհնութեան իր խօսքերէն յետոյ բաժնեց Ս. պատարագի նշխարներ Միաբանութեան և համայն հաւատացեալներուն:

✽ 14 Յուն. Կիր. — Նոր Տարի (ըստ հին տօմարի) Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, պատարագիչն էր — ըստ ընկալեալ սովորութեան Մայր Տաճարի ժամօրհնողը — Լոգ. Տ. Պարգե վրդ. Վրթանէսեան: Յետ Ս. Պատարագի միաբանութիւն և ժողովուրդ բարձրացան պատրիարքարան, ուր Գեր. Տեղապահ Լայրը իր Նոր Տարւոյ շնորհաւորական խօսքերէն և օրհնութենէն ետք, ըստ աւանդական սովորութեան բաժնեց Ս. երկրի բերքն եղող նարինջը բոլոր նեղիկներուն:

✽ 18 Յուն. Եշ. — Զրադալոյց Ս. Ծննդեան. — Առաւօտեան ժամը 9-ին նախագահութեամբ Գեր. Տեղապահ Լոգ. վարդապետ Լայրեր հանդիսաւոր զնացքով, Ե. Լ. Բարեսիրական, Լ. Ե. Մ. և Լ. Մ. Բ. Մ.-ի արիններուն և ոստիկանական ջոկատի մը առաջնորդութեամբ իջան Ս. Աստուածածնայ դուռը, ուրկէ անդին թափօրը 10 ինքնաշարժերու շարանով մը համբայ ելաւ զէպի Բեթլեհէմ: Ծամբու կիսուն, Յունական Ս. Թէոդոսի վանքին առջև թափօրը զիմաւորուեցաւ Բեթլեհէմի Լայն Գաղուքի անդամներէն, Լայն, Յոյն, Լատին և Ասորի Լամանցներու Մուխթարներէն, և հեծելաւոր ոստիկաններու ջոկատէ մը: Թափօրը երբ հասաւ Լոփուաց Դաշտի մօտ Պէյթ-Սահուր գիւղը, զիմաւորուեցաւ տեղւոյն գիւղապետէն, Յունադաւան Արարներու հոգ. Տեսչէն, և գիւղացիներու բազմութենէ մը: Գեր. Տեղապահ և Միաբանութիւնը հիւրասիրուեցան տեղւոյն կառավարչատան մէջ, ուր կատարուեցան նաև պատշաճ ճառախօսութիւններ զիւրի ներկայացուցիչներուն կողմէ, որոնց բոլորին հուսկ յետոյ փոխադարձեց Գեր. Տեղապահ Լայրը իր խօսքովը: Ապա թափօրը մեծ փառաւորութեամբ աւելի քան 20 ինքնաշարժերու և հեծելազօրքերու շարանով մը մուտք գործեց Քրիստոսի Ծննդեան Ս. Քաղաքը Բեթլեհէմ: Քաղաքին մեծ հրապարակը, Ս. Ծննդեան եկեղեցւոյ զաւթը մինչև տանիքներ լեցուած էին Լայն և օտարազգի ծովածաւալ բազմութեամբ, և ի պատուի կեցած ոստիկաններու շարաններով, Լոն Գեր. Տեղապահ Լայրը զիմաւորուեցաւ Բեթլեհէմի վսեմ, կառավարիչին և կա-



առավարական պաշտոնեաներէն, Բեթղեմէմի մեր վանքի չող. Տեղապահ և սքեմաւոր զպիւրներէն և Ն. Ս. Բ. Մ. ի Բարեսիրացի և Ն. Ե. Մ. ի Սկաւառներէն: Ասոնք բոլորը հող. վարդապետներու հետ և Գեր. Տեղապահ չոր և Գեր. Ռուբէն Ս. Արք. ի զխաւարութեամբ թափօր կազմած, շիրտ հոգող Մեծնի երգեցողութեամբ, մեծ հրապարակէն բարձրացան մեր վանքը: Տաճարի Հայապատկան զանգակները, որոնք ըստ սովորութեան առաւելուն է լինել կը զօղանէին այս պահուն կ'ստանան ջերմ ոգեւորութիւն, արձագանգելով թափօրականներն ու ժողովուրդը լեցնող հոգեւոր խանդին: Ամէն Հայրս սիրտ կ'ուռնի այս պահուն, ի տես այն մեծ ու բացառիկ փառաւորութեան որ մեր ժողովուրդինն է սա պահուն, Քրիստոնէական այս ամենէն նուիրական սրբալոյսին մէջ: Թափօրը կանգ կ'առնէ մեր վանքի բակին մէջ, ուր Գեր. Տեղապահ Հայրը կ'արձակէ բոլորը պահպանելով և օրհնութեամբ:

8. Մ. ժամը 1.30ին Ս. Երնդեան զանգերը զարնելով կը սկսին զօղանել ու ժամը 2. մ. 2ին վարդապետ Հայրեր զխաւարութեամբ Գեր. Տ. Ռուբէն Ս. Արք. Մանասեանի, հանդիսաւորապէս կ'իջնան Ս. Երնդեան եկեղեցին, որուն Սիւնազարդ զաւթին մէջ կը զմաւորուն զգեստաւորեալ թափօրականներէ: Հրաշափառ արարողութեամբ թափօրը կը յառաջանայ դէպի Ս. Երնդեան Այլը ուր Գեր. թափօրապետը և հող. վարդապետներ կատարելէ յետոյ իրենց ուխտը, կը բարձրանան Ս. Երնդեան եկեղեցւոյն հայապատկան բաժինը<sup>(\*)</sup>, Հոն կատարուեցաւ ձրազալոյցի արարողութեան առաջին բաժինը մինչև Ս. պատարագ, իսկ Ս. Պատարագը մատուցուեցաւ Քրիստոսի Ս. Երնդեան Այլին մէջ: Պատարագ 4 էր Հող. Տ. Գարեգին արդ. Գաղանճեան: Յետ Ս. Պատարագի կատարուեցաւ նախատեսակ և ապա հանդիսաւոր թափօրով, վառեալ մօմեղինօք և հոգեւոր երգերու ցնծութեամբ թափօրականք և ժողովուրդը բարձրացան մեր վանքը, որուն բակին մէջ կատարուելէ յետոյ Ս. Երնդեան Աւետարանի ընթերցումն ու Փառք ի Բարձունս՝ ի երգեցողութիւնը փակուեցաւ Ս. Երնդեան արարողութեանց ձրազալոյցի բաժինը:

(\*) Ս. Երնդեան բուն եկեղեցին Հայ և Յոյն պատրիարքութեանց սեփականութիւնն է միայն: Իսկ Հռոմէական եկեղեցին, Տաճարէն ներս ունի մի միայն կարգ մը պղտիկ առանձնաշնորհումներ: Պարագայ մըն է որ Հայց. եկեղեցւոյ բոլոր լուսաւորչածին զաւակներուն բերկրանքի ու հպարտութեան առիթ կրնայ ըլլալ միայն: Երուսաղէմի արքայականներէն ներս Ս. Յակոբեանց միաբանութիւնը տեղագրին աշխատանքով և մեծ զոհարբութիւններով կրցած է մեր ժողովուրդին համար ապահովել այնպիսի պատուաւոր դիրք մը, որուն չին կրցած հասնիլ մեզմէ բիրապատիկ զօրաւոր եկեղեցիներ հակառակ իրենց առատ միջոցներուն ու լարուած աշխատանքին:

Երեկոյեան վանքի ճաշասրահին մէջ սեղան տրուեցաւ միաբանութեան և ամբողջ ժողովուրդին:

Գիշերային ժամը 10ին սկսան Ս. Երնդեան արարողութեանց բաժինը: Առաւօտեան ժամերգութիւնը մինչև Յորհնեցէք զՏէրի մասը պաշտուեցաւ Ս. Երնդեան Տաճարի Հայկական բաժնին մէջ, իսկ մնացեալ մասը Ս. Երնդեան այլին մէջ: Արարողութեանց Ս. Այլի բաժինը ձայնասփռուեցաւ Սիւնաքի Հայութեան որուն ընթացքին Գեր. Տ. Ռուբէն Ս. Արք. յանուն Գեր. Տեղապահ հօր և միաբանութեան՝ կարգաց Ս. Երնդեան պատգամը ուղղուած համայն Հայց. եկեղեցւոյ բոլոր զաւակներուն Մայր Հայրենիքէն ներս թէ Սիւնաքի մէջ: Ապա Տաճարի մեր մասին մէջ մատուցուեցաւ Ս. Երնդեան պատարագը, պատարագին էր հող. Տ. Պարգե վրդ. Վրթանէսեան: Յետ Ս. պատարագի կատարուեցաւ Զրօրհնեաց սրտաշարժ արարողութիւնը նախագահութեամբ Գեր. Տ. Ռուբէն Ս. Արք. իսկ հող. Տ. Հայկազուն վրդ. Արքայանեան քարոզեց Ս. Երնդեան խորհուրդին շուրջ: Շիրտ հոգող մեծ և սքանչելի ընարանով:

Առաւօտեան դէմ մատուցուեցաւ երրորդ Ս. պատարագը Քրիստոսի Ս. Երնդեան Այլին մէջ: Պատարագին էր Գեր. Տ. Ռուբէն Ս. Արք. Մանասեան: Յետ Ս. Պատարագի, առաւօտեան ժամը 6ին ամբողջ միաբանութիւնը զգեստաւորեալ, թափօրով բարձրացաւ մեր վանքը, ուր Ս. Երնդեան Աւետարանի ընթերցումով և Փառք ի բարձունսի երգեցողութեամբ փակուեցան Ս. Երնդեան սրտաուշ հանդիսութիւնները:

Միաբանութեան և ժողովուրդին տրուած Ս. Երնդեան ճաշասեղանէն ետք, միաբանութիւնը զարնելով տեղաւորուած ինքնաշարժերու երկար շարանի մը մէջ, սկստական և օտարականական ջոկատի մը ընկերակցութեամբ, երեկուան կարգով վերադարձաւ Երուսաղէմ — մայրաքաղաք —: Հայոց թաղի մուտքին սկստներ, զպիւրներ և միաբանութիւն, թափօր կազմած, շիրտ հոգող մեծնի երգեցողութեամբ խուներամ ժողովուրդի բազմութեան մէջէն մուտք գործեցին մայրաքաղաք ու բարձրացան պատրիարքարան ուր իրենց Ս. Երնդեան շնորհաւորութիւնները ներկայացուցին Գեր. Տեղապահ հօր:

— Իսկ Երուսաղէմի մէջ Ս. Երնդեան ձրազալոյցի արարողութիւնը կատարուեցաւ Ս. Յարութեան տաճարին մէջ, Քրիստոսի Ս. Գերեղմանին վրայ, ի ներկայութեան հաւատացեալներու խուռն բազմութեան մը:

Ասկէ առաջ Երուսաղէմի մէջ Ս. Երնդեան ձրազալոյցի արարողութիւնը կը կատարուէր Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյն մէջ, իսկ Ս. Յարութեան մէջ տեղւոյն ժամարարներն ու միաբան եղբայրները առանձինն կը կատարէին Ս. Երնդեան ձրազալոյցը, նուազ հանդիսաւորութեամբ: Երեք տարիներէ ի վեր բարեղէպ կարգադրութեամբ մը Ս. Երնդեան ձրազալոյցը պաշտօնապէս կը կատարուի Ս. Յարութեան Տաճարին մէջ, ի ներկայութեան եկեղեցականներու



և ժողովուրդի ստուար բազմութեան մը: Կարգադրութիւն մը, որով շատ աւելի վայելութիւն ու հանդիսաւորութիւն տրուած եղաւ միջնադարին Սրբաւայրի մը մէջ կատարուած այս հանդիսութեան: Աղուօր զուգարկութիւն մը նաև այս առթիւ որ մեր Ս. Թննդեան տօնին Քրիստոսի Տնօրինական Սրբաւայրերէն ամենէն զխաւոր երկուքը՝ Ս. Թննդեան Այրն ու Ս. Գերեզմանը մեր կողմէն գրաւուած կ'ըլլան պատշաճ հանդիսութեամբ:

Ս. Գերեզմանի ձրադալոյցի Ս. Պատարագը մատուցող Հոգ. Տ. Նորայր Վրդ. Պողարեան: Իսկ յետ Ս. Պատարագի կատարուեցաւ նախատեսակ որմէ ետք Քրիստոսի Ս. Գերեզմանին շուրջանակի թափօրով, Տաճարի մեր տեղաբանին մէջ փախուեցաւ արարողութիւնը Ս. Թննդեան Աւետարանով և «Փառք ի բարձունս» ի երգեցողութեամբ:

Ս. Թննդեան արարողութիւնները կատարուեցան Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, ուր յետ առաւօտեան ժամերգութեան հանդիսաւոր Ս. Պատարագը մատուցող Ս. Լընդտակապետաց վանուց Հոգ. Տեառնը Տ. Սուրբն Վրդ. Քէմհանեան, յետ Ս. Պատարագի կատարելով նաև «Ջրօրհնաց» արարողութիւնը, իսկ Հոգ. Տ. Հայկապետ Վրդ. Պայրամեան քարոզեց Ս. Թննդեան խորհուրդին շուրջ, «Երկինք չէին բաւական փառաց անմահ արքային, ի խնձարուրս պատեցաւ» (Շարական) քնարանով:

Թէ երէկ և թէ այսօր Երուսաղէմի մէջ ըստ հնաւանդ սովորութեան երգեցողութիւնները կատարեցին Երուսաղէմահայ ազգայիններ:

Երեկոյեան տեղի ունեցաւ ժամերգութիւն և Ս. Թննդեան յետագայ օրերուն յատուկ նախատեսակի հանդիսութիւնը Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ: Այս հանդիսութիւնները շարունակուեցան մինչև Ութօրէք:

\* 20 Յուն. Եր. — Մեղեղոյ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ: Հնաւանդ սովորութեան համաձայն, օրուան պատարագին էր վանուցս Աւագ Թարգման Հոգ. Տ. Հայրիկ Վրդ. Աւանեսան:

Յետ Ս. Պատարագի, մեր Ս. Թննդեան տօնին առթիւ, Պատրիարքարան շնորհաւորական այցելութեան եկան հետզհետէ Յունաց Գեր. Պատրիարքական Փոխանորդը, ընկերակցութեամբ Գեր. Եպիսկոպոսներու, Հոգ. Վարդապետներու և Սարկաւազներու: Լատինաց Ս. Պատրիարքը՝ Ամեն. Աւգերթոյ Կօրի, ընկերակցութեամբ իր Փոխանորդ Գեր. Եպիսկոպոսին և Հոգ. Վարդապետներու: Յրանչիսկեանց Կիւսթոսը՝ Գեր. Զ. Զիւլիքիս Զաւլիս, ընկերակցութեամբ Հոգ. Վարդապետներու: Ասորէոց, Ղպտոց, Մարոնիներու, Հապէշներու, Անկիլքաններու, Հայ Հռոմէականներու, Յոյն Հռոմէականներու, Գեր. Տեսուչները, ընկերակցութեամբ իրենց վարդապետներուն: Սանմանային դրաններակի քարտուղարը, օտարկանական սպայախորհրատի Պէկ, Նատիմ Պէկ և Խէյրալլահ Պէկ:

Առնք բոլորն ալ ընդունուեցան Գեր. Տե-

ղապահ Հայրէն, որ իրեն առնթրեալայ ունէր Գեր. Տ. Ռուբէն Ս. Արքեպիսկոպոսը և Հոգ. Վարդապետ Հայրեր: Անոնք հիւրասիրուեցան Պատրիարքանի մեծ դահլիճին մէջ, Ս. Երկրին յատուկ աւանդական կարգերու համաձայն:

\* 21 Յուն. Կիր. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի մեր վերնաշարի մատրան մէջ: Պատարագեց Հոգ. Տ. Ասողիկ Վրդ. Ղազարեան, որ նաև քարոզեց Քրիստոսի Ս. Թննդեան շուրջ:

— Այսօր իօրայէէն վերադարձաւ Հոգ. Տ. Յարութիւն Վրդ. Մուշեան: Հոգեշնորհ Հայրը որ իօրայէլ մեկնած էր ամսոյս 12-ին, Գեր. Տեղապահ Հօր կողմէ՝ Յօպպէի և Հայֆայի մէջ Ս. Թննդեան տօնին առթիւ Ս. Պատարագ մատուցանելու, և հոգեւորապէս միաթափելու տեղոյն Հայաստանեայց Եկեղեցւոյ հարազատները:

\* 22 Յուն. Բշ. — Այսօր կէսօրէն վերջ Գեր. Տեղապահ Հայրը, ընկերակցութեամբ քարտուղար Պր. Կարպիս Հինդլեանի, այցելեց Ամերիկեան Վսեմ. Հիւպատոսին, և ապա ներկայ եղաւ Լուսեռականներու Միացեալ Նահանգաց ընդհ. ներկայացուցիչ Տօքթ. Յրանքին Յրայի գալըտեան առթիւ սարքուած ընդունելութեան, Լուսեռականներու հովուատան մէջ:

\* 25 Յուն. Եշ. — Երեկոյեան ժամերգութիւնը և վաղուան տօնին նախատեսակը կատարուեցան Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, նախագահութեամբ Գեր. Տ. Ռուբէն Ս. Արքեպ. Մանասեանի:

\* 26 Յուն. Ուր. — Տօն Անուանկոյնութեան Տեառն Մեղոյ Յիսուսի Բրիսուսի: Մայր Տաճարի առաւօտեան ժամերգութիւնէն յետոյ, Գեր. Տ. Ռուբէն Ս. Արքեպ. Մանասեանի զխաւորութեամբ, Հոգ. Վարդապետ Հայրեր հանդիսաւոր թափօրով իջան Ս. Յարութեան Տաճար: Մուտքին կազմուեցաւ «Հրաշափառ» թափօրը, որ յառաջացաւ դէպի Փրիշին Ս. Գերեզմանը Ուխտի արարողութեան յետոյ, թափօր Ս. Գերեզմանին շուրջանակի անցաւ մեր Տեսարանը:

Ապա Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ մատուցուեցաւ հանդիսաւոր Ս. Պատարագ: Պատարագեց Գեր. Տ. Ռուբէն Ս. Արքեպ. Մանասեան: Գեր. Արքազանը նաև քարոզեց, քնարան ունենալով՝ «Եւսոյ յայտնեցաւ հեթանոսաց և փառք ժողովրդեան իօրայէլի»:

Յետ Ս. Պատարագի, դարձեալ պաշտօնական թափօրով՝ վարդապետ հայրեր վերադարձան մայրավանք: Հայոց թաղի մուտքին՝ կազմուեցաւ եկեղեցական թափօր, որ հոգեւոր շարականներու երգեցողութեամբ մուտք գործեց մայրավանք ու բարձրացաւ Պատրիարքարան, ուր կատարուեցաւ վանուցս աւանդական տնօրհնէքը: Նոյն արարողութիւնը կրկնուեցաւ վանքի մասնատան, հաշարանին, փառատան և խոհանոցին մէջ, ուր ի մի յայտը օրհնուեցաւ նաև օրուան տօնին յատուկ հայկական հերթայի ճաշը:

— Երեկոյեան ժամերգութիւնը և վաղուան տօնին նախատեսակը կատարուեցան Ս. Յակոբի



եանց Մայր Տաճարին մէջ, նախագահութեամբ  
Հոգ. Տ. Սուրէն Վրդ. Քէմհանեանի:

\* 27 Յուն. Շր. — Տօն Եննդեան Ս. Յովնանեոս  
կաթալեթին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս.  
Յակոբեանց Մայր Տաճարի Ս. Կարապետի խորա-  
նին վրայ: Պատարագիչն էր Հոգ. Տ. Յակոբ Վրդ.  
Վարդանեան:

\* 28 Յուն. Կիր. — Ս. Պատարագը մատուց-  
ուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարին Ս. Աս-  
տուածածնի խորանին վրայ: Պատարագիչն էր  
Հոգ. Տ. Յարութիւն Վրդ. Մուշեան:

\* 29 Յուն. Բշ. — Այսօր Գեր. Տեղապահ  
Հայրը, որ անցեալ Զորեքչարթի (24 Յունուար)  
վանական գործերով մեկնած էր իսրայէլ, վերա-  
դարձաւ մայրավանք:

#### Ս. ԵՆՆԳԵԱՆ ՈՒՆՏԱՒՈՐՆԵՐ ԻՍՐԱԵԼԻՆ

18 Յունուար, Հինգչարթի առաւօտեան ժամը  
8:30ին, իսրայէլէն Ս. Աթոռ ժամանեց 115 աղ-  
ջայիներու ուխտաւորական կարաւանը: Սահ-  
մանադրութիւն վրայ անոնք զիմաւորուեցան ի-  
րենց ազգականներու և զանազան ազգայիներ-  
ու հոծ բազմութենէ մը: Անոնք մասնակցեցան  
Ս. Եննգեան մեր սրտատուչ արարողութիւննե-  
րուն, վայելելով հոգեկան մխիթարութիւն, և  
անոնցմէ շատեր ստացան Ս. Հաղորդութիւն:  
24 ժամերու արտօնութեամբ միայն եկած ըլլա-  
լով, յաջորդ օրն իսկ անոնք վերադարձան իս-  
րայէլ: Մեր բոլորին համար խորունկ գոհունա-  
կութեան պատճառ մը եղաւ այն՝ որ բոլորն ալ  
իրենց բնակավայրին մէջ կրցած են, ինք-  
զինքնին տնտեսապէս բաւարարել ու ցարդ  
խեղճ չեն մնացած: Այս առթիւ կ'արժէ յիշել որ  
իսրայէլի երկու հայաբնակ կեդրոններուն մէջ,  
Եաֆա և Հայֆա, ունինք Եկեղեցի և վանք, և  
երկու հոգեւոր Հովիւներ, Հոգ. Տ. Բարդէն Վրդ.  
Ապատեան (Եաֆա) և Հոգ. Տ. Տրդատ Վրդ. Պէր-  
պէրեան (Հայֆա): Իսկ նոր Երուսաղէմի մէջ ու-  
նինք առժամայ վայելուչ մատուռ մը (Պաքայի  
նախկին գերմանական Եկեղեցին), որ պարբե-  
րաբար Ս. Պատարագ և արարողութիւն կը կա-  
տարուի մայրավանքէն զրկուած վարդապետնե-  
րու կողմէ: Իսկ իսրայէլաբնակ Հայութեան թիւը  
հազարը կ'անցնի:

#### ՄԵՐ ՏՊԱՐԱՆԻՆ ՆՈՐ ԳՐԱԾԱՐԱՊԵՏԸ

Պատ. Տնօրէն Ժողովի որոշումով Ս. Աթոռայ Տպա-  
րանի վարիչ, Գրաւարապետութեան պաշտօնին կոչուե-  
ցաւ Տիար Միքնա Կիրեղեան:

Տիար Կիրեղեան Պրաւայի նմանգին եէնիճէ Հա-  
յաքնակ զիւղէն, հանգուցեալ Տէր Կիրեղ Բանանայի  
որդին, դասփարակութիւնը ստացած է ձեռնոյն հայ-  
կական վարժարանին մէջ: Տպարանական արհեստին  
նետեւած է Կիլիկիայ ու ապա Լիբանանի մէջ եւ կազ-  
մակերպած է կարգ մը Հասասութիւններու տպարան-  
ներ: Ու ապա հաստատուած Պաղատ, ուր երկուր տա-  
րիներ ունեցած է իր անձնական տպարանը, որուն ար-  
կածով փնացումէն յետոյ՝ անցած է Լիբանան ու Երու-  
սաղէմ, ստանձնելու համար Ս. Աթոռայ Տպարանի  
գրաւարապետի պաշտօնը:

Նկարագրով բարեմամբ, եւ իր գործին մէջ րնդու-  
նակ վարպետ, վստահ եմք որ օգտակար պիտի ըլլայ Ս.  
Աթոռայ հրատարակչական մեր գործին, որուն նկատմամբ  
առաջին իսկ օրէն ցոյց տուաւ փառով եւ նուիրում:

#### ՈՒՐԱՐԻ ՏԸԻԶՈՒԹԻՒՆ

18 Նոյեմբեր 1950, Շաբաթ երեկոյեան ժամերգու-  
րեան, Գեր. Տեղապահ Հայր սբեմաւոր ուրաւկրու-  
րեան ասիման շնորհեց Տրց. Յովսէփ Մամուրին:

Բարեգաղ իրացուն եկած է Եգիպտոսէն, կրօնա-  
ւորելու փախալով: Ինձն է 1907-ին, Աղեմաւորդիա:  
Նախնական կրթութիւնը առած է Ազգային Պողոսեան  
վարժարանին մէջ, յետոյ յաճախած է անգլիական դպ-  
րաց, եւ ապա կասաբեղագործած է իր ուսումը Անգլիա:  
Գիտէ անգլերէն, ճրագներէն, իսպաներէն եւ արաբերէն  
լեզուներ:

Հմուտ, կիրք եւ բազմակողմանի երիտասարդ մըն է  
նորընծան, եւ ապագային համար խոստումնալից ուժ մը,  
եթէ Տէրը կամենայ:



## Տ Ի Գ Ր Ա Ն Խ Ա Ն Ք Է Լ Է Կ Ե Ա Ն

Խորունկ ցաւով կ'արծանագրենք մահը ազգային հանրածանօթ բարերար եւ յայտնի հնազէտ ՏԻԳՐԱՆ ԽԱՆ ՔԷԼԷԿԵԱՆ, փոխ նախագահին Հ. Բ. Ը. Միութեան, որ տեղի ունեցաւ 30 Յունուար 1951-ին:

ՏԻԳՐԱՆ ԽԱՆ ՔԷԼԷԿԵԱՆ ծնած է Կեսարիա, բայց իր տոհմային կրթութիւնը ստացած Կ. Պոլիս հայազէտ Յակոբ Գուրգէնի կրթարանին մէջ: Ժամանակ մը իր մեծ եղբորը Գէորգի գործակցելէ վերջ, արտասահման անցած եւ Եւրոպայի ու Ամերիկայի միջազգային հրապարակին վրայ դիրքի տիրացած է իբրեւ հնազէտ:

Տիգրան Խան Նիւ-Եօրքի պարսկական պատուակալ հիւպատոս եղած երկար տարիներ, եւ Շահէն ստացած Խանութեան տիտղոսը:

Հնութեանց վերաբերեալ տուններ հաստատած է Նիւ-Եօրքի, Եգիպտոսի, Փարիզի եւ ուրիշ ծանօթ կեդրոններուն մէջ, որոնց համար ընտիր ճաշակ եւ հմտութիւն ունէր:

Տիգրան Խան Քէլէկեան ազգային բարերար եւ տիպար անձնաւորութիւն մը եղած է: Տալու, նուիրելու, զոհաբերելու յօժարամտութիւնը երբեք չէ պակսած իրեն ամէն հանրային կոչի կամ անհատական աղերսի առջեւ: Ազգովին յարգուած է իր անթիւ բարեգործութիւններուն համար — մեծ մասամբ աւետարանի պահանջին համաձայն զաղտնի կատարուած — որոնց մէկ կոթողն էր Տէօրթ-Եօլի որբանոցը, իր հանգուցեալ եղբորը Գէորգ Քէլէկեանի յիշատակին համար հաստատուած:

Տարիներով ծառայած է Հ. Բ. Ը. Միութեան, ըլլալով նախ գործիչը ապա բարերար անդամը նոյն ազգապարծան Միութեան: Իր առատածեռն բարերարութիւններէն օգտուած են Կ. Պոլսոյ Ս. Փրկչեան ազգ. հիւանդանոցը: Մեկնեալս եղած շատ մը օգտակար հրատարակութիւններու, նպաստած է 1924 Կեսարիոյ կարօտեալներուն եւ որբերուն, եւ այս առիթով Դահիբէի կեսարացիներու հայրենակցականը զինք պատուած է «բարերար անդամի» տիտղոսով:

Քէլէկեան Խանը ազգ. պատուիրակ ընտրուած է Բարիզի Հայ գաղութէն, եւ ամերիկեան դիւանագիտական շրջանակներու մէջ ծանօթ դէմք մըն է:

Անգլերէն եւ Յիւանսերէն լեզուներով ունի հնագիտական երկու հրատարակութիւններ արեւելեան գորգերու, կերպասներու, յախճապակիներու եւ արծաթեղէն գործերու մասին:

1912 ուխտաւորաբար կ'այցելէ Երուսաղէմ եւ հոն տեսնելով 1894-ին զոնուած այն գեղակերտ ու թանկագին մոզայիքը, որ Դամասկոսի դրան մօտ Երեւան եկած էր, Ս. Յարութեան իսլամ դռնապանին նոր շինելիք տան տակէն, 250 ոսկիի ծախու կ'առնէ, փափաք յայտնելով որ մաս առ մաս այդ մոզայիքը փոխադրուի Ս. Յակոբի վանքը, պատշաճ տեղի մը յատակը անով զարդարելու համար: Միաբանութիւնը սակայն յարմար կը նկատէ չխախտել զայն, եւ նոր համաձայնութիւն մը կալուածատիրոջ հետ, մոզայիքը պարունակող շէնքին յարկաբաժինը 355 ոսկիով ծախու կ'առնէ: Այժմ վանքապատկան այդ արուեստի գլուխ գործոց հայկական մոզայիքը հիացման առարկայ է Երուսաղէմ այցելող բոլոր զբօսաշրջիկներուն եւ հասկցողներուն կողմէ: Պաղեստինի դէպքերուն պատճառաւ հնագիտական այդ թանկագին գեղօրը երկու տեղերէ թեթեւ կերպով փնտրուած է, որ աննորոգելի չէ սակայն:

Մեր խոր ցաւակցութիւնը ազգային եւ Ս. Աթոռոյ բարերար այս պատուական հայուն մահուան համար:

Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի:

Proprietor - His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem. Armenian Patriarchate, Jerusalem.  
Editor - Father Hagop Vartanian. Armenian Convent, Jerusalem.  
Printed by the Armenian Convent Printing Press, Jerusalem.



# 1951-ի «ՍԻՈՆ» ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

## ՀԱՅԿԱԿԱՆ

Հոգ. Ս. Կալանդարյան Վրդ. Արք. Արք. Կալանդարյան  
 Հոգ. Ս. Կալանդարյան Վրդ. Արք. Արք. Կալանդարյան  
 Հոգ. Ս. Կալանդարյան Վրդ. Արք. Արք. Կալանդարյան  
 Փառ. Ս. Կալանդարյան  
 Տիար. Ռա. Կալանդարյան  
 Տիար. Յակ. Կալանդարյան  
 Տիար. Յակ. Կալանդարյան

Տիար. Հայկ. Օհաննիսյանին (Գալանդարյան):  
 Տիար. Ա. Սարգսյանին (Ֆրէզնո):  
 Տիար. Մովսէս. Սարգսյանին (Նիւ Ջըրսի):  
 Արմ. Ս. Մարկոսյան. Երէցեանին (Այնճար):  
 Տիար. Տիգրան. Պապալեանին (Նիւ Ջըրսի):  
 Բար. Գրիգոր. Սրկ. Գալանդարյանին (Նիւ  
 Եորք):  
 Տիար. Ն. Առաքելեանին (Աղեքսանդրիա):

## ՊԵՐՍԻԱ

Տիար. Կարապետ. Կալանդարյան

Տիար. Օհաննիսյան Կալանդարյանին (Ամերիկա):  
 Տիար. Յակ. Կալանդարյան Կալանդարյանին (Ամերիկա):

## ԱՄԵՐԻԿԱՅԻՆ

Գեր. Ս. Տիար. Կալանդարյան  
 Հոգ. Ս. Քոթրիմ. Կալանդարյան  
 Օր. Ս. Սարգսյան Կալանդարյան

Տիար. Գեորգ. Կալանդարյանին (Հալէպ):  
 Տիար. Անդրանիկ. Մանուկեանին (Պաղատա):  
 Ֆրէզնոյի. Հանրային. Մատենադարանին:  
 Ֆրէզնոյի. Ս. Երրորդութիւն. Եկեղեցւոյ  
 Մատենադարանին:  
 Տիար. Մ. Գալանդարյանին (Սան Ֆրանչիսկո):

## ԼՈՍ ԱՆՔԵՐՍ

Հոգ. Ս. Պապ. Վրդ. Ս. Կալանդարյան

Տիար. Յակ. Շիրինեանին (Պէրու):

## ՄԱՍԿԻՆ ԿԱՆԻՆ


Հ. ՆԴ. Ք. ԱՐՄԵՆԻ

ԽՈՐԵՆԱՅԻ, ԵՂ. Ե. Ե. Զ. ՆԵՐՍԵՍ ԱԿԻՆԵԱՆ

ԵՒ

ԳՐԻԳՈՐ ՍՐԿ. Հ. ԳԱԼՈՒՍՏԵԱՆԻ

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՕԹՔԸ





**ԱԿԱՄԱՅ ԱՆԴՐԱԴԱՐՁՈՒԹԻՒՆՔ**

Տ. ԳՐԻԳՈՐ ՊԵՏՐՈՍ ԺԵ. ԱՂԱՃԱՆԵԱՆ ԿԱՐՏԻՆԱԼԻՆ

ԻՐ ՀՈՎՈՒԱԿԱՆ ԹՈՒՂԹԵՐՈՒՆ ԱՌԻԹՈՎ,

Էջ 42 Սակաւաթիւ օրինակներ մնացած են Գին 100 Քիլո

ՍԻՈՆ-ի Խմբագրութեան եւ Կիւլպէնկեան Մատենադարանին համար  
ստացած ենք հետեւեալ նուէր գիրքը.

Ա. Սարաֆեան. — Վարդանանց Պատերազմը եւ Վարդան Մամիկոնեան, տպ.  
«Նոր Օր»-ի Ֆրէզնօ, 1950, էջ 51.

Գտնիքե՛նք Օր. Անանիս Խաչիկեան՝ ձեռամբ Հոգ. Տ. Տիրայր Վրդ. Տերվիսեանի՝  
Ս. Աթոռոյս պատգոնաբերին Սիոն-ի բարգաւաճման համար կը նուիրէ : Յորդանանեան  
Տիմար : — Մեր շնորհակալութիւնները համեստաբայլ՝ Օրիորդին :

**Ա. Զ. Դ.**

Ի գիտութիւն արժասահմանի մերազն հարազատներուն այսու  
կը յայտարարենք թէ Ս. Աթոռոյս բոլոր Հաստատութեանց  
ուղղուած նամակները պէ՛տք է դրկուին հետեւեալ հասցէով.

*Armenian Patriarchate*

*P. O. B. 4001*

*Old City - Jerusalem*

*Via Amman*

*(Jordan)*

Կը խնդրուի արժասահմանի հայ թերթերէն արժատել :